ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ (7-15-ՐԴ ԴԱՐԵՐ)

93/94(075.8)

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ

Հաստատվում է տպագրության Մ. Մարգարյանի անվան Գոռի պետական գրադարանի 25.06.20 թվ.

ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

(7-15-ՐԴ ԴԱՐԵՐ)

Գ 105365

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ (7-15-ՐԴ ԴԱՐԵՐ)

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Երևան
ՏԻՐ
2020

INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA.

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA.
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

MARGARYAN GOR

THE MAIN PROBLEMS OF THE HISTORY OF MUSLIM ORIENT
(7th-15th CENTURIES)

Educational-Methodological Manual

YEREVAN
TIR
2020

ՀՏԴ 93/94(07)
ԳՄԴ 63.3g7
Մ 350

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ.Ղազարյան
Գրախոս՝ պ.գ.դ., դոցենտ Ք.Պ. Կոստիկյան

Սույն ձեռնարկը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հովանավորությամբ

Ձեռնարկը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Մ 350 Մարգարյան Գ. Ա.

Մուսուլմանական Արևելքի պատմության հիմնահարցեր (7-15-րդ դարեր): Ուսումնամեթոդական ձեռնարկ / Գ. Մարգարյան, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,: Պատ. խմբ.՝ Ռ. Ղազարյան. - «Տիր » հրատ., 2020. – 115էջ:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկն ընդգրկում է Մուսուլմանական Արևելքի՝ 7-15-րդ դարերի պատմության հիմնահարցերը: Ձեռնարկում տեղ են գտել դասախոսության նյութեր, թեմատիկ մասնագիտական գրականության ցանկեր, հարցաշար, մագիստրոսական աշխատանքների թեմաներ, արքայացանկեր և քարտեզներ:

Ձեռնարկը նախատեսված է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Արևելագիտություն» մասնագիտությամբ մագիստրատուրայում սովորող ուսանողների և մուսուլմանական Մերձավոր և Միջին Արևելքի միջնադարյան պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 93/94(07)
ԳՄԴ 63.3g7

ISBN 978-9939-865-75-1

© «Տիր» հրատ., 2020
© Մարգարյան Գ., 2020

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ XIդ.



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ ՆԱԽԱԻՍԼԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մարդկության գրավոր պատմությունը սկիզբ է առել գրային համակարգերի ստեղծմամբ, որի հիմնական կենտրոններից մեկը Մերձավոր Արևելքն է եղել: Համաշխարհային քաղաքակրթության մեջ ունեցած իր հսկայական ներդրումով, պատմական հարուստ փորձով և, աշխարհի այլ տարածաշրջանների շարքում պատմության ողջ ընթացքում իր ուրույն տեղն է զբաղեցրել Մերձավոր և Միջին Արևելքը: Աշխարհագրորեն այս տարածաշրջանը ընդգրկում է հարավարևմտյան և արևմտյան Ասիան ու հյուսիսային/հյուսիս-արևելյան Աֆրիկան, և հնագույն ժամանակներից հանդիսանում է ինչպես աշխարհագրական խաչմերուկ, այնպես և քաղաքակրթական, տնտեսական ու մշակութային կամուրջ՝ Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի համար: Մերձավորարևելյան /հանել և սկսել Տարածաշրջանը/ տարածաշրջանը համաշխարհային բոլոր երեք կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության և իսլամի ծննդավայրն է, հնագույն քաղաքակրթությունների ու վաղ պետականությունների հայրենիքը: Մ.թ.ա. IV հազարամյակի վերջերին - III հազարամյակի սկզբին գրեթե միաժամանակ ի հայտ եկան առաջին պետական միավորումները և՛ Եգիպտոսում, և՛ Միջագետքում:

Մերձավոր և Միջին Արևելքի նոր պատմափուլը սկիզբ առավ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով, հելլենիզմի տարածմամբ և ամփոփվեց իսլամի ծագմամբ: Հետագայում նույնիսկ Մերձավոր և Միջին Արևելքում իսլամի տարածումից հետո, այն իր մեջ ներառեց հելլենիստական մշակույթի ու փիլիսոփայության բազմաթիվ տարրեր: Հելլենիզմը Մերձավոր և Միջին Արևելքում ունեցավ ոչ միայն քաղաքական կամ մշակութային, այլև տնտեսական հետևանքներ. այս շրջանն ուներ յուրահատուկ միատարրություն, որը հիմնված էր լեզվական ընդանրության, նմանատիպ օրենքների, ընդհանուր դրամաշրջանառության և տոմարի վրա: Մ.թ.ա. 323 թ. Ալեքսանդրի մահվանից հետո իշխանությունը զավթելու նրա զորավարների՝ դիադոքոսների պայքարի արդյունքում Մակեդոնական կայսրությունը փլուզվում է: Մերձավոր և Միջին Արևելքը

հիմնականում ընկնում է Ալեքսանդրի տերության իրավահաջորդներ Պտղոմեոսյանների և Սելևկյանների գերիշխանության տակ: Պտղոմեոսյաններն անվերջ պատերազմների մեջ էին Սելևկյանների հետ Մերձավոր Արևելքում գերակայության հասնելու համար, սակայն արդյունքում երկու տերություններն էլ իրենց տեղը զիջեցին Հռոմին: Հռոմեացի տաղանդավոր զորավար Գնեոս Պոմպեոսը մ.թ.ա. 67-64 թթ. Հռոմեական պետության ազդեցությունը տարածեց Միրիայի, Պաղեստինի և Եգիպտոսի վրա, որն ամրապնդվեց Հուլիոս Կեսարի օրոք (մ.թ.ա. 100-44 թթ.) և արդեն Օգոստոս Օկտավիանոս կայսեր (մ.թ.ա. 27-14 թթ.) օրոք Մերձավոր Արևելքի մեծ մասը ընդգրկվեց Հռոմեական տերության կազմում:

Մեր թվարկության 1-ին դարում Մերձավոր Արևելքում սկիզբ առավ և հետագա երեք դարերի ընթացքում լայնորեն տարածվեց մի նոր կրոն՝ քրիստոնեությունը: Սեմական արմատներով և հունա-հռոմեական գաղափարներով հագեցած այս նոր կրոնը իր քայլերթը սկսեց Մերձավոր Արևելքից և լայն տարածում ստացավ Եվրոպայում, ու հետագայում դարձավ համաշխարհային կրոններից մեկը: 395 թ. Հռոմեական կայսրության բաժանումից հետո Հռոմի իրավահաջորդ Արևելահռոմեական կայսրությունը կամ Բյուզանդիան ժառանգեց նաև գերիշխանությունը Մերձավոր Արևելքում: Սակայն քրիստոնեական Բյուզանդիան դժվարությամբ էր այստեղ պահպանում իր դիրքերը Սասանյան Իրանի հետ Մերձավոր Արևելքում հեգեմոնիայի հասնելու պայքարում: 562 թ. Բյուզանդիայի Հուստինիանոս կայսեր և Սասանյան Պարսկաստանի Խոսրով Անուշիրվան (531-579 թթ.) շահնշահի միջև կնքված 50-ամյա հաշտության պայմանագիրը գալիս էր վկայելու, որ Բյուզանդական կայսրությունը կորցրել էր իր նախկին ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Ճիշտ է, հետագայում Հերակլ կայսեր (610-641 թթ.) վարած պատերազմների արդյունքում Բյուզանդիան վերականգնեց իր գերիշխանությունը Մերձավոր Արևելքում, սակայն այս հաջողությունը խիստ կարճատև էր: Անվերջ պատերազմների արդյունքում Սասանյան Իրանը և Բյուզանդիան բավական թուլացել էին, ինչը ևս հեշտացրեց նոր կրոնի՝ իսլամի հաղթարշավը, որի արդյունքում Բյուզանդիան գրեթե ամբողջությամբ կորցրեց իր մերձավորարևելյան տիրույթները, իսկ Սասանյան Պարսկաստանն

651 թ. ընդհանրապես դադարեց գոյություն ունենալուց: Արաբական հաղթական արշավանքների արդյունքում 7-րդ դարի 30 ականներից-8-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում **Մերձավոր և Միջին Արևելքը իսլամի դրոշի ներքո միավորվեց մեկ տերության՝ Արաբական խալիֆայության կազմում:**

• • •

Սույն ձեռնարկում օգտագործված է «Մուսուլմանական Արևելք» եզրույթը, որն արտացոլում է «Մերձավոր և Միջին Արևելք» պատմաաշխարհագրական եզրույթի (որի մեջ ներառված է Եգիպտոսից մինչև Աֆղանստան, Կովկասյան լեռներից մինչև Հնդկական օվկիանոս ընկած տարածաշրջանը) ընդգրկման շրջանակներում Մերձավոր ու Միջին Արևելքի մուսուլմանական պետականությունների (խալիֆայությունների, սուլթանությունների, ամիրայությունների, խանությունների և այլն) միջնադարյան պատմության հարցերի լուսաբանման և ներկայացման համար: Այսինքն, «Մուսուլմանական Արևելք» ուղենշում է արդեն, որ ձեռնարկում խոսք է գնալու միայն վերոհիշյալ պետականությունների մասին՝ բաց թողնելով Բյուզանդական կայսրության, Խաչակրաց պետությունների, Քրիստոնյա Արևելքի պատմության հիմնահարցերի ներկայացումը: Եզրույթն ինքնին վաղուց հայտնի է և հաջողությամբ գործածվում է տարբալեզու գիտական գրականության մեջ (օրինակ ֆրանս.՝ «**l'Orient Musulman**[1]», ռուս.՝ «**Мусульманский Восток**[2]» և այլն):

Սույն ձեռնարկն ընդգրկում է մուսուլմանական Մերձավոր և Միջին Արևելքի պատմության կարևորագույն փուլերից մեկը՝ 7-րդ դարի սկզբներից մինչև 15-րդ դարի վերջն ընկած ժամանակահատվածը:

---

[1]Claude Cahen. "L'Histoire économique et Sociale de **l'Orient Musulman Médiéval.**" *Studia Islamica*, no. 3 (1955): 93-115.

[2]Рыжов К. **Мусульманский Восток VII-XV вв.**, серия «Все монархи мира», Москва, 2004; Тезисы конференции «**Мусульманский Восток** на исторических рубежах России», отв. ред. Белокреницкий В., Институт востоковедения РАН, Москва, 2016, 65 стр.

Ձեռնարկի մեթոդաբանական հիմքում դրված են ներկայացվող հարցադրումներին և տեսակետներին համալիր մոտեցման, դրանց գիտաքննական վերլուծության սկզբունքները: Այս ամենն ապահովում է պատմական դեպքերի առավել ամբողջական և հավաստի գնահատումը, քանի որ յուրաքանչյուր դասընթացին առնչվող մասնագիտական գրականության մեջ քիչ չեն իրարամերժ և հակասական մոտեցումները: Կապված թեմայի նպատակների և խնդիրների հետ՝ հատուկ ուշադրության է արժանացել նաև փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

Դասընթացի թեմաները ներկայացնելիս կիրառվելու են **պատմաքննադատական, պատմահամեմատական, սոցիալ-մշակութային, համեմատական-համադրական, կենսագրական և պատմավերլուծական մեթոդները**, որոնց տեսական դրույթների հենքով էլ ներկայացվելու են Մուսուլմանական Արևելքի՝ տվյալ ժամանակաշրջանի երկրների և ժողովուրդների պատմության հիմնահարցերը: Պատմական և աշխարհաքաղաքական դեպքերի և իրադարձությունների համատեքստում ներկայացվելու են նաև պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարածաշրջանի երկրների պետական քաղաքականության կոնկրետ վերաձևափոխումները:

Պատմաքննադատական մեթոդը նախ և առաջ ենթադրում է սկզբնաղբյուրների նկատմամբ քննադատական մոտեցում, որի նպատակն է նյութի առավել օբյեկտիվ մատուցման հնարավորությունը: Մեթոդն օգտագործում է նաև բոլոր այն միջոցները, որոնք հնարավորություն են տալիս պարզաբանելու աղբյուրների պատմական արժանահավատությունը: Այն պահանջում է երևույթների, գործընթացների, միտումների և իրադարձությունների համադրում որոշակի պատմական ժամանակահատվածի հետ:

Պատմահամեմատական մոտեցումը պահանջում է ուսումնասիրել պատմական աղբյուրների և դրանց խմբագրությունների պատմությունը: Այն ենթադրում է, առաջին հերթին, աղբյուրների դասակարգում հասարակության սոցիալական, քաղաքական, կրոնական և մշակութային այն համատեքստերում, որոնցում ստեղծվել են այդ աղբյուրները:

Սոցիալ-մշակութային մեթոդը հնարավորություն է տալիս հետևել և հասկանալ տվյալ ժամանակափուլին բնորոշ մշակութային, սոցիալական առանձնահատկությունների զարգացման հետագծերը:

Դասախոսությունների ժամանակ շեշտվելու են նաև պատմագիտության հատուկ հետազոտական մեթոդները (պատմական նկարագրում, պրոբլեմային-ժամանակագրական մեթոդ, կենսագրական և այլն):

Առարկայի ուսումնասիրության արդյունքում ուսանողները կիմանան՝

Մուսուլմանական Արևելքի պատմության հիմնահարցեր (7-15-րդ դարեր) առարկայի տեղը պատմագիտության համակարգում, դրա կապը այլ գիտությունների հետ, միջնադարյան մերձավորարևելյան քաղաքակրթությունների ձևավորման և կայացման գործընթացը, քաղաքակրթական հիմնական արժեքները. բացի այդ՝ ընկալել Մուսուլմանական Արևելքի միջնադարյան պատմությունը և նրա օրինաչափությունները, ինչպես նաև դրա ուսումնասիրության կարևորությունը, որը կարող է նպաստել խորությամբ ընկալելու և վերլուծելու մուսուլմանական Մերձավոր Արևելքի նաև ժամանակակից պատմության և գործընթացների հիմնահարցերը:

Կկարողանան

Կիրառել Մուսուլմանական Արևելքի միջնադարյան պատմության ուսումնասիրման մեթոդները պատմագիտական հետազոտություններում, գիտակցել ընդհանուր և մասնավոր գործընթացները և դրանց փոխկապակցվածությունը, օրինաչափությունները, տեղայնացնել համաշխարհային պատմական գործընթացների համատեքստում:

Կտիրապետեն

Մուսուլմանական Արևելքի միջնադարյան պատմության կարևոր հիմնահարցերին, հետազոտման մեթոդներին, տարրալեզու աղբյուրներին և մասնագիտական արդի գրականությանը, տարածաշրջանի քաղաքակրթական արժեքներին և գործընթացներին:

Մագիստրոսական թեզի թեմաներ

- Իսլամի ծագումը և արաբական նվաճումները միջնադարյան հայկական գրավոր աղբյուրներում. աղբյուրագիտական քննություն
- Ավատատիրական կարգերի առանձնահատկությունները և հարկային համակարգը Արաբական խալիֆայությունում 8-10-րդ դարերում
- Աբուլ Ֆադլ Բեյհակիի «Թարիխի Բեյհակի» երկը որպես Սելջուկյանների պատմության սկզբնաղբյուր
- Իլխանների կրոնական քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասում 13-րդ դարի վերջին-14-րդ դարի առաջին քառորդում
- Մոնղոլական նվաճումներն ու թյուրք-մոնղոլական ցեղերի տեղաշարժերը Մերձավոր Արևելքում 13-14 րդ դարերում
- Եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունները որպես Ակ կոյունլուների պատմության սկզբնաղբյուր
- Մամլուքյան սուլթանության արտաքին քաղաքականության առանձնահատկություններն ու փոխհարաբերությունները Օսմանյան պետության հետ 15-րդ դարում:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

N	Բաժինը, թեման	Դասապմունքի տիպը, ժամերի թիվը		
		դասախոսություն	սեմինար, գործնական	ինքնուրույն
	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ			
Թեմա 1	ԻՍԼԱՄԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ	2		
Թեմա 2	ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ	2		
Թեմա 3	ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ VIII ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ-IX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ	2	2	

Թեմա 4	ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՅՈՒՄՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ	2		
Թեմա 5	ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆ	2	2	
Թեմա 6	ԱՅՅՈՒԲՅԱՆՆԵՐ	2		
Թեմա 7	ՄԵԼՔՈՒԿՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ	2	2	
Թեմա 8	ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԻԼԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱՎՈՐՈՒՄԸ	2		
Թեմա 9	ԲԱՀՐԻՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՐՋԻՆԵՐԻ ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ	2	2	
Թեմա 10	ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ XIV ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ XV ԴԱՐՈՒՄ. Թեմուր Լենկ. նվաճումներն ու տերությունը	2		
Թեմա 11	ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ XIV ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ XV ԴԱՐՈՒՄ. Կարա կոյունլուների տերությունը	2		
Թեմա 12	ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ XIV ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ XV ԴԱՐՈՒՄ. Ակ կոյունլուների տերությունը	2		
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 32 ժամ		24	8	

«Մուսուլմանական Արևելքի պատմության հիմնահարցեր (7-15-րդ դարեր)» առարկայի առաջին միջանկյալի ստուգման Հարցաշար

1. Իսլամի ծագումը և արաբական խալիֆայության կազմավորումը
2. Արաբական խալիֆայութունը առաջին չորս բարեպաշտ խալիֆաների օրոք
3. Արաբական խալիֆայութունը Օմայյան հարստության կառավարման շրջանում
4. Արաբական խալիֆայությունը Աբբասյան հարստության կառավարման առաջին շրջանում
5. Աբբասյան հարստության անկումը և Մուսուլմանական Արևելքի պետական կազմավորումները IX-XI դարերում
6. Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում VII դարի առաջին կեսին.
7. Ֆաթիմյան խալիֆայություն
8. Սելջուկյան արշավանքները և Մերձավոր Արևելքը XI-XII դարերում:

«Մուսուլմանական Արևելքի պատմության հիմնահարցեր (7-15-րդ դարեր)» առարկայի երկրորդ միջանկյալի ստուգման Հարցաշար

9. Այուբյանների իշխանության հաստատումը Եգիպտոսում և Սիրիայում: Սալահ ադ-դին.
10. Խաչակրաց արշավանքները և Մերձավոր Արևելքը.
11. Եգիպտոսը և Սիրիան մամլուքյան Բահրի և Բուրջի հարստությունների իշխանության շրջանում:
12. Մոնղոլական նվաճումները Մերձավոր Արելքում: Իլխանություն.
13. Մերձավոր Արևելքը Թեմուրի նվաճողական քաղաքականության կիզակետում.
14. Թիմուրյանների փոխհարաբերությունները Ջելայիրյանների, Ակ և Կարա կոյունլուների, Օսմանյան պետության հետ
15. **Ակ-Կոյունլու** և Կարա-Կոյունլու թուրքմենական ցեղապետությունները 14-15-րդ դարերում:

«Մուսուլմանական Արևելքի պատմության հիմնահարցեր (7-15-րդ դարեր)» առարկայի եզրափակիչ քննության Հարցաշար

1. Իսլամի ծագումը և արաբական խալիֆայության կազմավորումը
2. Արաբական խալիֆայությունը առաջին չորս բարեպաշտ խալիֆաների օրոք
3. Արաբական խալիֆայությունը Օմայյան հարստության կառավարման շրջանում
4. Աբբասյան հարստության անկումը և Մուսուլմանական Արևելքի պետական կազմավորումները IX-XI դարերում
5. Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում VII դարի առաջին կեսին.
6. Ֆաթիմյան խալիֆայություն
7. Ֆաթիմյան խալիֆայությունը հայազգի վեզիրների իշխանության շրջանում
8. Արաբական խալիֆայությունը Աբբասյան հարստության կառավարման առաջին շրջանում
9. Սելջուկյան արշավանքները և Մերձավոր Արևելքը XI-XII դարերում:
10. Այուբյանները իշխանության հաստատումը Եգիպտոսում և Սիրիայում: Սալահ ադ-դին.
11. Խաչակրաց արշավանքները և Մերձավոր Արևելքը.
12. Եգիպտոսը և Սիրիան մամլուքյան Բահրի և Բուրջի հարստությունների իշխանության շրջանում:
13. Մոնղոլական նվաճումները Մերձավոր Արելքում: Իլխանություն.
14. Մերձավոր Արևելքը Թեմուրի նվաճողական քաղաքականության կիզակետում.
15. Թիմուրյանների փոխհարաբերությունները Ջելայիրյանների, Չոբանյանների, Ակ կոյունլուների և Կարա կոյունլուների, Օսմանյան պետության հետ
16. Ակ կոյունլու և Կարա կոյունլու թուրքմենական ցեղապետությունները 14-15-րդ դարերում:

ԻՍԼԱՄԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Իսլամի ծագման ու տարածման վերաբերյալ ժամանակագրական-նկարագրողական նյութի շարադրանքին զուգահեռ, որը ներկայացված է ստորև, կարևոր է այն հարցի քննությունը, թե ինչպե՞ս, ինչու՞ և ի՞նչ պայմաններում ծագեց իսլամը, որո՞նք էին նախադրյալները:

Իսլամի ծագման հարցի ուսումնասիրությունը սկզբնավորվել է դեռ XIX դարի կեսերին եվրոպական իսլամագետների և արևելագետների աշխատանքներում (տես օրինակ Գուստավ Վեյլի կամ Ուիլյամ Մյուրիի հետազոտությունները): Այս փուլում հարցի ուսումնասիրությունը հիմնականում հենվում էր իսլամի հիմնադրի՝ Մուհամմեդի կյանքի ու գործունեության վերաբերյալ աղբյուրների, ինչպես նաև Ղուրանի հետազոտության վրա: XX դարում, մասնավորապես, խորհրդային պատմագրությունը և արևելագիտության դպրոցը իսլամի ծագումը պայմանավորում էր արաբների, արաբական ցեղերի մոտ տոհմացեղային կարգերի քայքայմամբ VI-VII դարերում դասակարգերի ձևավորման գործընթացներով ու պետականության կազմավորման իրողություններով: Այս մոտեցումները տեղ գտան Ի. Պետրուշևսկիի, Ե. Բելյաևի, Ի. Ֆիլշտինսկիի, Ն. Սմիրնովի, Ս. Տոլստովի և այլոց աշխատանքներում: Հետաքրքիր է սակայն, որ այս մոտեցումը խորհրդային արևելագիտության մեկ այլ հայտնի գիտնականի՝ Օ. Բոլշակովի կողմից արժանանում է քննադատության: Վերջինս իրավացիորեն նշում էր այն հանգամանքը, որ արաբական ցեղերի կենցաղն, կենսակերպը, գրեթե նույնն էր մնացել և՛ 7-8-րդ, և՛ 10-րդ դարերում, ուստի անհասկանալի է, թե այդ ի՞նչ փոփոխություններ էին տեղի ունեցել, որոնց (տոհմացեղային կարգերի քայքայում և դասային հասարակություն ձևավորում) ամփոփիչ փուլը հասցրեց խալիֆայության կազմավորմանը: Մյուս կողմից, խորհրդային պատմագրության տեսակետը կաղում է մեկ այլ կողմից ևս, եթե տոհմացեղային կարգերը քայքայվում էին և դասային հասարակություն էր ձևավորում, ինչը և իր հերթին հետո միայն պիտի հանգեցներ պետության կազմավորման, ապա ինչ անել այն փաստի և իրողության հետ, որ Արաբական թերակղզում վաղուց գոյություն ունեին պետական

կազմավորումներ, որոնց մեծ մասը պահպանել էին իրենց գոյությունը մինչև 6-րդ դարի կեսերը: Դրանցից էին թերակղզու հարավում Սաբայի, Քինդայի, Հիմյարի թագավորությունները, հյուսիս-արևելքում Սասանյանների հովանավորությունը վայելող Լախմյանների թագավորությունը, Բյուզանդիայի «դաշնակից» Ղասանյանների թագավորությունը: Մյուս կողմից դժվար է համաձայնել այն տեսակետի հետ, որ արաբների մոտ տեղի էր ունենում տոհմացեղային կարգերի քայքայում, քանի որ իրականում տեղի էր ունենում հակառակ գործընթացը՝ տոհմացեղային կապերը և կարգերը ոչ թե քայքայվում, այլ հակառակը ամրանում էին, քայքայվում էին պետականությունները, նրանց կառուցվածքը, ինստիտուտները, որի արդյունքում 7-րդ դարի սկզբին թերակղզում վերը հիշատակված «թագավորություններից» և ոչ մեկի հետքը չէր մնացել, չէր պահպանվել գոնե մեկը: Ներկայումս շրջանառվում է գիտական մեկ այլ մոտեցում, որը հետաքրքիր կերպով կարող է ներկայացնել իսլամի ծագման համար պարզ միջավայրի ձևավորման պատճառները: Այս տեսակետի համաձայն 7-րդ դարի սկզբին թերակղզում տեղի ունեցած իրադարձությունների արմատները պետք է փնտրել 6-րդ դարի ընթացքում տեղի ունեցած բնակլիմայական շարժերի, աղետների և դրանց արդյունքում՝ արաբների հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքում ունեցած հետևանքների մեջ: Բնակլիմայական այդ աղետներից էին 6-րդ դարի ընթացքում գլոբալ (այդ թվում և Միջերկրածովյան ավազանում) բնույթ կրող տեկտոնական ակտիվությունը՝ տեղի ունեցած երկրաշարժերը, հրաբխային ժայթքումները, դրանց հետևանքով մթնոլորտ արտանետված գազերը, որոնք ուղղակիորեն ազդելու էին ոչ միայն միջերկրածովյան ավազանի, այլև Արաբական թերակղզու էկոհամակարգի վրա՝ առաջ բերելով բնակլիմայական խախտումներ, երաշտ, համաճարակներ, և հետևաբար՝ արաբական ցեղերի կենսական պայմանների կտրուկ վատթարացում: Երաշտը, սովը, համաճարակները հանգեցնելու էին նրան, որ թե նստակյաց արաբը, որի տնտեսությունը ամբողջությամբ կախված էր ոռոգման համակարգի անխափան գործելու հանգամանքից), և թե քոչոր արաբը հազիվ կարողանային իրենց կերակրել ու հոգալ սեփական կարիքները: Իր հերթին այս դեպքում «հասարակ» արաբը չէր կարողանալու կատարել իր հարկային պարտավորությունները ցեղի առաջնորդի

կամ վերոհիշյալ «թագավորություններից» և որևէ մեկի հարկահանի նկատմամբ. այն է՝ տնտեսական կյանքի ծայրահեղ վատթարացումը հանգեցնելու էր սոցիալական լարվածության, բախումների, «պրոտոպետության» կամ իշխող վերնախավի՝ մալիքի (ռազմական առաջնորդ-թագավորի) ու սայիդի (ցեղային առաջնորդի) դեմ պայքարի ձևավորման: Արաբական բանավոր ավանդության՝ Այամ ուլ-արաբ՝ «Արաբների օրեր» ժողովածուն իր մեջ պահպանած վկայություններով հաստատում է վերը ասվածը, երբ ցեղի անդամների հարկային պարտավորության թերի կատարումը կամ չկատարելն ընդհանրապես հանգեցնում էր բախման ցեղի առաջնորդի հետ: Այսօրինակ երևույթներն էլ իրենց հերթին հանգեցնելու էին վերցեղային քաղաքական կառույցների՝ «պրոտոպետությունների» անկմանն ու քայքայմանը: Ըստ երևույթին դրա արդյունքում է 6-րդ դարի վերջից 7-րդ դարի սկիզբներն ընկած ժամանակահատվածում ձևավորվելու վերցեղային գերիշխանություն չճանաչող «ըմբոստ, ազատ» արաբական ցեղի կերպարը: Ինչևէ, վերը նշվածի թե մեկ այլ տեսակետի ներկայացնող պնդման համաձայն, որ նախաիսլամական շրջանի արաբական պետական միավորումները դադարեցին գոյություն ունենալ դրսից (օրինակ՝ Լախմյանները՝ Բյուզանդիայից, Ղասանյանները՝ Իրանից) օգնություն չստանալու պատճառով: Արդյունքում 6-րդ դարի երկրորդ կեսից 7-րդ դարի սկզիզբն ընկած հատվածում Արաբական թերակղզում պետության բացակայության հետևանքով ի հայտ է գալիս սոցիալ-քաղաքական ինտեգրացիայի նոր ձև, որն իր բնույթով նման էր Հին Հունաստանում հունական ցեղերի կրոնաքաղաքական դաշինքներին՝ ամֆիկտոնիաներին: Այս շրջանում մեծանում է համաարաբական սրբատեղի-ուխտավայրերի դերը: Դրանց թվում հայտնի էին Մեքքան, Ուքազը, Զու-լ-Մաջազը և Մաջաննան: Համընդհանուր խաղաղության սրբազան ամիսներին (աշհուր ալ-հուրում) այստեղ իրականացվող ուխտագնացություններին հաջորդում էին տոնավաճառների կազմակերպումը (հարկ է նշել, որ իսլամական՝ հաջորդած շրջանում ևս Մեքքայում հաջից հետո առևտրի իրականացման երևույթը ևս պահպահվել էր): Դեպի այս սրբավայրեր այս «խաղաղ ժամանակաշրջանում» ուխտագնացությունը և տոնավաճառը դառնում էին ցեղերին մի վայրում համախմբող գործոն՝ ապահովվելով միջցեղային շփումներ (միջցեղային վեճերի,

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

խնդիրների լուծման, գերիների փրկագնում, հաշտությունների կնքում և այլն): Սա իր հերթին վերջապես, հանգեցնում էր սրբատեղիների շուրջը համաարաբական դաշինքների ձևավորմանը: Կրոնաքաղաքական դաշինքի կենտրոն հանդիսացող այդ սրբատեղիներից, ըստ երևույթին, առաջել կարևոր դեր էր խաղում Մեքքան, որն էլ հենց դառնալու էր իսլամի բնօրրանը: Ինչ վերաբերում է Մեքքայի և մեքքայական առևտրի՝ իսլամի ծագման մեջ ունեցած դերին, պետք է նշել, որ գիտական գրականության մեջ այս առումով համակարծություն ևս չկա: Բանը նրանում է, որ երբեմն ուռճացվում է Մեքքայի ունեցած դերը: Մեքքային վերագրվում է միջազգային առևտրի կարևորագույն ու խոշոր կենտրոնի դեր, ինչը և իբրև թե նպաստելու էր հենց այստեղ իսլամի պետության կազմավորմանը: Սակայն «Լադանի (կամ խնկի և անուշահոտությունների) ճանապարհի» առևտրի այս ցամաքային-քարավանային ճյուղը դեռևս մեր թվարկության առաջին հազարամյակի սկզբներին կորցրել էր իր դերը, որը պայմանավորված էր առևտրի ծովային ճանապարհի իրականացման անցումով: Առևտրական այս ուղին Մետաքսի ճանապարհի մի մասն էր ու ահռելի նշանակություն ուներ Բյուզանդական կայսրության համար: Այս առևտրական ճանապարհը սկզբնավորվում էր Չինաստանում, անցնում Միջին Ասիայով, ապա թեքվում հարավ՝ դեպի Հյուսիսային Հնդկաստանի ափերը ու այստեղից ծովային ճանապարհով ուղղվում Միջագետք կամ Հնդկական օվկիանոսով գնում դեպի Հարավային Արաբիա, որտեղից էլ Կարմիր ծովով կամ Արաբական թերակղզին հատելով ապրանքները տեղափոխվում էին բյուզանդական գերիշխանության տակ եղած շրջաններ: Այս ճանապարհով Բյուզանդիան կարողանում էր մասնակցել միջազգային խոշոր առևտրին՝ շրջանցելով Իրանը: Սակայն 6-րդ դարի վերջերին Եմենում իրենց գերիշխանությունն են հաստատում Սասանյանները, ու Բյուզանդիան զրկվում է առտնրական այս շահավետ ուղուց: Այնուամենայնիվ, Բյուզանդիան չէր կարող հրաժարվել արևելյան ապրանքների, հատկապես անուշահոտությունների, համեմունքների ու չինական մետաքսի ձեռքբերումից, և կամ ստիպված էր լինելու գնել դրանք պարսիկներից, կամ օգտագործել այլընտրանքային ուղիներ՝ դրանում ներգրավելով արաբներին: Այս հանգամանքը իր հերթին

նպաստում է ներարաբական առևտրային հանգույցների, Հարավային Արաբիայից դեպի Միջագետք իրականացվող ներարաբական առևտրային ցանցի զարգացմանը: Եվ ըստ երևույթին, 7-րդ դարի սկզբներից Մեքքան հենց ներարաբական առևտրի կարևոր ու հանգուցային կենտրոն էր:

7-րդ դարի առաջին կեսին Մերձավոր Արևելքի քաղաքական և մշակութային կյանքը կտրուկ փոփոխությունների ենթարկվեց: Բյուզանդական Հերակլ կայսեր իշխանության գալուն հաջորդած պարսկա-բյուզանդական պատերազմները, չնայած Սասանյան Իրանի սկզբնական հաջողություններին ու հաղթարշավին, ավարտվում են Բյուզանդիայի հաղթանակով: Եվ 629 թ. սեպտեմբերին Տիզբոնի գրավումից հետո Կոստանդնուպոլիս Հերակլ կայսեր հաղթական վերադարձից ընդամենը երեք ամիս անց Արաբիայում տեղի է ունենում այս իրադարձությունների ֆոնին նվազ կարևորություն ունեցող իրադարձություն՝ իսլամն իր քաղաքական և գաղափարախոսական առաջնորդի գլխավորությամբ մուտք է գործում Մեքքա: Արաբիայում ի հայտ եկած նոր կրոնի՝ իսլամի գաղափարախոսությամբ ստեղծված պետությունը՝ խալիֆայությունը, ընդամենը տասնամյակների ընթացքում ընդարձակվեց Ատլանտյան օվկիանոսից մինչև Հնդկաստան ահռելի տարածքում՝ կլանելով ժամանակի երկու գերտերություններից մեկին՝ Սասանյան Իրանին, և ջախջախիչ հարված հասցրեց Բյուզանդական կայսրությանը՝ նվաճելով նրա արևելյան պրովինցիաները:

Մեքքայում է որ, 610 թ. հարուստ կուրեյշ ցեղի հաշիմի ազդեցիկ տոհմից 40-ամյա Մուհամմեդը (570-632 թթ.) Հիրայի քարանձավում մեկուսացման ժամանակ նա, ըստ հադիսների ավանդած պատմության, հայտնություն ստացավ Ջիբրիլ (Գաբրիել) հրեշտակի միջոցով: Այս առումով 610 թվականը իսլամի համար ելակետային տարի էր: Հայտնություններ Մուհամմեդը ունեցավ նաև հետագայում: Նոր կրոնի հիմքում ընկած էր միաստվածության գաղափարը, Մուհամմեդը հանդես գալով որպես Աստծո՝ Ալլահի մարգարե՝ կոչ էր անում մեքքացիներին հրաժարվել կռապաշտությունից և նախկին հավատալիքներից, ընդունել միակ Աստծո՝ Ալլահի գոյությունն ու հնազանդվել նրա կամքին, խորհել հանդերձյալ կյանքի և Ահեղ Դատաստանի մասին, ապրել արդարակյաց կյանքով և խու-

սափել մարդկության նախորդ սերունդների սխալներից, որ անտեսել էին Աստծո կողմից ուղարկված նախորդ մարգարեներին և նրանց միջոցով ուղարկված Աստծո խոսքը: Իսլամի մարգարեի քարոզած նոր կրոնի հետևորդները սկզբում մեծաթիվ չէին, և հիմնականում նրա մտերիմներն ու հարազատներն էին՝ մարգարեի կինը՝ Խադիջան, հորեղբորորդի Ալի իբն Աբի Տալիբը, Աբու Բաքրը, Ուսման իբն Աֆֆանը և այլք: 613-614 թվականներին Մուհամմեդը սկսում է իսլամի հրապարակային քարոզը Մեքքայում, ինչը հանդիպում է մեքքացիների բուռն դժգոհությանը, հալածանքներին, նույնիսկ քարկոծմանը: Մեքքայում կուրեյշ ցեղի առևտրական վերնախավը, առևտրական դասի գլուխ կանգնած ազդեցիկ Աբու Սուֆյանը հիանալի հասկանում էին, որ սրբատեղի և կրոնաքաղաքական կենտրոն հանդիսացող Մեքքայում նախկին հավատալիքների և կռապաշտության տապալումը ուղղակիորեն հարվածելու է Մեքքայի հեղինակությանը, սասանելու է էլիտայի դիրքերը և նաև տնտեսական կորուստների է հանգեցնելու: Մուհամմեդի քարոզների արդյունքում, ճիշտ է, որոշակիորեն աճեց նոր կրոնի իսլամի հետևորդների թիվը, որոնք կոչվեցին **մուսլիմուն**՝ «հնազանդվածներ (Ալլահի կամքին), մուսուլմաններ», սակայն այդ քարոզներին զուգահեռ այն աստիճան լարվեցին մեքքացիների և Մուհամմեդի ու նրա աջակիցների փոխհարաբերությունները, որ Մուհամմեդի հետևորդների մի մասը գաղթեց Եթովպիա: Ավելի ուշ, 622 թ. սեպտեմբերի 24-ին Մուհամմեդը ևս իր 70-80 համախոհների հետ լքեց Մեքքան և տեղափոխվեց Յասրիբ, որը հետագայում հայտնի դարձավ «մարգարեի քաղաք» անվամբ (*Madīna-tu n-Nabī*): Այս իրադարձությունը պատմությանը հայտնի դարձավ որպես Հիջրա՝ գաղթ, տեղափոխություն, իսկ գաղթողները կոչվեցին մուհաջիրներ: Հիջրայով է սկսվում նաև իսլամական ժամանակագրությունը: Մեդինայում Մուհամմեդը լայն աջակցություն գտավ և մեծ թվով համախոհներ, նրան աջակցողները կոչվեցին անսարներ: Բացի Մեդինայի մուսուլմաններից Մուհամմեդին լայն աջակցություն ցուցաբերեցին նաև Մեդինայի հրեական ցեղերը, որոնց Մուհամմեդը շուտով արտաքսելու էր կամ կոտորելու՝ տիրանալով նրանց ունեցվածքին: Շուտով Մեդինայում Մուհամմեդը ուղղակի քարոզիչից վերածվեց քաղաքական գործչի, և սկսեց կազմակերպել իր կրոնական համայնքի կյանքը, այստեղ հիմնվեց մուսուլմանների

առաջին աղոթատեղին՝ Մասջիդը: Մարգարեն սկսեց նաև քայլեր ձեռնարկել Մեքքային պատժելու համար և պարբերաբար զինված ջոկատներ էր ուղարկում մեքքացիների քարավանները կողոպտելու, մեքքայական առևտուրը կաթվածահար անելու և կուրեյշների տնտեսական հզորությունը խարխլելու համար: Սկզբնական անհաջողություններին հաջորդում է 624 թ, ձմռանը Բադրի ճակատամարտում մուսուլմանների փայլուն հաղթանակը ընդդեմ թվով գերակշիռ և ավելի ռազմունակ մեքքացիների նկատմամբ: Հետագա ընդհարումները (Ուհուդ լեռան, Խրամի ճակատամարտեր 625, 627 թթ. և այլն) մեքքացիների և նրանց աջակցող արաբական ցեղերի հետ, չկարողացան սասանել Մուհամմեդի դիրքերը և աճող հզորությունը: Ավելին, 628 թ. իր և Աբու Սուֆյանի միջև կնքված Հուդայբիյայի հաշտությամբ Մուհամմեդը հաստատեց մուսուլմանների իրավունքը Մեքքա կատարվելիք հաջի համար, և հաջորդ տարում ուխտավորների 2000 հոգանոց խումբը նոր՝ իսլամական կանոններով հաջ կատարեց Մեքքա: Այս հաջը իր կազմակերպվածությամբ մեծ տպավորություն ունեցավ մեքքացիների վրա: 630 թ. Մուհամմեդը 10.000 զորքի և աջակիցների ուղեկցությամբ հաղթական մուտք գործեց Մեքքա. նախկին հակառակորդները Աբու Սուֆիանի գլխավորությամբ արագորեն ներկայացան Մուհամմեդին և իսլամ ընդունեցին: Կարծիք կա, որ նույնիսկ Մուհամմեդը և Աբու Սուֆյանը մինչ այդ գաղտնի համաձայնության էին եկել Մեքքան Մուհամմեդին հանձնելու շուրջ: Հաջորդ 631 թ. նշանավորվեց իսլամի հաղթարշավով Արաբիայում. Թաիֆին հաջորդեց Եմենի և Կենտրոնական Արաբիայի տարբեր ցեղերի կողմից իսլամն ընդունելն ու հպատակվելը Մուհամմեդին, իսկ արդեն 632 թ. վերջերին գրեթե ողջ Արաբիան մինչև Միջագետք միավորված էր իսլամի դրոշի ներքո:

632 թ. հունիսի 8-ին իսլամի մարգարեն 63 տարեկան հասակում մահանում է: Մահվանից առաջ Մուհամմեդը իր մերձավոր աջակցի և աներոջ Աբու Բաքր աս-Սիդդիքի (632-634 թթ.) վրա է դնում աղոթքի առաջնորդման՝ իմամի պարտականությունները, և հենց նա էլ հաջորդում է մարգարեին՝ նույն 632 թ. ընտրվելով տեղապահ կամ հետնորդ՝ խալիֆա: Աբու Բաքրի խալիֆայի ընտրությամբ խալիֆայությունը թևակոխեց բարեպաշտ (*կամ արդարակյաց*)

խալիֆաների իշխանության շրջան: Հետաքրքիր է, որ շարունակելով մերձավորարևելյան ավանդույթը՝ խալիֆայության դեպքում ևս՝ խալիֆան համարվում էր տերության գլուխը և՛ հոգևոր, և՛ քաղաքական իշխանության առումով: Աբու Բաքրը արագ վերամիավորեց և վերակազմակերպեց արաբական ցեղերը և մուսուլմանական ուժերը, ապա մուսուլմանների ամբողջ ռազմական ներուժն ուղղեց Արաբիայի այն հատվածների գրավմանը, որ գտնվում էին Սասանյան Իրանի և Բյուզանդիայի ենթակայության տակ: Դրանով նա փաստացի պատերազմ էր հայտարարում այս երկու հզոր տերություններին, ու սրանով սկզբնավորվեցին արաբական նվաճումները: Ճիշտ է, Աբու Բաքրին վիճակված չէր տեսնելու իր մտահղացման արդյունքները, նա մահացավ 634 թ. օգոստոսի 9-ին, սակայն նրա այս նախաձեռնությունը շարունակություն և նոր թափ ստացավ նորընտիր Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆայի (634-644 թթ.) օրոք: Իսլամի լավագույն զորավարները՝ մյուսի հետևից հաղթանակներ էին տոնում Իրանի և Բյուզանդիայի դեմ՝ ավելի ընդլայնելով խալիֆայության սահմանները: 635 թ. արաբական արշավանքների Սիրիական ուղղությունը գլխավորող տաղանդավոր զորավար «Ալլահի սուր (Սայֆ-ուլլահ)» պատվանունը կրող Խալիդ իբն ալ-Վալիդի զորքերը գրավում են Դամասկոսն ու Էմեսսան՝ Հիմսը, ապա 636 թ. վերադասավորվելով Յարմուկ գետի ափին՝ երեք լրիվ օր (կամ վեց օր) տևած ծանր ճակատամարտում հաղթանակ են տանում բյուզանդական մեծաթիվ բանակի նկատմամբ: Այս ճակատամարտը որոշում է ողջ Սիրիայի և Պաղեստինի ճակատագիրը արաբների օգտին: Նույն թվականին մարգարեի մերձավոր աջակից Սաադ իբն Աբու Վակասի զորքերը նույնպիսի ծանր պարտության են մատնում մարտական փղերով համալրված պարսկական 40.000-անոց բանակին Քադեսիայի ճակատամարտում, և տարեվերջին գրավում են Սասանյանների մայրաքաղաքը՝ Տիզբոնը: Այսպիսով ընդամենը 4 տարվա ընթացքում արաբական զորքերը գրավում են Սիրիան, Պաղեստինը և Միջագետքը: 638 թ. փոխադարձ համաձայնագրով հանձնվում է հուդայական և քրիստոնեական աշխարհի սրբազան քաղաքը՝ Երուսաղեմը: 639 թ. մեկ այլ տաղանդավոր զորավար Ամր իբն ալ-Ասը 4000-ոց զորքով ներխուժում է Եգիպտոս և ընդամենը 2 տարվա ընթացքում, մասնավորապես 641 թ. նոյեմբերի 8-ին Ալեքսանդրիայի հանձնվելուց հետո, ավարտում

Եգիպտոսի գրավումը: Մյուս կողմից 642 թ. մուսուլմանական զորքերը Նեհավենդի մոտ ջախջախում են Հազկերտ 3-րդի (632-651 թթ.) պարսկական բանակը և ներխուժում Արևմտյան Իրան: Պարսից շահշահը անփառունակ մահով մահանում է 652 թ. Մերվի մոտ փախուստի մեջ, այնպես ինչպես իր Աքեմենյան նախնի Դարեհ 3-րդը (մ.թ.ա. 336-330 թթ.) մահացավ Ալեքսանդր Մակեդոնացու (մ.թ.ա. 336-323) զորքերից փախուստի ճանապարհին. արդյունքում Իրանը 652 թ. ամբողջովին անցավ մուսուլմանների տիրապետության տակ. Եգիպտոսի և Իրանի գրավումից հետո **Մերձավոր և Միջին Արևելքը** այս անգամ ևս ընդգրկվեց մեկ կայսրության՝ այս դեպքում արդեն խալիֆայության մեջ: Ինչպես ասում են. «պատմությունը կրկնվելու հատկություն ունի»: Մերձավոր և Միջին Արևելքի դարավոր հելլենիստական և իրանական քաղաքակրթությունները իրենց տեղը զիջեցին նոր իսլամական քաղաքակրթությանը, որի արդյունքում մինչև այժմ էլ ունենք Մերձավոր և Միջին Արևելքը իսլամի գերակայությամբ:

Արաբական նվաճումների հաջողությունները լայն քննարկման և գիտական բանավեճի նյութ են հանդիսացել: Տարածված բայց տարբերական բացատրություններից մեկը գաղտնիքը տեսնում էր մուսուլմանների կրոնական ֆանատիզմի մեջ, որ իբրև թե իսլամի տարածման պատճառը կրապաշտության և այլահավատների դեմ պայքարի մղումն ու հավատի ուժն էին: Այս առումով պետք է հաշվի առնել այն, որ սկզբնական շրջանում արաբական զորքերը բաղկացած էին հիմնականում քոչվոր արաբներից՝ բեդվիններից, ու հայտնի է, որ վերջիններս իսլամի վերաբերյալ թույլ պատկերացում ունենալուն զուգահեռ աչքի չէին ընկնում նաև նոր կրոնի նկատմամբ «մոլուցքով», բավական է միայն հիշել Մուհամմեդի մահվանն անմիջապես հաջորդած շրջանը, երբ բեդվիների մի զգալի մասը ուղղակի հրաժարվեց իսլամից և լքեց իսլամի ճամբարը: Մեկ այլ վարկածի համաձայն, նվաճումները բացատրվում են կենսական կարիքների բավարարման՝ աղքատության, անապատային ծանր ու խիստ էկոհամակարգից տուժած արաբական ցեղերի ձգտման մեջ: Այն է թե, նոր հարուստ բարեբեր հողերի նվաճումը զրկանքներից, սովից, ազատվելու հնարավորություն էր: Այս տեսակետի որոշակի ճշմարտությունն ընդունելով հանդերձ միայն

ավելի ապահով, հարուստ կյանքի ձգտումով արաբների ռազմական հաջողությունները դժվար է բացատրել:

Արաբական նվաճումների պատճառները, հետաքրքիր է, որ նաև հայ պատմագիրների ուշադրություն են գրավել: Սեբեոսն, օրինակ, կարծում էր, որ արաբական նվաճումների պատճառը արաբների ձգտումն էր տիրանալու Պաղեստինին: Ըստ Սեբեոսի Մուհամմեդը մուսուլմաններին ասել էր, որ Աստված Աբրահամին տվել է այդ երկիրը՝ Պաղեստինը, և քանի որ արաբներն իրենց Աբրահամի սերունդն էին համարում, նրանք պատվիրակություն էին ուղարկել Հերակլ կայսեր մոտ և պահանջել այն երկիրը, որն իրավամբ իրենց է պատկանում, ապա մերժում ստանալով սկսել էին իրենց նվաճումները:

Արաբական նվաճումներին զուգահեռ կարևոր իրադարձություններ էին տեղի ունենում նաև խալիֆայության ներքին կյանքում: 644 թ. սպանված Օմար խալիֆային հաջորդած Օսման խալիֆայի օրոք կանոնակարգվեց՝ կոդիֆիկացիայի ենթարկվեց և խալիֆայության բոլոր կողմերն ուղարկվեց Իսլամի սուրբ գրքի՝ Ղուրանի միասնական և վերջնական տարբերակը: Աստիճանաբար ձևավորվում էին պետական ինստիտուտները, սկզբնավորվում էր արաբամուսուլմանական դրամահատությունը, սկսում էր գործել հարկային համակարգը ի դեմս գանձվող հողահարկի՝ խարաջի և հպատակված ոչ մուսուլմաններից՝ Սուրբ Գրքի ժողովրդից (Ahl al-Kitāb)՝ քրիստոնյաներից և հուդայականներից գանձվող գլխահարկի՝ ջիզյայի: Սակայն 656 թ. Օսման խալիֆայի սպանությունից հետո խալիֆայությունում սկսվում է ներքին ճգնաժամ, ինչը և հայտնի է Ֆիթնա տերմինով: 656 թ. հաջորդ խալիֆա է ընտրվում մարգարեի հորեղբորորդի Ալի իբն Աբու Տալիբը (656-661 թթ.), որի ընտրությունը, սակայն, վիճարկում են մարգարեի կինը՝ Աիշան դաշնակցելով Մուհամմեդի աջակիցներից Տալհայի և ազ-Զուբեյրի հետ, և Օսման խալիֆայի հորեղբորորդի Սիրիայի կառավարիչ Մուավիան: 656 թ. Բասրայի մոտ տեղի ունեցած «ուղտի ճակատամարտում» (ճակատամարտն ընթանում էր Աիշայի շուրջը, ով նստած էր ուղտի վրա) Ալին հաջողության հասավ Աիշայի և դաշնակիցների նկատմամբ: Սրան հաջորդած մյուս՝ Ալիի և իր կողմնակիցների, աջակիցների (շիաթ Ալի՝ այստեղից էլ շիաներ) և Մուավիայի զորքերի միջև ռազմական բախման՝ 657 թ. Սիֆֆինի

ճակատամարտի ընթացքում Ալին այս անգամ էլ փաստացի հաղթանակի էր հասել: Սակայն Մուավիային օգնության հասած Ամր իբն ալ-Ասի խորհրդով Մուավիայի զորքերը հավաքում են ձեռքի տակ եղած Ղուրանները և տանուլ տրված ճակատամարտի ընթացքում Ղուրանի թերթերը բարձրացնում նիզակի ծայրերին: Ամրի ճշգրիտ հաշվարկած այս քայլը, որն անպայմանորեն ներգործելու էր աստվածավախ Ալիի վրա, հաջողվում է: Ալիի հրամանով ճակատամարտը կասեցվում է, ու այդուհետ Ալիի և Մուավիայի միջև վեճը պետք է լուծվեր երրորդական դատարանի միջոցով: Սիֆֆինի ճակատամարտի ելքից դժգոհ Ալիի համախոհների մի մասը լքեցին և հեռացան Ալիից: Նրանք կոչվեցին խարիջիներ (հեռացածներ[Ալիի ճամբարից]) և անզիջում պայքար սկսեցին և Ալիի, և Մուավիայի դեմ: 661 թ. Քուֆայում խարիջիների մահափորձի արդյունքում Ալին սպանվում է: Խարիջիները անհաջող մահափորձ են կատարում նաև Մուավիայի նկատմամբ, ով սրի հարվածից վիրավորվում է, բայց իր գիրության շնորհիվ կարողանում է ողջ մնալ ու նույն թվականին խալիֆայության գահն անցնում է Մուավիային (661-680 թթ.), ով և հիմնում է Օմայյան դինաստիան:

Գրականություն

- Հայաստանի հարակից երկրների պատմություն, Միջին դարեր, Երևան, 2016:
- Dostal W., Meeca before the Time af the Prophet- Attempt of on Anthropologicol interpre tation, Der Islam, vol 68, 1991
- Weil G., Mohammed der Prophet, Sein Leben und sei Lehre, Stutgard, 1843.
- Nuir W., The life of Mahomet and history of Islam , 1858, vol-1-2.
- Watt W., Economic and Social aspects of the origin of islam, The Islam Quarterly, 1954, vol.1:2.
- Stookey R, Yemmen.The Relitics of the Yemen Arab Pepublic, Boulder, Co,1978.
- Simon R. Meccan Trade and Islam. Problems of Origin and Structure. Budapest, 1989
- The Cambridge History of Islam, vol. 1.
- Robbinson F., The Cambridge Illustrated History of the Islamic World, 1996/1998/2002/2005

- Hoyland R., In God's Path:The Arab Conquests and the Creation of an Islamic Empire, 2015.
- Kennedy H. The Great Arab Conquests: How the Spread of Islam Changed the World We Live In, 2008
- Al-Balâdhuri, The origins of the Islamic State: Being a translation from the Arabic accompanied with annotations, geographic and historical notes of the Kitāb futūḥ al-buldān, New York, 1968.
- Грязневич П., Историко-археохогические памятники древнего и средневекового Йемена, Полевые исследования 1970-1971 гг. СПб, 1994.
- Бартольд В., Работы по истории ислама и Арабского халифата, Москва, 2002.
- Большаков О.Г., История Халифата, т. I-IV, Москва, 1989-1998.
- Фильштинский И., История арабов и халифата (750-1517), Москва, 2006.
- Беляев А.Е., Арабы, ислам и Арабский халифат в ранее средневековье, Москва, 1966.
- Петрушевский И.П., Ислам в Иране в VII-XVвеках, Л., 1966.
- Сурдель Д., Сурдель Ж., Цивилизация классического ислама, Екатеринбург, 2006.
- А. Коротаев, В. Клименко, Д. Прусаков, Возникновение ислама, Москва, 2007.

ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՕՄԱՅՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

Օմայյանների հարստության հիմնադիրն է համարվում Մուավիա իբն Աբի Սուֆյանը: Չնայած պատմագրության մեջ ընդունված տարեթիվը 661 թվականն է համարվում Օմայյան դինաստիայի իշխանության «ելակետը», նշենք որ դեռ 660 թ. Մուավիան արդեն խալիֆա էր հռչակվել Երուսաղեմում և կարելի է ընդունել նաև այս տարեթիվը: Օմայյանների հարստությունը բաժանվում է երկու ճյուղի Սուֆյաննիների՝ Մուավիան (660-680 թթ.), որին հաջորդել է որդին՝ Յազիդը (680-685 թթ.) և Մուավիա II-ը (683-684 թթ.): Երկրորդ ճյուղը Օմայյանների կրտսեր՝ Մարվանյանների ճյուղն է, որն իր անվանումն ստացել է Մարվան իբն ալ Հաքամ խալիֆայի անվամբ: Օմայյանները հենվում էին կալբ և կայս ցեղերի աջակցության վրա: Այս երկու ցեղախմբերը մշտական պայքարի մեջ էին գտնվում քաղաքական առաջնայնություն ստանալու և ազդեցության համար: Կայսերը ներկայանում էին որպես արաբ բեդվինական ռազմաքաղաքական ավանդույթների կրողներ, որոնց համար խորթ և օտար էր նվաճված ժողովուրդների, երկրների մշակույթն ու քաղաքակրթությունը: Հակառակ պատկերն էր կալբերի դեպքում, որոնք, չհրաժարվելով նվաճվածների վրա գերիշխանությունն ապահովելուց, փորձում էին վերջիններիս հետ շփման մեջ մտնել, փոխառել նրանց մշակույթն ու ձեռքբերումները: Կալբերը ավելի ազդեցիկ և հարուստ էին, և չնայած նրան, որ Օմայյանները ծագումով կայս ցեղից էին, նրանք հիմնականում նախապատվությունը տալիս էին կալբերին:

Մուավիան, մինչև խալիֆա դառնալը, 20 տարի զբաղեցրել էր Սիրիայի կառավարչի պաշտոնը, իր և մերձավորների համար Սիրիայում տնտեսական մեծ ռեսուրսներ էր ապահովել: Այս երևույթը պահպանվեց նաև հետագա Օմայյանների օրոք: Սիրիան հանդիսանում էր հենարան Օմայյանների համար, վերջիններս Սիրիայում աջակցության և համակրանք էին գտել նաև տեղական բնակչության մոտ, քանի որ սկսած Մուավիայից Սիրիայում առավել նպաստավոր պայմաններ էին ապահովվում երկրագործության, առևտրի, արեստների զարգացման համար, հաշվի պետք է առնել

նաև այն հանգամանքը, որ Օմայյանների մայրաքաղաք Դամասկոսը ևս Սիրիայում էր:

Մուավիայի իշխանության գալով հիմք դրվեց խալիֆայությունում գահաժառանգության սկբունքին: Նրա ջանքերով ստեղծվեց նաև ռազմական նավատորմ, որը մասնակցեց Կոստանդնուպոլսի 669 թ. անհաջող պաշարմանը հաջորդած, 673 թ. Բյուզանդիայի դեմ սկսված պատերազմին և Կոստանդնուպոլսի պաշարմանը, որը տևեց 5 տարի և ավարտվեց արաբական տորմիղի ջախջախմամբ: Այնուամենայնիվ նավատորմը կարևոր ու նոր գործիք էր բյուզանդական նավերի հարձակումների վտանգից Եգիպտոսի և Սիրիայի ափերը ապահովելու համար:

Մուավիայի իշխանության շրջանում խալիֆայությունը իրենից միասնական կենտրոնաձիգ տերություն էր ներկայացնում: Ճիշտ է, Եգիպտոսը գտնվում էր Ամր իբն ալ Ասի ազդեցության և իշխանության ներքո, իսկ Իրաքում ուժեղ էին շիաների և խարիջիների դիրքերը, որոնց դեմ Մուավիան կոշտ պայքար էր մղում: Բոլոր երկրամասերում Մուավիայի նշանակած կառավարիչները փորձում էին տեղի բնակչությանը իրենց կողմը գրավելու քաղաքականություն վարել:

Օմայյանների դեմ սկսված դժգոհություն էր առաջացել նաև իսլամի սրբազան քաղաքներում՝ Մեքքայում և Մեդինայում: 669 թ. Հասանի մահվանից հետո Մուավիայի դեմ է փորձում դուրս գալ, ապա խալիֆայական գահին իր հավակնությունները ներկայացնել Ալիի կրտսեր որդին՝ Հուսեինը: Սա իր գործակալին է ուղարկում Քուֆա ապստամբություն կազմակերպելու համար: Վերջինիս տեղի կառավարիչ Ուբեյդուլահ իբն Զիադի կողմից սպանվում է, իսկ Հուսեինը, որը Մեքքայից 300 համախոհների հետ ուղղվում էր Քուֆա, այդ լուրը ստանում է ճանապարհին: Ուբեյդուլահ իբն Զիյադի ուղարկած զորքերը Քերբելայի մոտ 680 թ. ջախջախում են Հուսեինին ու նրա համախոհներին: Մուավիայի ուղարկած զորքին հաջողվում է գրավել Մեդինան և հնազանդեցնել: Սակայն Մեքքայում Օմայյանների դեմ է դուրս գալիս Աբդալլահ իբն ազ- Զուբեյրը՝ իրեն հռչակելով խալիֆա: Յազիդի ուղարկած զորքերը մեծ վնաս են հասցնում Մեքքային քարանետ մեքենաներով և բաբաններով, բայց հաջողության չեն հասնում: 683 թ. Յազիդը մահանում է, իսկ նրան հաջորդած Մուավիա II-ը թույլ և հիվանդ մեկն էր, որին նույնիսկ

չէին ընդունում Օմայյաների հենարան կայսերը և փորձում էին անցնել Աբդալլահ իբն ազ- Զուբեյրի կողմը: Մուավիա II-ի մահվանից հետո իշխանությունը անցնում է Մարվան իբն ալ-Հաքամին (684-685 թթ.), ով մինչ այդ զբաղեցրել էր Հիջազի կառավարչի պաշտոնը: Նա հիմք է դնում Օմայյանների Մարվանյան ճյուղին: Մարվանին 685 թ. հաջորդում է որդին Աբդ ալ Մալիքը (685-705 թթ.): Օմմայյան դինաստիայի երկու լավագույն ներկայացուցիչների՝ Աբդ ալ-Մալիք խալիֆայի (685-705 թթ.) և նրա որդու Վալիդ I (705-715 թթ.) օրոք. խալիֆայությունը հասնում է իր հզորության գագաթնակետին: Վերսկսված նվաճումները ընդլայնում են խալիֆայության սահմանները Հնդկաստանում, Ամուդարյայից այն կողմ և Հյուսիսային Աֆրիկայում: Ավելին, 710 թ. արաբ զորավար Տարիկ իբն ազ-Զիյադի 7000 զորքը ափհանում է կատարում Պիրենեյան թերակղզու մի հրվանդանում, որն այսօր էլ մեզ ծանոթ է այդ զորավարի անվամբ՝ Ջաբալ ալ-Տարիկ՝ Ջիբրալթար: VII դարի վերջին արաբական զորքերը, կոտրելով բերբերների դիմադրությունը, գրավեցին Թունիս-Իֆրիկիան՝ Կարթագենը: Հյուսիսային Աֆրիկայի նվաճված այս տարածքները հետագայում հայտնի դարձան Մաղրիբ՝ բառացի՝ Արևմուտք անվամբ: VIII դարի սկզբին այստեղ ուղարկվեց Մուսա իբն Նուսեյրը, ով դարձավ Մաղրիբի առաջին փոխարքան: Մուսա իբն Նուսեյրի զորքերը գրավեցին ամբողջ Մաղրիբը և 709 թ. դուրս եկան Ատլանտյան օվկիանոսի ափ: 711 թ. Նուսեյրի զորքերը իր մաուլա Տարիկ իբն Զիյադի գլխավորությամբ ներխուժեցին Պիրենեյան թերակղզի, որտեղ ջախջախեցին վեստգոթերի զորքերին Գվադալեթի ճակատամարտում և սկիզբ դրեց Պիրենեյան թերակղզու նվաճմանը, որը գրավումից հետո հայտնի դարձավ ալ-Անդալուս անվամբ:

Արաբները ներթափանցում են Եվրոպա և 732 թ. միայն Պուատյեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ֆրանկներին Կարլոս Մարտելի (718-741 թթ.) գլխավորությամբ է հաջողվում կասեցնել մուսուլմանների հաղթարշավը Եվրոպայում: Նվաճումներից բացի Աբդ ալ-Մալիքի օրոք վերջնականապես ձևավորվում է խալիֆայության պետակառավարման իսլամական համակարգը: Աբդ ալ-Մալիքը իրականացնում է կարևոր բարեփոխումներ՝ առաջին բարեփոխմամբ պետական գրագրության և ընդհանրապես պետա-

կան լեզու է հռչակվում իսլամի լեզուն՝ արաբերենը: Մյուս բայրեփոխմամբ Աբդ ալ-Մալիքը խալիֆայությանը տալիս է այն, ինչը բոլոր ժամանակներում ցուցիչ է հանդիսացել պետությունների ինքնուրույնության, կայացածության ու քաղաքական-տնտեսական հզորության համար. սկսվում է զուտ արաբական դրամների՝ արծաթե դիրհեմների և ոսկե դինարների դրամահատությունը: Սա չափազանց կարևոր մի պահ էր, որից հետո իսլամական աշխարհի դրամները զուտ դրամական միավոր լինելուց բացի դառնալու էին նաև իսլամական դոկտրինի ազդարարման լուռ, բայց համոզիչ և երկարակյաց մետաղյա մունետիկները: Արաբ պատմիչ ալ-Մակրիզիի (1364-1445 թթ.) վկայությամբ, խալիֆայության գոյության առաջին տասնամյակներից սկսված արաբամուսուլմանական դրամահատությունը հենց սկզբից նեթ կրում էր իսլամի հետքը՝ դրամի վրա դրոշմված էր լինում ալլահ բառը, ալլահի միակության գաղափարը (շահադան) և այլն: Իսկ Աբդ ալ-Մալիք խալիֆայի հստակ որոշմամբ կտրականապես որոշված էր՝ այդուհետև հատվելու էին զուտ արաբական, մուսուլմանական դրամներ, որոնց վրա անպայմանորեն և միշտ դրոշմված էր լինելու շահադան: Հետագայում, իհարկե, շահադային զուգահեռ մուսուլմանական դրամների վրա հայտնվեցին կրոնական այլ տեքստեր ևս՝ այաթներ Ղուրանից, 4 բարեպաշտ խալիֆաների անունները կամ 12 իմամների անունները շիական դրամների դեպքում և այլն: Իհարկե, առանց արաբական նվաճումների իսլամի գաղափարները դժվար թե տարածում գտնեին այլ կրոնաքաղաքակրթական արժեհամակարգեր ունեցող պետություններում կամ ժողովուրդների մոտ, սակայն նույն իսլամի կարևորագույն գաղափարները իրենց վրա դրոշմված, կանոնակարգված քաշով և բարձր որակի ազնից մետաղներից ձուլված արաբամուսուլմանական դրամները առևտրի անկասելի ուժի շնորհիվ հոժարությամբ ընկալվում և տարածվում էին Աֆրիկայի խորքերից մինչև Չինաստան և Հնդկաստան, քրիստոնյա ժողովուրդներից մինչև հեթանոս վիկինգներ: Իսլամի և դրամների այս կապը հասկանալու համար բավական է նշել, որ նույնիսկ Մեքքայում, որտեղ առաջինը հատվեցին և սկսվեցին տարածվել արաբամուսուլմանական դրամները, նախաիսլամական շրջանում չկար ոչ դրամահատարան և ոչ էլ երբևէ դրամ էր հատվել: Աբդ ալ Մալիքը Բյուզանդիայի հետ հաշտության պայմանագիր

կնքելուց հետո անցնում է խալիֆայության անհնազանդ երկրամասերը հնազանդեցնելուն: Նախ նրան հաջողվում է ճնշել Քուֆայում Մուխթարի բարձրացրած ապստամբությունը: Մուխթարը առաջ էր քաշել Ալի իբն Աբու Տալիբի մյուս որդու Մուհամմեդ իբն ալ Հանաֆիի թեկնածությունը որպես մահդիի և մուսուլմանական համայնքի օրինական առաջնորդի ու հակաօմայյան ապստամբություն բարձրացրել Քուֆայում: Աբդ ալ Մալիքի զորքերը Հաջաջ իբն Յուսուֆի գլխավորությամբ 691 թ. գրավում են Քուֆան և վերջնականապես հնազանդեցնում Իրաքը: Հետո Հաջաջ իբն Յուսուֆի զորքերը գրավում են նաև Մեքքան. իրեն խալիֆա հռչակած զառամյալ ազ-Զուբեյրը սպանվում է:

Գրականություն

- Մեբեռսի եպիսկոպոսի Պատմութիւն ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան,1939:
- Տեր-Ղևոնդյան Ա. Ն., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:
- Տեր-Ղևոնդյան Ա. Ն., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996:
- Al-Tabari, Tarikh al-Rusul wa-l- Muluk li-ibn Ja'afar Muhammad bin Jarir al-Tabari, I-IX, al-Qahira. 1960-1969.
- Edmonds C. Kurds, Turks, Arabs. London, 1957.
- Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского Халифата, Сочинения, т. 6, М., 1966.
- Большаков О. Г., История Халифата, т. 1. Ислам и Аравия (570-633). М., 1989, т. 2, Эпоха великих завоеваний (633-656). М., 1993.
- Грюнебаум Г. Э., Классический ислам. М., 1986.
- Արաբական աղբյուրներ, Գ. Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, Ներածն. և թարգմ. Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981:
- Джастин Уинтл, История исмала, М., 2003.
- Массэ А., Ислам. Очерки истории, М., 1982.
- Фильштинский И. М., История арабов и халифата (750-1517), М., 2001.
- Родионов М. А., Ислам классический, Санкт-Петербург, 2001.

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ VIII ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ-IX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

Օմայյան հարստության անկումը

Օմայյանների աստիճանական անկումը ուներ մի քանի պատճառներ: Դրանցից մեկը նվաճված ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքն էր: Վերջիններս բաժանվում էին 2 խմբի՝ զիմմիներ և մաուլաներ (մաուլա՝ որևէ ցեղի հովանավորյալ, հաճախորդ): Եթե զիմմիները ազատված էին կրոնական անհանդուրժողականությունից բխող վտանգից խուսափում էին ջիզյան վճարելով և սեփական հավատը դավանելու իրավունքը ստանալով, ապա մավալիները հայտնվեցին անորոշ, նույնիսկ «խաբված» վիճակում: Սկզբնական շրջանում իսլամ ընդունելով նոր մուսուլմանները չէին ազատվում հարկերը վճարելու պարտավորությունից, ֆեոդալները, մասնավորապես իրանցի դեհկանները չէին կարողանում վերականգնել նախկին իրավունքները կամ օգտվել արաբ-մուսուլմաններին հասու արտոնություններից, չէին օգտվում նույնիսկ նրանց համար առանձին մզկիթներ էին կառուցվում, որպեսզի վերջիններս արաբների հետ հետ միասին չաղոթեն, իսկ եթե աղոթեն էլ՝ ապա վերջին շարքում: Այս հավատափոխ մավալիների նկատմամբ հատկապես ծանր քաղաքականություն էր վարում Աբդ ալ Մալիքի եղբայր Աբդ ալ-Ազիզը, Եգիպտոսում, ալ-Հաջաջը՝ Իրաքում և Խորասանում: Դժգոհության ալիքը ծնում է մի շարժում, որը հայտնի է շուբիյան «անվամբ, որպես ոչ արաբ ժողովուրդների պայքարի շարժում արաբներին համահավասար իրավունքների և արտոնությունների տրամադրման համար: Շարժումը հատկապես տարածում էր գտել խալիֆայության արևելյան հատվածներում՝ Իրանում:

Մյուս պատճառը Օմայյանների դեմ մղվող խարիջիների պայքարն էր և շիաների ապստամբությունները: Խարիջիների խոշոր ելույթից հարկ է նշել ադ-Դահակի գլխավորությամբ Իրաքում բարձրացրածը: Խարիջիներին 744-745 թթ. հաջողվում է գրավել և ամրանալ Քուֆայում և զարգացնել իրենց հաջողությունները Վասիտի և Մոսուլի ուղղությամբ ադ- Դահակը կարողանում է փորձել նույնիսկ իր ազդեցությունը տարածել Արմինիայի վրա, որի կառավարիչ է նշանակում մի մսագործի Մուսաֆիր բեն Կասիմին: Բայլականում նրա դեմ դուրս է

գալիս Արմինիայի ոստիկան Ասիմ բեն Յազիդը: Բայց նա Թարթառ գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտվում է: Ապստամբության ծավալը ու ուժգնությունը պատկերացնելու համար նշենք որ Միջագետքի վերջնական նվաճումը թույլ չտալու համար ապստամբներին ճնշելու էին դուրս եկել Մարվան II խալիֆան, որին Ռակայյի մոտ հաջողվում է պարտության մատնել Դահնակին և խալիֆի որդին Աբդառահման իբն Մարվանը, որը պիտի պաշտպաներ Ուռհան և Մծբինը: Մարվանին հաջողվում է Մծբինից 80 կմ արևմուտք Քաֆր Թուսի մոտ ջախջախել խարիջիներին, սպանվում է նաև ադ-Դահակը, բայց խարիջիները մյուս օրը նոր առաջնորդ են ընտրում ու հարձակվում Մարվանի ճամբարի վրա և նույնիսկ Մարվանի վրանը տապալում: Բայց և այնպես խարիջիները պարտություն են կրում: Սակայն խարիջիները իրենց ազդեցությունը և ուսմունքը տարածել էին խալիֆայության տարբեր մասերում: Այդ ժամանակաշրջանում Անդալուսում, Խորասանում, Հյուսիսային Աֆրիկայում Օմայյանների դեմ բարձրացված ապստամբությունները հրահրված էին հենց խարիջիների կողմից: Շուտով ապստամբում են նաև Արաբիայի խարիջիները: Սրանց հաջողվում է պարտության մատնել Մեքքայից նրանց դեմ եկած արքունական զորքերին, ապա իրենց Աբու Համզա առաջնորդի գլխավորությամբ գրավում են նաև Մեդինան: Սրանք խարիջիների իբադիներ ճյուղն էին ներկայացնում և տարածված էին հիմնականում Եմենում՝ Հադրամաութի շրջաններում: 747-748 թթ. բռնկված այս ընդվզումը կարողանում է ճնշել միայն իբն Ատիյա զորավարը, որը 747 թ. կարողանում է ջարդել սրանց Մեդինայում, խարիջիների մի մասը փախչում է Մեքքա Աբու Համզայի մոտ, բայց իբն Ատիյան այստեղ էլ է հաղթանակ տանում և սպանում Աբու Համզային: Հետագայում զարգացնելով հաջողությունները Իբն Արիյան գրավում է Սանան և խորանում Հադրամաութում պարտության մատնելով իբայիտներին:

Օմայյանների անկման մյուս կարևոր պատճառը նրանց հենարանը հանդիսացող կայս և կալբ ցեղերի հակամարտությունն էր: Օմայյանները ծագումնաբանորեն մոտ էին կայս ցեղին, որի մոտ ուժեղ էր նահապետական կացութաձևը: Սակայն Մուավիայից սկսած Օմայյանները սկսում են ավելի հակվել և սիրաշահել կալբերին, որոնք և ավելի քաղաքակրթված էին և ավելի մեծաքանակ էին: Սկսած 720-ական թթ.-ից, սակայն, Օմայյանները նորից սկսում են մեծ տեղ տալ կայսերին և առաջացնում կալբերի դժգոհությունը, և երկու ցեղերի

միջև սկսվում են արյունահեղ բախումներ: Եվս մեկ կարևոր պատճառ էր Օմայյանների՝ խալիֆային ոչ հարիր նիստուկացը: Աբդ ալ-Մալիքի և Վալիդի փայլուն կառավարումից հետո Սուլեյմանը 715-717 թթ. հիշատակվում է որպես այլասերված և շատակեր մի գահակալ, որը արքունիքը զվարճանքի վայր էր դարձրել»: Նրան հաջորդած Օմար II-ը (717-720 թթ.) հիշատակվում է որպես առաքինի և բարեպաշտ մուսուլման: Բայց նա էլ «բարեպաշտ» էր դարձել միայն խալիֆա դառնալուց հետո, մուսուլմանական վերնախավին իր կողմը գրավելու համար՝ անցյալում ոչնչով չզիջելով Սուլեյմանին: Օմարը դադարեցնում է իսլամ ընդունած «նորելուկ» մուսուլմաններից ջիզյայի գանձումը, ինչպես նաև նրա հրամանով հարկերից ազատվում են նաև եկեղեցիներն ու վանքերը. արդյունքում գանձարանը զրկվում է հարկային մուտքերի այս աղբյուրներից և արագորեն դատարկվում, ինչը և ստիպում է Օմար խալիֆային վերականգնել նախկին կարգերը: Օմարին հաջորդած Յազիդ II-ի իշխանությունը հիշատակվում է հարկային լծի ծանրացմամբ, մուսուլմանական հոգևորականներից ևս հարկեր գանձելով: Հարկային լուծը առավել ծանրացավ Հիշամ իբն Աբդ ալ-Մալիք խալիֆայի օրոք (724-743 թթ.): Ճիշտ է դա թույլ տվեց որոշ չափով լցնել գանձարանը, սակայն Հիշամի ձեռքբերումները նրան հաջորդած Աբդ ալ-Մալիքի թոռների (ալ-Վալիդ II, Յազիդ III, Իբրահիմ) օրոք, որոնք 743-744 թթ. իրար հաջորդեցին գահին, մսխվեցին: Նրանցից Վալիդ II-ը վարում էր ցոփ կյանք և շատ արագ դատարկեց պետական գանձարանը: Ըստ լեգենդի նա նետահարություն էր պարապում Ղուրանի թերթերի վրա, իսկ հավատացյալների ուրբաթօրյա գլխավոր աղոթքը՝ խուտբան իրականացնելու համար ուղարկում էր իր հարճերին: Պետք է նշենք նաև, որ օմայյան խալիֆաների նմանօրինակ բացասական նկարագիրը կարող էր ունենալ նաև այլ պատճառներ: Հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ նկարագրի ձևավորման վրա կարող էին ազդեցություն ունենալ ավելի ուշ՝ աբբասյան խալիֆայության շրջանի պատմագրության մեջ քաղաքական ենթատեքստ ունեցող հակաօմայյան տրամադրությունները, շիական աղբյուրներում արտացոլված հակաօմայյան թշնամական դիրքորոշումը:

Շատ ավելի անհաջող էր նրան հաջորդած Յազիդ II-ի կառավարումը, ով ստացել էր «նակիս (նվազեցնող)» մականունը՝ զորքի ռոճիկը կրճատելու համար: Խալիֆայության այս ծանր վիճակը շարունակ-

վում է նաև Օմայյան վերջին խալիֆա Մարվան II-ի՝ «Կռու (Խուլ)» Մարվանի օրոք, չնայած նրա գործադրած ջանքերին և մի շարք ապստամբություններ ճնշելու հաջողություններին: Բայց նրան բաժին ընկավ ամենախառնակ շրջանը: Նախ ապստամբեց Սիրիայի բնակչությունը՝ չդիմանալով հարկային ծանր քաղաքականությանը: Մարվանը գրավեց ու հրամայեց քանդել Սիրիայի քաղաքների ամրությունները ապստամբությունները ճնշելը հեշտացնելու համար: Սրան հաջորդեց մեզ հայտնի արդեն խարիջիների ելույթները Իրաքում, ապա նաև Հյուսիսային Աֆրիկայում, Անդալուսում և Իրանում: 748 թ. ապստամբեցին նաև հայերը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, որը 750 թ. ճնշվեց: Սակայն Մարվանին ու Օմայյաններին սպառնացող վտանգը գալիս էր ոչ այդ կողմից: 720-ական թվականների սկզբներից հակաօմայյան ակտիվ քարոզչություն և գործունեություն են սկսում Մուհամմեդի Աբբասյանները: Աբբասյանները իրենց ծագումը կապում էին Մուհամմեդ մարգարեի հորեղբոր՝ ալ-Աբբաս իբն Աբդ ալ-Մուտալիբի հետ: Նրանք հատկապես մեծ թվով հետևորդներ և աջակցություն են գտնում Իրաքում և Իրանում, մասնավորապես Քուֆայում և Խորասանում, որտեղ Աբբասյանների օգտին ակտիվ գործունեություն էին ծավալել ծագումով պարսիկ վաճառական Բուքեյր իբն Մահանը և Աբու Սալամա ալ-Հալալը: 734 թ. Խորասանում սկսվում է հակաօմայյան ապստամբություն: Աբբասյանների հաջողությունները սակայն կապված էին առավելապես մեկ այլ անձի Աբու Մուսլիմի հետ, ում հետ Բուքեյր իբն Մահանը ծանոթացել էր 743 թ. ձերբակալվելուց հետո բանտում: 745 թ. նրան Աբբասյան Իբրահիմը բանտից ազատում է հետագա պայքարի մեջ օգտագործելու համար: 747 թ. հունիսի 9-ին Մերվի օազիսում Աբու Մուսլիմը ապստամբություն է բարձրացնում: 748 թ. ապստամբները Թուսի մոտ ջախջախում են օմայյանների զորքերը, ապա գրավում Նիշապուրը, Գորգանը և 749 թ. Նեհավենդը.749 թ. ապստամբների ձեռքն է անցնում ամբողջ Իրանը, ապա Իրաքը: 749 թ. նրանք գրավում են Քուֆան: Աբբասյանները նաև կարողացել էին իրենց կողմը գրավել հակաօմայյան ուժերին՝ խարիջիններին և շիաներին: Աբբասյանները առաջ էին քաշել մի շարք կարգախոսներ և իշխանության վերաբերյալ հակաօմայյան տրամադրություններ արտահայտող այնպիսի դրույթներ, որոնց համաձայն իբրև թե հակաօմայյան այդ շարժումը գլխավորում է «Ղուրանին և սուննային հետևող(ի հակադրություն Օմայյանների)», մարգարեի տնից սերող թաքնված, ծածուկ մի

իմամ, ով հետևում է Ղուրանի և իսլամի բոլոր պատվիրաններին, որի հիման վրա Աբբասյանները կարողացան իրենց կողմը գրավել հատկապես շիաների մեծ զանգվածներ, քանի որ վերջիններս հույսեր էին փայփայում, թե Օմայյաների տապալմանը հաջորդելու է Ալիի տան անդամներից մեկի՝ Ալի իբն Աբու Տալիբի ժառանգներին (ամենայն հավանականությամբ գահը պիտի անցներ շիա իմամներից որևէ մեկին): Այս կարգախոսները թույլ տվեցին Աբբասյաններին իրենց շուրջը համախմբել հակաօմայյան դիրքորոշում ունեցող ուժերի և խմբավորումների հիմնական մասին: Մարվան II-ը բավական ուշ արձագանքեց Աբբասյաններից եկող վտանգին, քանի որ զբաղված էր խարիջիների ապստամբությունները ճնշելով: Նրա միակ հաջողությունն եղավ այն, որ կարողացավ 748 թ. գերել և սպանել Աբբասյան Իբրահիմին: Բայց դա մեծ նշանակություն չունեցավ շարժման վրա: Իրենց հաջողություններից հետո ապստամբները 750 թ. Մեծ Զաբ գետի մոտ ջախջախեցին Օմայյան զորքերին, որից հետո գրավեցին Մարվանի նստավայր Հառանը, ապա՝ Դամասկոսը: Մարվանը փախչում է Պաղեստին, փորձում զորք հավաքել, բայց տեղի բնակչությունը չի սատարում խալիֆային և վերջինս փախչում է Եգիպտոս որտեղ և սպանվում է:

Մեքքայի և Մեդինայի գրավումից հետո Քուֆայում մինչ այդ Օմայյաներից թաքնվող Աբուլ Աբբասը 750 թ. հիմք է դնում Աբբասյան խալիֆայությանը: Դաժան հաշվեհարդար է իրագործվում Աբբասյանների հակառակորդների նկատմամբ. Օմայյան տան 80-ից ավելի անդամներ սպանվում են: Միայն Հիշամ խալիֆայի թոռ Աբդուռահմանին հաջողվում է փախչել Անդալուս (Պիրենեյան թերակղզի) և կալբ ցեղի աջակցությամբ հիմնել Անդալուսի Օմայյան էմիրությունը (երբեմն անվանվում է նաև խալիֆայություն):

Աբբասյանների «ոսկեդարը»

Նոր դինաստիայի խալիֆաները իրենց ծագումը կապում էին Մուհամմեդի հորեղբոր ալ-Աբբասի հետ, այստեղից էլ դինաստիայի անվանումը: Տերությունը կոչվում է նաև Բաղդադի խալիֆայություն (762 թ. Մանսուր խալիֆան հիմնում է նոր մայրաքաղաք «Մադինաթ աս-սալամ՝ (հայ.՝ խաղաղության քաղաքի)»՝ հետագայի Բաղդադը):

749 թ. նոյեմբերի 28-ին Քուֆայում Աբբասյան Աբուլ Աբբասը իրեն խալիֆա է հռչակում՝ ընդունելով **աս-Սաֆահ** պատվանունը: Ըստ Օ.

Բոլշակովի, Աբուլ Աբբասը (750-754 թթ.) գահ բարձրանալուց առաջ արտասանած իր ճառն ավարտել էր այնպիսի խոսքերով, թե ինքը «բարօրություն և արյուն հեղողն» է՝ աս-սաֆֆահը. արդյունքում այս պատվանունը մեկնաբանվում է և՛ առատաձեռն, և արյունարբու իմաստներով: Աբուլ Աբբասի հրամանով սրի են քաշվում Օմայյան տան 80-ից ավելի անդամներ և միայն Էմիր Աբդուռահմանն է փախչում Կորդովա՝ Անդալուս հիմնելով Կորդովայի Օմայյան էմիրությունը 756 թ.: Աբբասյանները ճնշում են Միրիայում նոր իշխանության դեմ բարձրացված ապստամբությունները: Կարճ գահավարումից հետո 754 թ. խալիֆա Աբուլ Աբբասը մահանում է՝ գահը թողնելով եղբորը՝ Աբու Ջաֆարին, որը գահ բարձրանալով ընդունում է ալ- Մանսուր (754-775 թթ.) անունը: Վերջինիս հրամանով (կամ իր իսկ ձեռքով) սպանվում է Աբու Մուսլիմը, որի ջանքերով էին Աբբասյանները իրականում եկել իշխանություն: Ալ-Մանսուրի դեմ ապստամբում է հորեղբայրը Աբդուլահ իբն Ալին, ով հաղթանակ էր տարել Օմայյանների դեմ Մեծ Զաբի ճակատամարտում, և ով գահի նկատմամբ հավակնություններ ուներ: Ալ-Մանսուրի զորքերը պարտության են մատնում Աբդուլահին, որին խալիֆայի հրամանով տանջամահ են անում: 755 թ. Աբու Մուսլիմի սպանությունից հետո ապստամբություն են բարձրացնում Իրանի շիաները Նիշապուրում: Ապստամբության ղեկավար Սունբադը կարգախոս էր հռչակել «վրեժ հանուն Աբու Մուսլիմի», սակայն ապստամբությունն իրականում ընդունել էր շիաների՝ Աբբասյանների դեմ ուղղված շարժման բնույթ: Ալ-Մանսուրի 10.000-ոց զորքին հաջողվում է հաղթանակ տանել ապստամբների նկատմամբ Համադանի մոտակայքում և գլխովին ջախջախել նրանց: Ալ-Մանսուրը կարողանում է ճնշել նաև Մավերաննահրում Իսհակի բարձրացրած ապստամբությունը: Աբբասյանների դեմ, սակայն, ապստամբում են և Արաբիայում 762 թ. Ալիի որդի Հասանից սերող՝ Մուհամմեդի և Իբրահիմը: Մուհամմեդը, ով ստացել էր «անանաֆս ազ-զակիյա (արդարակյաց հոգի)» պատվանունը, Մեքքայի շուրջ խրամ է փորել տալիս և փորձում դիմագրավել ալ-Մանսուր խալիֆայի պատժիչ ջոկատներին: Սակայն Աբբասյանների զորքերը գլխավորող Իսա իբն Մուսան 762 թ. դեկտեմբերի 6-ին նա ջախջախիչ պարտության է մատնում իրեն խալիֆա հռչակած Մուհամմեդին և նրա աջակիցներին, ապա՝ 763 թ. նաև նրա եղբորը՝ Իբրահիմին:

785 թ. ալ-Մանսուրին հաջորդում է որդին ալ-Մահդին: Նա վարում էր դինաստիայի և տերության դիրքերի ամրապնդման զգուշավոր քաղաքականություն, մասնավորապես փորձում էր սիրաշահել շիաներին, որի մասին է խոսում օրինակ Հասանի ծոռներ Մուհամմեդին և Իբրահիմին ներում շնորհելը: Խալիֆա ալ-Մահդիի օրոք ապստամբություն է բռնկվում խալիֆայության արևելյան մասերում: 776 թ. Մերվում ապստամբություն է բարձրացնում Հաշիմ իբն Հաքիմը, ով ներկայանում է որպես Աբու Մուսլիմի փոխանորդ և հայտնի է ավելի որպես ալ-Մուկաննա (ծածկոցով փակված) անվամբ: Նա առաջ է քաշում մարդկանց մեջ Աստծո փոխակերպման նոր կրոնական ուսմունքը: Ապստամբների ձեռքն են անցնում Մերվը, Սոդդը, Բալխը և այլ կարևոր կենտրոններ: Ալ-Մահդիին հաջողվում է ճնշել այս ապստամբությունը միայն 783 թ., իսկ ալ-Մուկաննան ինքնասպանություն է գործում: Մահդիին 785 թ. հաջորդում է ավագ որդին Ջուրջանի կառավարիչ Հադին: Սակայն նրան 786 թ. մոր՝ Հայզուրանի հրամանով թունավորում են և գահին անցնում է Մահդիի կրտսեր որդուն՝ Արմինիայի կառավարիչ Հարուն ալ- Ռաշիդին: Նա վարում էր սուննի հոգևորականությանը սիրաշահելու՝ շարունակելով նաև շիաների նկատմամբ զգուշավոր քաղաքականության հոր գիծը: Հարուն ալ-Ռաշիդի օրոք վերջ տրվեց նաև մեծ ազդեցության հասած, ժառանգաբար վեզիրի պաշտոնը զբաղեցնող Բարմեքյանների տոհմին՝ սպանվեց տոհմի վերջին ներկայացուցիչ՝ վեզիր Ջաֆարը:

Հարուն ալ-Ռաշիդի իշխանության օրոք ևս խալիֆայությունը ցնցվում էր ապստամբություններից: 798 թ. Համզա իբն Աբբակի գլխավորությամբ ապստամբություն է բարձրանում Սիստանում, որտեղ խալիֆայության զորքերը պարտություն են կրում և նահանջում: 806 թ. ապստամբություն է բռնկվում նաև Խորասանում Ռաֆի իբն Լայսի գլխավորությամբ: Հարուն ալ Ռաշիդը 20.000-ոց բանակ է ուղարկում այնտեղ, որը սակայն պարտություն է կրում: Ապստամբությունը թափ է հավաքում. ապստամբների ձեռքն է անցնում նաև Սամարղանդը (868 թ.): Խալիֆան որոշում է անձամբ ղեկավարել ապստամբների դեմ արշավանքը, բայց 809 թ. ճանապարհին մահանում է Թուսում:


ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ 750 թ.
ԿԱՅՐՈՒԱՆ
ԴԱՄԱՍԿՈՍ
ՍՊԱՀԱՆ
ՔՈՒՖԱ
ՏՈՒՍԹԱԹ՝
ՄԵԴԻՆԱ
ՄԵՔՔԱ

Գրականություն

- Al-Tabari, Tarikh al-Rusul wa-l- Muluk li-ibn Ja'afar Muhammad bin Jarir al-Tabari, I-IX, al-Qahira. 1960-1969.
- Bennison A.K., The Great Caliphs:The Golden Age of the 'Abbasid Empire, 2009
- Dinawari, Kitab al-Akhbar al-Tiwal, publ. par V. Guirgas, Leide, 1988.
- Doak R., Empire of the Islamic World, 2009.
- Edmonds C. Kurds, Turks, Arabs. London, 1957.
- Hoyland R., In God's Path:The Arab Conquests and the Creation of an Islamic Empire, 2015.
- James E. Lindsay, Daily Life in the Medieval Islamic World, Greenwood Press, 2005.
- Kennedy H. The Great Arab Conquests: How the Spread of Islam Changed the World We Live In, 2008
- Spuler B., A History of the Muslim World: The age of the caliphs, 1995.
- The origins of the Islamic State: Being a translation from the Arabic accompanied withannotations, geographic and historical notes of the Kitāb futūḥ al-buldān.
- Tyerman Ch., God's War: A New History of the Crusades, 2006.
- A. Elbendary, Crowds and Sultans: Urban Protest in Late Medieval Egypt and Syria, British Academic Press, 2015, p. 117.
- Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского Халифата, Сочинения, т. 6, М., 1966.
- Большаков О. Г., История Халифата, т. 1. Ислам и Аравия (570-633). М., 1989, т. 2, Эпоха великих завоеваний (633-656). М., 1993.
- Грюнебаум Г. Э., Классический ислам. М., 1986.
- Массэ А., Ислам. Очерки истории, М., 1982.
- Рыжов К., Все монархи мира. Мусульманский Восток. XV-XX вв., Москва, изд. Вече, 2004, с. 502. Джастин Уинтл, История исмала, М., 2003.
- Фильштинский И. М., История арабов и халифата (750-1517), М., 2001.

ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ

Աբբասյան հարստության անկման նախանշանները նկատելի էին դարձել արդեն Հարուն առ-Ռաշիդ խալիֆայի իշխանության տարիներին, երբ առաջ էր եկել գահաժառանգման հարցը: Բանը նրանում է, որ խալիֆայի գահը ավագության սկզբունքով պետք է ժառանգեր Հարուն առ-Ռաշիդի ավագ որդին (ալ-Մամունը), սակայն այստեղ առաջ է գալիս Հարունի կնոջ՝ Զուբեյդայի գործոնը: Զուբեյդան խալիֆայության ամենաազդեցիկ և հարուստ կինն էր, և ինչպես իր ամուսինը՝ Հարուն առ-Ռաշիդը, սերում էր նույն Աբբասյան տնից. նա Աբբասյան ալ-Մանսուր խալիֆայի թոռնուհին էր և ստացվում է, որ հայրական գծով Հարուն առ-Ռաշիդը նրա հորեղբորորդին էր, ու բացի այդ Զուբեյդան և Հարուն առ-Ռաշիդը մայրական կողմից ևս արյունակից էին ու մորաքրոջ որդիներ: Եվ իհարկե, Աբբասյան տնից սերող Զուբեյդան չէր կարող թույլ տալ գահին այլ գահաժառանգի թեկնածություն բացի իր որդուց Ամինից, հատկապես որ Հարունի ավագ որդին ծնվել էր թյուրքական կամ իրանական ծագում ունեցող հարճից: Ըստ իբն ալ-Ասիր պատմիչի, 802 թ. Հարուն առ-Ռաշիդը Ամինի և Մամունի հետ հաջ է կատարում դեպի Մեքքա, որտեղ եղբայրները երդում են տալիս հետևել հոր սահմանած սկզբունքին. գահը ժառանգելու էր ալ-Ամինը, որից հետո անցնելու էր ալ-Մամունին: Իբն ալ-Ասիրի հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ Հարուն առ-Ռաշիդը որպես այս սկզբունքի անխախտ մնալու երաշխիք հրահանգում է Մեքքայի ու Մեդինայի բնակիչներին ու ավագանուն՝ եղբայրներից որևէ մեկի կողմից երդումը դրժելու դեպքում անցնել տուժողի կողմը: Ինչը և հետագայում տեղի է ունենում ու Մեքքան ու Մեդինան անցնում են Մամունի կողմը: 809 թ. Հարուն առ-Ռաշիդի մահվանից հետո գահն անցնում է ալ-Ամինին (809-813 թթ.), ով շատ չանցած փորձում է իր որդու՝ Մուսայի իրավունքները հաստատել որպես հաջորդ խալիֆայի: Ալ-Մամունը, ով ժառանգել էր խալիֆայության արևելյան շրջանների՝ Խորասանի և հարակից տարածքների վրա իշխանությունը, դուրս է գալիս եղբոր դեմ՝ իր իրավունքները վերականգնելու համար: Մամունի թյուրք-իրանական զորքերը

Տահիր իբն Հուսեինի հրամանատարությամբ 811 թ. Ռեյի մոտ խոշոր հաղթանակ են տանում ալ-Ամինի թվով գերակշռող զորքի նկատմամբ ու հաջողությամբ շարժվում առաջ: 812 թ. Բաղդադը պաշարվում է և 813 թ. գրավվում, իսկ ալ-Ամինը սպանվում: Գահ է բարձրանում ալ-Մամունը (813-833 թթ.): Այս ընթացքում և հաջորդող տասնամյակներում որպես խալիֆայության անկման նախանշաններ գործ ունենք հետևյալի հետ՝ նախ ալ-Մամունին Խորասանի վրա կառավարիչ նշանակելը խոսում էր խալիաֆայությունը կիսելու, երկպառակության սկիզբը դնելու մասին: Մյուս կողմից՝ Տահիրի աջակցությունը ալ-Մամունի և պետության ու կենտրոնաձիգ իշխանության պահպանման վրա թանկ նստեց. շուտով Տահիրը հիմնելու էր Տահիրիների ամիրայությունը Խորասանում: Այս ամենին զուգահեռ նկատելի էր նաև խալիֆայության պառակտումը այլ ուժերի կողմից ևս, քանի որ իրար հետևից խալիֆայության տարբեր մասերում կազմավորվում են Աղլաբյանների, Սաֆարյանների, Սամանյանների, Թուլունյանների և այլ կիսանկախ ու անկախ պետական կազմավորումները:

Ալ-Մամունին հաջորդած ալ-Մութասիմ խալիֆայի օրոք (833-842 թթ.) պետության ապագա հզորությունը վտանգող մի նոր միտում է նկատվում. հիմնականում արաբներից կազմված զորքը, զինական ուժը իր տեղն է սկսում զիջել ավելի մարտունակ, և սկզբնական շրջանում հավատարիմ թյուրքական գերի-ստրուկներից կազմված զորամիավորումներին, որոնք էլ շուտով իրենց ձեռքն էին վերցնելու խալիֆայության փաստացի կառավարումը: Խալիֆաները աստիճանաբար կորցնում են քաղաքական իշխանությունը, իսկ 945 թ.-ից հետո խալիֆայությունը և խալիֆաները հայտնվում են իրանական ծագմամբ Բուվեյհյանների կամ Բուիների իշխանության ներքո: Խալիֆայության անկմանը նպաստեցին նաև 9-րդ դարում ներքին կյանքում տեղի ունեցած երկու ցնցումներ: Առաջինը՝ 816-836/837 թթ. արաբերի, իսլամի ու խալիֆայության դեմ բռնկված Խուռամիների ապստամբությունն էր Իրանում Բաբեկի կամ Պապակի գլխավորությամբ, որը հաջողվեց ճնշել միայն Առանշահիկ Սահլ Սմբատյանի (Սահլ իբն Սունբատ ալ-Արմանի) և թյուրք զորավար Ավշինի միջոցով, և երկրորդը՝ դա 869 թ. բռնկված զինջերի՝ սևամորթ ստրուկների խոշորածավալ ապստամբությունն էր: Պակաս կարևոր չէր նաև այն, որ Բյուզանդական

կայսրությունը աստիճանաբար վերականգնում էր իր հզորությունը և արդեն Մակեդոնական (Հայկական) դինաստիայի օրոք լուրջ ռազմական հաջողություններ և տարածքային ձեռքբերումներ ուներ ի հաշիվ Արաբական խալիֆայության:

Թուլունյաններ (Թուլունիներ)
Ահմադ իբն Թուլուն (868-884 թթ.)
Հումարավեյհ (884-896 թթ.)
Ջայշ (896 թ.)
Հարուն (896-905 թթ.)
Շայբան (905 թ.)

Դինաստիան հիմնվել է 868 թ. (հիմնադիրը՝ Ահմադ իբն Թուլունը): Թուլունը եղել է թյուրք ստրուկ, որին խալիֆա Մամունին էր ուղարկել Բուխարայի էմիրը: Թուլունը կարողանում է բարձր դիրքի հասնել Աբբայանների արքունիքում: Նրա որդին՝ Ահմադը հորը հաջորդում է նրա բարձր պաշտոնում և 868 թ. նշանակվում է Եգիպտոսի կառավարիչ: Շուտով Ահմադը հասնում է փաստացի անկախության, 878 թ. իր իշխանությունը տարածում է նաև Սիրիայի վրա: Եգիպտոսը և Սիրիան Թուլունյանների ձեռքին են մնում ընդհուպ մինչև դինաստիայի անկումը 905 թ.: Մեծ համբավ էր վայելում Թուլունյանների պետության մայրաքաղաք հարուստ ու ճոխ Քաթայը (գտնվում էր Ֆուսթաթի և ապագա Կահիրեի միջև):

Իխշիդներ

Մուհամմեդ իբն Թուղջ Ալ-Իխշիդ (935-946 թթ.)
Աբու-լ-Քասիմ Ունուջուր իբն ալ-Իխշիդ (946-961 թթ.)
Ալի Իբն Ալ-Իխշիդ (961-966 թթ.)
Աբուլ Միսկ Քաֆուր (966-968 թթ.)
Ահմադ իբն Ալի (968-969 թթ.)

Թուլանիների անկումից հետո Եգիպտոսն ու Սիրիան կրկին հայտնվում են աբբասյան փոխարքաների իշխանության ներքո մինչև 935 թ., երբ Մուհամմեդ իխշիդը (Ֆերգանայի կառավարչի տիտղոսն էր) հիմնում է այս կիսաանկախ պետությունը: Մուհամմեդի հայրը՝ Թուղջը, եղել էր Դամասկոսի կառավարիչը, որդին շարունակում է հոր ճանապարհը և հիջրայի 318 թ. դառնում Դամասկոսի կառավարիչ, ապա հիջրայի 321 թ. նշանակվում Եգիպտոսի կառավարիչ: 938\327 թ. նա ընդունում է իշխիդ տիտղոսը, 941թ. իր տիրույթներին կցում Սիրիան, իսկ 942 թ. նաև իր իշխանության տակ առնում Մեքքան ու Մեդինան:

Սամանյաններ

Ահմադ իբն Ասադ (819-864 թթ.)
Նասր իբն Ահմադ (864-892 թթ.)
Իսմայիլ իբն Ահմադ (892-907 թթ.)
Ահմադ իբն Իսմայիլ (907-914 թթ.)
Մանսուր II իբն Նուհ (997-999 թթ.)
Աբդալմալիք բ. Նուհ (999-1000 թթ.)
Իսմայիլ բ. Նուհ (1000-1005 թթ.)

Նասր իբն Ահմադ (914-943 թթ.)
Նուհ իբն Նասր (943-954 թթ.)
Աբդալմալիք իբն Նուհ (954-961 թթ.)
Մանսուր իբն Նուհ (961-976 թթ.)
Նուհ իբն Մանսուր (976-977 թթ.)

Դինաստիայի հիմնադիրն է համարվում դեհկան Ահմադ իբն Ասադ Սաման Ֆայադը (819-864 թթ.), որը Ֆերգանայի էմիրն էր: Նրա որդին՝ Նասրը եղել է Սամարղանդի կառավարիչը: Պետությունը ընդգրկում էր Մավերանահրի տարածքները: Սամանյանների պետության հզորացան շրջան է համարվում X դարը, երբ նրանց իշխանության տակ էր ամբողջ Մավերանահրը, Խորեզմը, Խորասանը, Միստանը, Գուրգանը: Սամանյանները ստեղծել էին կենտրոնացված ուժեղ պետություն: Նրանց հիմնական սոցիալական հենարանը դեհկաներն էին: Խիստ զարգացած էր առևտուրը Բուիների, խազարների, Վոլգյան Բուլղարիայի, Ռուսիայի և Չինաստանի հետ: Ծաղկում էր գիտությունը, արվեստը: Պետությունում մեծածավալ շինարարական աշխատանքներ էին կատարվում: Աստիճանաբար X դարի վերջին և XI դարի սկզբին Սամանյանների պետությունը սկսում է անկում ապրել: Արդյունքում պետության տարածքը անցնում է Ղազնևյաններին և Կարախանյաններին:

Սաֆֆարյաններ

Յակ'ուբ բ. Ալ-Լայս աս-Սաֆֆար (861-879 թթ.)
Ամռ բ. Ալ-Լայս (879-901 թթ.)
Թահիր բ. Մուհամմեդ (901-908 թթ.)
Լայս իբն Ալի (908-910 թթ.)
Մուհամմեդ իբն Ալի (910-911 թթ.)

Յաղուբ բեն Լայս Սաֆարը (պղնձագործի որդին) եղել է դազիների ջոկատի հրամանատար: Նա 868 թ. դարձել է Սիստանի կառավարիչ: Շուտով նա նվաճում է Հերաթը, ապա Ֆարսը իր Շիրազ կենտրոնով, ապա Բալխը, և Թոխարիստանը: Իսկ 873 թ. Թահիրիներից գրավում է Խորասանը: 879 թ. նա դուրս է գալիս Մութամիդ խալիֆայի դեմ ու շարժվում դեպի Բաղդադ, բայց խալիֆայի եղբայրը Մուվաֆակը ջախջախում է սրա զորքին ու սպանում Յաղուբին: Վերջինիս հաջորդում է եղբայրը՝ Ամրը, սակայն նրա դեմ դուրս է գալիս Սամանյան Էմիր Իսմայիլը և 900 թ. ջախջախում ու գերեվարում Ամրին: Դրանից հետո Սաֆֆարյանների դինաստիան անկում է ապրում:

Զիյարյաններ

Մարդավիջ իբն Զիյար (931-935 թթ.)
Վուշմգիր իբն Զիյար (935-967 թթ.)
Բիսութուն իբն Վուշմգիր (967-978 թթ.)
Քավուս իբն Վուշմգիր (978-981, 981-997, 997-1012 թթ.) Քավուս
Մանուչիհր իբն Քավուս (1012-1029 թթ.)
Անուշիրվան իբն Մանուչիհր (1029-? թթ.)
1035 թ. - Ղազնևյանների գերիշխանության հաստատումը

Զիյարյանների դինաստիան իշխել է Թաբարիստանում, Մազանդարանում և Գորգանում 931-1040 թթ.: Դինաստիայի հիմնադիրն է Մարդավիջ իբն Զիյարը: Զիյարյանները դուրս են մղում խալիֆայության զորքերը Ռեյ, Ղազվին, Համադան, Շիրազ քաղաքներից և տիրանում դրանց, բայց Մարդավիջի մահվանից հետո, հիմնականում Բուիների ճնշման տակ, այս հարստությունը արագ անկում է ապրում: Որոշ ժամանակով 944 թ. նրանք իրենց ճանաչում են Սամանյանների, իսկ XI դարի սկզբին՝ Ղազնիների ենթականեր:

Սաջյաններ

Մուհամմեդ իբն Աբու-լ-Սաջ (889-901 թթ.)
Դիվդաղ իբն Մուհամմեդ (901 թ.)
Յուսուֆ իբն Ալի-լ-Սաջ (901-928 թթ.)
Ֆաթհ իբն Մուհամմեդ իբն Աբու-լ-Սաջ (928-929 թթ.)

Դինաստիայի հիմնադիրը Աբուլ Սաջ Դիվդադն էր: Նա եղել է Բաղդադի և Խուզիստանի կառավարիչ, իսկ երբ նրա որդին Դիվդադը նշանակվում է Ատրպատականի կառավարիչ, նա ամրապնդում է այստեղ իր տոհմի իշխանությունը: Ատրպատականը դառնում է Սաջյանների պետության հիմնական տարածքը: Սաջի մահվանից հետո եղբայրը Յուսուֆը Սաջի որդուն գահընկեց է անում և զավթում իշխանությունը Ատրպատականում: Յուսուֆը մինչ այդ եղել էր Մեքքայի վալին: Սաջյանները հայտնի էին հայ Բագրատունիների, Արծրունիների Կարմաթների դեմ մղած պատերազմներով:

Ռավվադյաններ

Մուհամմեդ իբն Հուսեյն առ-Ռավադի (*10-րդ դարի սկիզբ*)
Հուսեյն/Աբուլ Հայջա (955-988 թթ.)
Մամլան (988-1001 թթ.)
Հուսեյն իբն Մամլան (1001-1025 թթ.)
Վահուդան իբն Մամլան (1025-1059 թթ.)
Մամլան II (1059-1071 թթ.)

Ռավվադյանները քրդացած եմենցի արաբներ էին, որոնք իշխել են X դարի սկզբից մինչև 1071 թ. Ատրպատականում: Դինաստիայի հիմնադիրը Մահմուդ բ. Հուսեյն առ- Ռավադին էր: Սկզբնական շրջանում Ռավվադյանները եղել են Թավրիզի կառավարիչները: Դինաստիայի հայտնի ներկայացուցիչներից է Վահուդան բ. Մամլանը (1025-1069 թթ.), որին հաջողվել էր քրդական ցեղերից կազմված ջոկատների օգնությամբ ետ մղել սելջուկների հարձակումները, բայց 1054 թ., այնուամենայնիվ, ընդունում է սելջուկյան Տուղրիլ բեկի գերիշխանությունը:

Մազարյաններ (Մուսաֆիրյաններ)

Մարզուբան իբն Մուհամմեդ (941-957 թթ.)
Ջուսթան իբն Մարզուբան (957-960 թթ.)
Իսմայիլ իբն Վահուդան (960-962 թթ.)

Իբրահիմ իբն Մարզուբան (962-983 թթ.)
Նուհ իբն Վահսուդան (966-989 թթ.)

Իրանական ծագումով դեյլեմցի Սալարյանները Հյուսիսային Իրանում և Դեյլեմում հայտնվել էին դեռ X դարի սկզբներին (916 թ.), երբ Մուհամմեդ իբն Մուսաֆիրը հաստատվում է այստեղ ու կնության առնում Դեյլեմի տիրակալ Ջուստանի դստերը: Մուհամմեդի դիրքերի թուլացումից դժգոհ նրա որդիները մարզուբանը և Վահսուդանը, 941 թ. գերի են վերցնում հորը, իշխանությունը վերցնում իրենց ձեռքը. Մարզուբան բեն Մուհամմեդը (941-957) իշխում է Ատրպատականում, Վահսուդան բեն Մուհամմեդը 941-965 թթ. Դեյլեմում: Առավել ազդեցիկ և փաստական անկախություն վայելող իրանական ամիրայություն էր Ատրպատականում և Դեյլեմում:

Կակվեյհյաններ
Մուհամմեդ իբն Ռուստամ (1008-1041 թթ.)
Ֆարամուրզ իբն Մուհամմեդ (1041-1051 թթ.)
Գարշասպ իբն Մուհամմեդ (1041-1048 թթ.)
Ալի իբն Ֆարամուրզ (?-1095 թթ.)
Գարշասպ II (1095?-1141 թթ.)

Այս դինաստիան իշխել է Համադանում և Քուրդիստանում: Պետության հիմնադիրն է իբն Կակվեյհը կամ Մուհամմեդ բեն Դուհմանզադը, որը Համադանում իշխող Բուի Մեջդ ադ- դաուլայի հորեղբայրն էր: Նա 1023 թ. գահընկեց է անում Սամա ադ-Դաուլա Բուիին, ապա 1000 թ.-ին գրավում Սպահանը և սկսում իշխել համադանյան Բուիների տիրույթներում: Կակվեյհյանների դինաստիայի անկումը սկսվում է սելջուկների արշավանքներից հետո:

Դուլաֆյաններ
Աբու Դուլաֆ (?-840 թթ.)
Աբդալազիզ բ. Աբու Դուլաֆ 840-874
Դուլաֆ բ. Աբդալազիզ (874-879 թթ.)
Ահմադ բ. Աբդալազիզ (879-893 թթ.)
Օմար բ. Աբդալազիզ (893-896 թթ.)
Ալ-Հարիս բ. Աբդալազիզ (896-897 թթ.)

Դուլաֆյանների հարստությունը հիմնվել է 897 թ. Աբու Դուլաֆի կողմից: Վերջինս Մամուն խալիֆայի նշանակած կառավարիչն էր Համադանում: Արդեն Դուլաֆի հաջորդները հանդիսանում էին փաստացի անկախ իշխողներ: Դուլաֆյանները իշխել են նաև Սպահանում ու Նեհավենդում: Սակայն Ալ-Մութադիդ (852-902 թթ.) խալիֆայի օրոք Դուլաֆյանների իշխանությունը դադարում է գոյություն ունենալուց:

Օքայլյաններ

Հուսամ ադ-դաուլա Մուքալլադ (996-1001 թթ.)
Մութամիդ ադ-դաուլա Կիրվաշ (1001-1050 թթ.)
Զահիմ ադ-դաուլա Աբու Քամիլ Բարակա (1050-1052 թթ.)
Ալամ ադ-դին Աբուլ Մաալի Կուրեյշ (1052-1061 թթ.)
Շերեֆ ադ-դաուլա Աբուլ Մաքարիմ Մուսլիմ (1061-1085 թթ.)
Իբրահիմ (1085-1093 թթ.)
Ալի (1093-1096 թթ.)

Արաբական Օքայլ ցեղից սերած այս դինաստիայի ճյուղերն իշխել են Իրաքում, Ջազիրայում և հյուսիսային Սիրիայում: Հիմնադիրն է Մուհամմեդ բ. Մուսայրիբը: Սկզբնական շրջանում նրանք աջակցել են Համդանյանների դինաստիային՝ Մուսալի քրդերի դեմ պայքարում: Հետագայում հենց Համդանյանների տիրույթների մի մասն անցել է Օքայլիների իշխանության տակ: 1040-ական թթ. նրանց էմիրությունը ենթարկվում է սելջուկների արշավանքներին և անկում է ապրում:

Մազյադյաններ
Սանադ ադ-դաուլա Ալի (1012-1017 թթ.)
Նուր ադ-դաուլա Դուբեյս (1017-1081 թթ.)
Բահա ադ-դաուլա (1081-1086 թթ.)
Սեյֆ ադ-դաուլա Սադակա (1086-1108 թթ.)
Նուր ադ-դաուլա Դուբեյս (1108-1135 թթ.)
Սադակա II (1135-1137 թթ.)
Մուհամմեդ (1137-1145 թթ.)
Ալի II (1145-1150 թթ.)

Մազյադյանների՝ Բանու Ասադ ցեղից սերող դինաստիայի կենտրոնը Խիլլան էր: Սկզբնական շրջանում նրանք իշխում էին որպես Բուիների վասսալներ: Պետության հիմնադիրն է Ալի բ. Մազյադը: Նրանք վարել են խուսանավման քաղաքականություն Բուիների, Աբբասյանների և սելջուկների միջև՝ ընդունելով վերջիններիս գերիշխանությունը: Մազյադյանները իշխել են 961-1150 թթ.:

Զիյադյաններ
Մուհամմեդ իբն Աբդալլահ բ. Զիյադ (*819-859* թթ.)
Իբրահիմ իբն Մուհամմեդ (*859-901* թթ.)
Զիյադ իբն Իբրահիմ (*901-903* թթ.)
Աբու-լ-Ջեյշ (*903-?* թթ.)
Զիյադ կամ Աբդալլահ իբն Իսհակ (*981-1018* թթ.)

Զիյադյանների պետությունը արաբական ծագմամբ էմիրություն էր Եմենում (818-1018 թթ.), որը ձևականորեն ընդունում էր խալիֆայության գերիշխանությունը: Պետության հիմնադիրն է Մուհամմեդ իբն Զիյադը: Զիյադյանների պետությունը իր ազդեցություն է տարածում նաև Հադրամաութում և Եմենի լեռնային շրջաններում, որտեղ հետագայում հաստատվում է մեկ այլ՝ Յաֆուրիների դինաստիան: Պետությունում կարևոր դերակատարում ստացան եթովպացի ստրուկներից հավաքագրված զորագնդերը: Հետագայում դրանց հրամանատարներից մեկը՝ Նաջահը իրեն հռչակում է Զիյադյանների իրավաջորդ և հիմնում Նաջահիների դինաստիան:



Համդանյաններ

Հալեպում	Ջազիրայում Համդան իբն Համդուն
Սայֆ ադ-դաուլա (945-967 թթ.)	Ալ-Հուսեին իբն Համդան (895-916 թթ.)
Սա՛դ ադ-Դաուլա (967-991 թթ.)	Աբդալլահ իբն Համդան (906-929 թթ.)
Սաիդ ադ-Դաուլա (991-1002 թթ.	Նասիր ադ-Դաուլա (929-967 թթ.)
	Աբու Թաղլիբ (967-978 թթ.)

Համդանյանները հիմնականում իշխել են Մոսուլի և Հալեպի շրջաններում (906-1004 թթ.): Նրանք ծագումով էին թաղլիբ արաբական ցեղից էին: Դինաստիայի հիմնադիրն է Համդան իբն Համդունը: Նրա որդիները ստացել էին Հալեպի և Մոսուլի կառավարիչների պաշտոնը՝ այդպիսով հիմնելով Համդանյանների երկու ճյուղերը: Սա՛դ ադ-Դաուլայի օրոք 967-991 թթ. նրանք վասալական կախվածության մեջ են ընկնում Բյուզանդիայից, հետագայում՝ Ֆաթիմյաններից: Համդանյանների պետության անկումից հետո նրանց տիրույթներն անցնում են Մարվանյաններին և Օքայլիներին:

ԲՈՒՎԵՅՀԻՆԵՐ ԿԱՄ ԲՈՒԻՆԵՐ

Ֆարսում	Իրաքում, Ահվազում և Քերմանում	Ջիբալում
Իմադ ադ-դաուլա (932-949 թթ.)	Մուիզզ ադ-դաուլա (932-967 թթ.)	Ռուքն ադ-դաուլա (947-977 թթ.)
Ադուդ ադ-դաուլա (949-983 թթ.)	Իզզ ադ-դաուլա (967-978 թթ.)	Մուայյադ ադ-դաուլա (977-983 թթ.)
Շարաֆ ադ-դաուլա (983-989 թթ.)	Ադուդ ադ-դաուլա (978-983 թթ.)	Համադան-Սպահան
Սամսամ ադ-դաուլա (989-998 թթ.)	Շարաֆ ադ-դաուլա (983-989 թթ.)	Ֆախր ադ-դաուլա (983-997 թթ.)
Բահա ադ-դաուլա (998-1012 թթ.)	Բահա ադ-դաուլա (989-1012 թթ.)	Շամսա ադ-դաուլա (997-1021 թթ.)
Սուլթան ադ-դաուլա (1012-1024 թթ.)	Սուլթան ադ-դաուլա (1012 թ.)	Սամա՛ ադ-դաուլա (1021-1028 թթ.)

Իմադ ադ-դին Մարզբան
(1014-1048 թթ.)
Խոսրով ֆիրուզ
(1048-1055 թթ.)

Միայն Ռեյում

Ֆախր ադ դաուլա
(977-997 թթ.)
Մաջդ ադ-դաուլա
(997-1029 թթ.)

Դեյլեմից սերող Բուիների կամ Բուվեյհիների գերիշխանությունը խալիֆայությունում ընդգրկում է 935-1055 թթ.: Դինաստիայի հիմնադիրն է համարվում Աբու Շաջջա Բուվայհին: Պետության մայրաքաղաքը Շիրազն էր: 945 թ. շիա Բուիները գրավում են Բաղդադը և ալ-Մուսթակֆի խալիֆային զրկելով քաղաքական իշխանությունից՝ փաստացի կառավարումը իրենց ձեռքն են վերցնում՝ կրելով ամիրների ամիր՝ «ամիր ալ-ումարա» տիտղոսը: Ողջ Արաբական Իրաքը, Բաղդադ և Բասրա քաղաքներով հանդերձ, ինչպես նաև Ֆարսը, Դեյլեմը, Ահվազը և Ջիբալը գտնվում էր Բուիների ընդարձակ պետության կազմի մեջ: Այն իր հզորության գագաթնակետին հասավ Ադուդ ադ-Դաուլայի (949-983 թթ.) օրոք: 11-րդ դարի կեսերին սելջուկները արշավանքները վերջ տվեցին Բուիների իշխանությանը:

- Al-Tabari, Tarikh al-Rusul wa-l- Muluk li-ibn Ja'afar Muhammad bin Jarir al-Tabari, I-IX, al-Qahira. 1960-1969.
- Dictionary of the Middle Ages, ed. J. Strayer, vol. a, p. 485.
- Dinawari, Kitab al-Akhbar al-Tiwal, publ. par V. Guirgas, Leide, 1988.
- Eric J. Hanne, Putting the Caliph in His Place: Power, Authority, and the Late Abbasid Caliphate, Madison, N.J.: Farleigh Dickinson University Press, 2007.
- G. Makdisi, Autograph Diary of an Eleventh-Century Historian of Baghdād--III, Source: Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. 19,. No. 1 (1957).
- James E. Lindsay, Daily Life in the Medieval Islamic World, Greenwood Press, 2005.
- Le Strange Guy. Baghdad During the Abbasid Caliphate, Oxford, 1900
- The origins of the Islamic State: Being a translation from the Arabic accompanied withannotations, geographic and historical notes of the Kitāb futūḥ al-buldān.
- A. Elbendary, Crowds and Sultans: Urban Protest in Late Medieval Egypt and Syria, British Academic Press, 2015, p. 117.
- Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского Халифата, Сочинения, т. 6, М., 1966.
- Большаков О. Г., История Халифата, т. 1. Ислам и Аравия (570-633). М., 1989, т. 2, Эпоха великих завоеваний (633-656). М., 1993.
- Васильев Л. С., История Востока. Т. 1. М., 2001.
- Грюнебаум Г. Э., Классический ислам. М., 1986.
- Рыжов К., Все монархи мира. Мусульманский Восток. XV-XX вв., Москва, изд. Вече, 2004, с. 502.

ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆ

X դարի սկզբին Հյուսիսային Աֆրիկայում սկսվում է հակաաբբասյան մի հզոր շարժում, որը հանգեցնելու էր Ֆաթիմյան խալիֆայության կազմավորմանը: Ֆաթիմյան խալիֆայության առաջացման համար բարենպաստ դաշտ էին ստեղծել իսմայիլական քարոզչության հաջողությունները Մաղրիբի բերբերների շրջանում, ինչպես նաև Աղլաբյանների (Թունիսում) ու Ռուստամյանների (Ալժիր) իշխանությունների անկումը: 900 թ. Զիքրավեյհի կարմատական[3] ապստամբության անկումից հետո կարմաթների մի ստվար զանգված հեռանում է Մաղրիբ՝ Հյուսիսային Աֆրիկայի արաբներին հայտնի տարածաշրջանը: Այստեղ՝ Իֆրիկիայում (Թունիս) ի հայտ է գալիս Ուբայդայլահ իբն ալ-Հուսեին անվամբ իսմայիլական մի դաի (քարոզիչ), որը ընդունում է Մահդի անունը և հայտնի է Ուբեյդուլլահ ալ-Մահդի անվամբ: Նա ժամանակին փորձել էր գլխավորել Սիրիայում կարմաթական ապստամբությունը և նույնիսկ իրեն ալիականների առաջնորդ էր հռչակել, բայց 902 թ. արաբ զորավար Մունիսի կողմից ապստամբության ճնշվելուց հետո փախչում է Թունիս, բայց շուտով գերեվարվում ու բանտ է նետվում բերբեր- խարիջիների կողմից: Այստեղ Ուբայդալլահը անցնում է կտրուկ գործողությունների ու բացահայտ պայքարի՝ իսմայիլականների գաղափարները քարոզելով և գլխավորելով Աղլաբյանների դեմ սկսված ապստամբությունը: Շուտով թուլացող Աղլաբիների էմիր Իբրահիմ II (875-902 թթ.) Բաղդադի խալիֆաների ջանքերով զրկվում է իշխանությունից. նրան փոխարինում է Աբդուլլահ II-ը, ում մի տարի անց հաջորդում է Զիյադեթ-ալլահը՝

---

[3] Կարմաթները իսմայիլականների մի ճյուղն էին ներկայացնում, որոնք «կարմաթ» անվանումն, ըստ երևույթին ստացել էին իրենց առաջնորդի՝ Համդան իբն ալ-Աշաս Կարմաթի անվամբ, չնայած տարածված է նաև այն տեսակետը, երբ կարմաթը ստուգաբանվում է «կարճոտն կամ կարմրաչք»:

նրա որդին (903-909 թթ.), որից հետո դինաստիան դադարում է գոյություն ունենալ:

Մյուս կողմից Ուբեյդալլահի կողմն է անցնում մեծ համբավ վայելող իսմայիլական քարոզիչ Աբու Աբդուլլահը իր կողմն անցած բերբերների ու իսմայիլականների օգնությամբ գրավում է Կայրուանը, սատարում Ուբեյդալլահին: Վերջինս Կայրուանում 909 (հնարավոր է նաև 910) թվականին հռչակվում է խալիֆա, իմամ, ներկայանում որպես այն նույն անհայտացած, թաքնված մեսսիան՝ մահդին, ով ահա հայտնվել է. Ուբեյդալլահը ընդունում է ալ-Մահդի անունը իշխելով՝ 909-934 թթ.: Այսպիսով հիմնվում է Ֆաթիմյան դինաստիան: Ալ-Մահդին շուտով ընդլայնում է իր տիրույթները, գրավում Ալժիրը, ուր իշխում էին Ռուստամյանները և վասալական կախվածության մեջ գցում շիա Իդրիսյաններին: Հիմնվում է Մահդիյա ամրոց-մայրաքաղաքը: Ըստ իսմալիական ավանդության Ուբեյդուլլահը սերում էր 7-րդ իմամ Իսմայիլ իբն Ջաֆարից կամ նրա որդուց՝ Մուհամմեդ իբն Իսմայիլից, ով համարվում էր, որ անհայտացել է և հայտնվելու է որպես մեսսիա՝ Մահդի: Ուբեյդուլլահի Մահդի հռչակվելով խզվում են կապերը նախկին դաշնակիցների՝ կարմաթների հետ, որոնք սրան Մահդի չէին համարում և սպասում էին իսկական մեսսիայի հայտնվելուն, բացի այդ կարևոր տարբերություն էր նաև այն, որ Ֆաթիմյանները առաջնորդվում էին շարիաթով, կարմաթները՝ ոչ: Ուբայդուլլահը շուտով պայքար է սկսում կարմաթների դեմ, սպանել է տալիս Կարմաթի մտերիմ աջակից Աբդանին: Շուտով նրա նախկին աջակից և հպատակ բերբերն են դժգոհություն բարձրացնում, դա օգտագործելով և մեղադրելով դավի մեջ իր դաշնակից Աբու Աբդուլահին, սրան մահապատժի է ենթարկում 911-ին, վարվելով ճիշտ այնպես, ինչպես Աբբասյան առաջին խալիֆա Աբուլ Աբբասը, ով սպանեց փաստացի Աբբասյաններին իշխանության բերած Աբու Մուսլիմին:

Ալ-Մահդին իրենից հետո խալիֆա է հռչակում որդուն՝ Աբուլ Կասիմին, ալ-Կաիմ՝ «հարության իմամ» անունով (934-946թթ):

Ալ-Կաիմի օրոք Մահդիի շիա-իսմայիլական կրոնական գաղափարաբանության մեջ կարևոր տեղ ունեցող հարության և վերադարձի գաղափարը վերջնականապես հետին պլան է մղվում ու «հետաձգվում»: Ֆաթիմյանները մեծ հետաքրքրություն են սկսում ցուցաբերել Եգիպտոսի նկատմամբ՝ նպատակադրելով գրավել այն: Առաջին արշավանքը կատարում է Ալ-Կաիմը 914 թ. և գրավում Ալեքսանդրիան, բայց ալ-Մուքթադիր խալիֆայի հայտնի զորավար Մունիսը ջարդում է ֆաթիմյան զորքերին, ստիպում նահանջել: Մահդին 919 թ. երկրորդ անգամ է արշավանք ձեռնարկում, գրավում Ալեքսանդրիան և Վերին Եգիպտոսը, ապա նորից նահանջում: Շուտով 943 թ. Կայրուանի սուննիների և խարիջի բերբերների կողմից մեծ ապստամբություն է բռնկվում: Խարիջիների Մահդի և առաջնորդ հռչակված ոմն Աբու Յազիդ նույնիսկ պաշարում է Մահդիյան, բայց չի կարողանում գրավել այն: 945 թ. ալ-Կաիմի մահվանից հետո խալիֆա է հռչակվում ալ-Մանսուրը (946-953 թթ.), ով ճնշում է այդ շարժումը: 953 թ. խալիֆա է դառնում ալ-Մուիզը (953-975 թթ.): Ալ-Մուիզ Լիդինալլահի հայտնի քրիստոնիա Ջաուհար զորավարը Գիզայի մոտ հաղթանակից հետո 969 թ. գրավում է Եգիպտոսում Ֆուսթաթը, ապա 969 թ. հիմնում է նոր մայրաքաղաքը՝ Կահիրեն, 971 թ.՝ ալ-Ազհարը մզկիթը: 972- թ. ալ-Մուիզը մայրաքաղաքը տեղափոխում է Կահիրե: Ֆաթիմյանների տիրույթները այլևս գլխավորապես կապվում են Եգիպտոսի հետ: Ալ-Մուիզի, նրան հաջորդած ալ-Ազիզ Բիլլահի (975-994 թթ.) և ալ-Հաքիմ Բիամրալլահի (996-1021 թթ.) օրոք ֆաթիմյան Եգիպտոսը բարգավաճ և հզոր տերություն էր ու մրցակից էր դարձել Աբբասյան խալիֆայությանը: Բացառությամբ ալ-Հաքիմ խալիֆայի, ֆաթիմյան գահակալները վարում էին մեղ ու հանդուրժողական քաղաքականություն քրիստոնյաների և հրեաների նկատմամբ, որի արդյունքում զարկ էր տրվում առևտրի ու արհեստների զարգացմանն ու ծաղկմանը, երկրի տնտեսական ու ռազմա-քաղաքական հզորացմանը: 1021 թ. ալ-Հաքիմ խալիֆան անհայտանում է: Գահն անցնում է նրա անչափահաս որդուն՝ ալ-Զահիրին, բայց իրականում

իշխանությունը կենտրոնացել էր ալ-Հաքիմի քրոջ՝ Միտտ ալ-Մուլքի ձեռքում: Ֆաթիմյանների հայտնվելը Եգիպտոսում նպաստեց Արևելքի հետ Կարմիր ծովով իրականացվող հինավուրց առևտրային կապերի վերականգնմանը, որն ընդհատվել էր դեռևս VI դարում պարսկա-բյուզանդական պատերազմների արդյունքում: Տարանցիկ ապրանքների հիմնական հոսքը շեղվել է Պարսից ծոցից: Արտաքին առևտրին իրենց ակտիվ մասնակցությունն ունեին Ֆաթիմյան վերնախավն ու ազնվականությունը, ինչը բնորոշ էր ամբողջ միջնադարյան Արևելքին:

1035 թ.-ին գահ է բարձրանում ալ-Մուսթանսիր Բիլլահ խալիֆան (1036-1094 թթ.): Ալ-Զահիրի և ալ-Մուսթանսիրի օրոք Սիրիան և Հյուսիսային Աֆրիկան աստիճանաբար դուրս են մնում Ֆաթիմյանների ազդեցության գոտուց: Թուլացած իշխանության պայմաններում Ֆաթիմյանների զինական ուժը կազմող բերբերներից, սուդանցիներից և թուրք վարձկաններից կազմված զորքերի միջև անընդհատ խժդժություններ են տեղի ունենում: Հիմնական պայքարը գնում էր թուրք և սուդանցի ռազմական կլանների միջև, որոնք փորձում էին գերիշխող դիրքի հասնել երկրում: 1062-1067 թթ. բռնկված քաղաքացիական պատերազմում թուրք վարձկանները Նասիր ալ-Դաուլա Համդանի գլխավորությամբ գերիշխող դիրքի են հասնում, Ֆաթիմյան խալիֆայությունը հայտնվում է նրա փաստացի իշխանության տակ. թուրք էմիրները խալիֆա ալ-Մուսթանսիրին դարձնում են խաղալիք իրենց ձեռքում, թալանում գանձարանն ու Կահիրեի հարուստ գրադարանը, ավերում ու թալանում Կահիրեի մեծ մասը: Մյուս կողմից 1023, 1025, 1065, 1092 թվականներին բռնկված սովի ալիքները հազարավոր կյանքեր են խլում ու թուլացնում խալիֆայության մարդկային ներուժը ևս: Ֆաթիմյան խալիֆայությունը հայտնվել էր քաղաքական, ռազմական ու տնտեսական խորը ճգնաժամի մեջ:

Այս ճգնաժամային պայմաններում է, որ խալիֆա ալ-Մուսթանսիրի խնդրանքով 1074 թ. Կահիրե է ժամանում Ֆաթիմյան ասպազա ամենազորեղ ու հայտնի հայ վեզիրը՝ Բադր ալ-Ջամալին (լրիվ

անունը՝ Աբուլ Նաջմ Բադր իբն Աբդալլահ ալ-Ջամալի): Բադրի անվան «ալ-Ջամալի» տիտղոսը խոսում է այն մասին, որ նա եղել է Տրիպոլիի էմիր Ջամալ ադ-դաուլա իբն Ամմարի մամլուքը: Նրա կյանքի վաղ շրջանի մասին տեղեկությունները քիչ են, չնայած Սետա Դադոյանը նրան նույնացնում է 1022 թ.-ին Դամասկոսը կարճատև կառավարած Աբուլ Նաջմ Բադրի հետ: Բադրի «կարիերայի» մասին տեղեկությունները մեզ ավելի հայտնի են սկսած 1063 թ., երբ Բադրը Ֆաթիմյան խալիֆա ալ-Մուսթանսիրի կողմից նշանակվում է Դամասկոսի և նահանգի վալի՝ ստանալով Թաջ ալ-Ումարա՝ էմիրների թագ, տիտղոսը և Մուկադդամ ալ-ջույուշ՝ զորքի հրամանատար տիտղոսն ու պաշտոնը: 1069-1070 թթ. Բադրը իր հայ և բերբեր զինվորներից կազմված ջոկատով ուղարկվում է Սիրիայի ափամերձ շրջանները վերահսկողության տակ պահելու, ապա նշանակվում է Ակրայի կառավարիչ: 1073 թ. խալիֆա Մուսթանսիրը, այլևս չկարողանալով տանել թյուրք էմիրների անարխիան, խնդրում է Բադրին գալ Կահիրե, Բադրը համաձայնվում է պայմանով, որ իր հետ պիտի բերի նաև իր հայկական զորքը: Նույն 1073 թ. սպանվում է Վերին Եգիպտոսում իր դիկտատուրան հաստատած Նասիր ադ Դաուլա Համդանը: Բադրը 1074 թ. հունվարին մուտք է գործում Կահիրե, և առաջին քայլով մահապատժի է ենթարկում թուրք էմիրներին ու զորահրամանատարներին՝ վերջ դնելով թուրքական զինվորական ուժի գերիշխանությունը: Սա շատ կարևոր հանգամանք է այն տեսակետից, որ այստեղ ականատես ենք լինում մի երևույթի, երբ Աբբասյան ու Ֆաթիմյան խալիֆայություններում առկա ու իշխող դիրքի հասած թուրքական զինվորական խավը, Ֆաթիմյան խալիֆայության դեպքում, իր տեղն է զիջում հայկականին: Բադրը նշանակվում է վեզիր և ստանում մի շարք կարևոր պաշտոններ ու տիտղոսներ՝ «Վազիր ուլ-Սայֆ վալ քալամ»՝ թրի և գրչի վեզիր, (այսինքն ռազմական և վարչական գերագույն իշխանության կրող), «Հարի ուլ դու՛աթ ալ-Մումինին»՝ իսմայիլական քարոզի՝ դավայի քարոզիչների՝ (դուաթ), առաջնոր-

դի պաշտոնը, դատական համակարգի հովանավորի, գլխավոր դատավորի պաշտոնն ու տիտղոսը՝ «Կաֆիլ կուդաթ ալ-մումինին» և ամենակարևոր պաշտոնը՝ գերագույն զորահրամանատարի պաշտոնը՝ «Ամիր ալ-Ջույուշ»:

Բադրի օրոք Ֆաթիմյան Եգիպտոսը նոր շունչ է ստանում: Նա կենտրոնացնում է ամբողջ իշխանությունը իր ձեռքում և վերոհիշյալ բոլոր պաշտոնները զբաղեցնում մինչև իր մահը՝ 1094 թ.՝ 20 տարի: Բադրը ուներ իր սեփական զորաջոկատը, հիմնականում կազմված հայերից, որի թիվը հասնում էր 7000: 1086-1087 թթ. Բադրի հրամանով Եդեսիայից հրավիրված քրիստոնյա (ենթադրաբար հայ և ասորի) ճարտարապետները կառուցում են Կահիրեի 3 հռչակավոր դարպասները՝ Բաբ ալ-Ֆութուհ, Բաբ ան-Նասր և Բաբ Զուվեյլա. Բադրն է կառուցել նաև Ջույուշի (մասջիդ ալ-Ջույուշի) մզկիթը: 1094 թ. Բադրին հաջորդում է որդին՝ ալ-Աֆդալ Շահանշահը: 1094 թ. հոր՝ Բադր ալ Գամալի ալ-Արմանիի մահվանից հետո Աբուլ Կասիմ Շահանշահ՝ ալ-Մալիք ալ-Աֆդալը զբաղեցնում է Ֆաթիմյանների վեզիրի պաշտոնը մինչև 1121 թ.: 1095 թ. բանտարկում է նորընծա խալիֆա Նիզարին և փոխարենը գահ բարձրացնում նրա կրտսեր եղբորը՝ Մուսթալիին: Նիզարը մահանում է 1097 թ. բանտում: Ֆաթիմյաններից Նիզարի կողմնակիցները փախչում են Սիրիա և Իրան և Ալամութում ու մի քանի այլ ամրոցներում հետագայում պատմությանը հայտնի դառնում որպես նիզարիներ կամ ասասիններ: Ալ-Աֆդալը 1096 թ. գահ է բարձրացնում Մուսթալիի մանկահասակ որդուն՝ ալ-Ամիրին, ու մինչև մահ կառավարում երկիրը: Նա 1098 թ. սելջուկներից գրավում է Տյուրոսը և Երուսաղեմը, որը սակայն 1099 թ. Ասկալոնի ճակատամարտում Գոտֆրի Բուլյոնցու (Գոդֆրուա դը Բուլյոն) գլխավորած խաչակիրների բանակից պարտվում է և կորցնում Երուսաղեմը:

Ալ-Աֆդալի հզորության և հայկական ծագման մասին խոսում են ոչ միայն մուսուլմանական պատմագիրները, այլև եվրոպական, որոնք նրան անվանում էին Էլավդալիո կամ Լավենդալիուս:

Ուշագրավ է, որ որպես վեզիր նա ուներ թագավորական իշխանության մասին խոսող և անուն՝ Շահանշահ՝ արքայից արքա, և տիտղոս՝ ալ Մալիք ալ Աֆդալ-(հայ.՝ արժանավոր, գերազանց թագավոր): Ալ-Աֆդալը սպանվել է 1121 թ. Ըյդ ուլ-ադհա տոնի ժամանակ: 1131-ին նրա որդին Կութայֆը դառնում է վեզիր: Իսկ 1132 թ.-ին ալ-Հաֆիզ խալիֆան մեկ այլ հայի՝ Յանիս ալ-Արմանիին է վեզիր նշանակում: Հաֆիզը 1135 թ. խժդժությունները վերացնելու և տերությունը «վերակենդանացնելու» համար վեզիր է նշանակվում Ղարբիյայի նահանգապետ Վահրամ Պահլավունուն կամ Բահրամ ալ-Արմանիին, որը վախճանվում է 1140 թ: 1154 թ. խալիֆա ալ-Հաֆիզին հաջորդում է ալ-Ֆաիզը, ապա վերջին՝ ալ-Ադիդ խալիֆան: Վերջինների օրոք Ֆաթիմյան խալիֆայությունը արագ անկում է ապրում, իր տեղը զիջելով Այյուբյանների տերությանը:



Գրականություն

- Eric J. Hanne, Putting the Caliph in His Place: Power, Authority, and the Late Abbasid Caliphate, Madison, N.J.: Farleigh Dickinson University Press, 2007.
- G. Makdisi, Autograph Diary of an Eleventh-Century Historian of Baghdād--III, Source: Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. 19,. No. 1 (1957).
- Tarikh Abi-l Fida, vol. 3, 1870.
- Chronicles of the Crusades: Being Contemporary Narratives of the Crusade of Richard Coeur de Lion, transl. by John Allen Giles, Thomas Johnes, London, 1848
- S. Lane Poole, The Coinage of Egypt (A.H. 358-922): under the Fatimee Khaleefehs, the Ayyoobees and the Memlook Sultans, London, 1879.
- Memoires de Jean sire de Joinville; ou, Histoire et chronique du tres-chretien roi Saint Louis, Paris, 1859.
- The Cambridge History of Islam, vol.1A, ed. P. Holt, Ann K. Lambton, B. Lewis, London, Cambridge University press, 1970.
- G. Dédéyan, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés: étude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068 - 1150), Lisbone, 2003, volume 1-2.
- Leila S. al-Imad, The Fatimid Vizierate 969-1172, Berlin, 1990, p. 80; F. Daftary-The Isma'ilis: Their History and Doctrines, Camb. Univ. Press, 2007.
- R. Yeomans, The art and architecture of Islamic Cairo 1st ed. Published. Reading, UK : Garnet Pub. Ltd., 2006.
- S. Saleh, The Use of Bāṭinī, Fidā'ī and Ḥashīshī, Studia Islamica, No. 82 (1995), pp. 35-43.
- Fulcheri Carnotensis Historia Hierosolymitana (1095–1127), ed. Heinrich Hagenmey, Heidelberg,, 1913.
- Andrew S. Ehrenkreutz, The Jihād and its times, edited by H. Dajani-Shakeel, Ronald A. Messier, Univ. Of Michigan, 2011.
- James E. Lindsay, Daily Life in the Medieval Islamic World, Greenwood Press, 2005.
- A. Elbendary, Crowds and Sultans: Urban Protest in Late Medieval Egypt and Syria, British Academic Press, 2015, p. 117.

- Chronique de Mychelle le Syrien, ed. par J.B. Chabot, tome III, 1905, Paris, p. 175-176.
- Dictionary of the Middle Ages, ed. J. Strayer, vol. a, p. 485.
- Рыжов К., Все монархи мира. Мусульманский Восток. XV-XX вв., Москва, изд. Вече, 2004, с. 502.
- D. Patton, *Badr al-Din Lulu*, Atabek of Mosul, 1211–1259,Seattle, 1991.

ԱՅՅՈՒԲՅԱՆՆԵՐ

Այյուբյանները, ըստ արաբալեզու պատմիչ իբն Խալլիքանի, ծագում են Հազանիյա (Հազբանիյա) քրդական ցեղի մի ճյուղից՝ Ռավվադյաններից: Այյուբյաններն իրենք հետագայում փորձում էին ներկայանալ որպես արաբական բանու Օմայյա ցեղից սերածներ՝ դրանով փորձելով «արաբականացնել», այն է՝ ազնվականացնել իրենց ծագումը: Ըստ պատմիչի, Այյուբյանների ռազմաքաղաքական վերելքը կապվում է Այյուբյան Շադի իբն Մարվանի հետ, ով սերում էր Դվինի առավել ազդեցիկ և հայտնի ընտանիքներից մեկից, ինչը արդեն իսկ կարող է խոսել այն մասին, որ Այյուբյանների դեպքում ի սկզբանե գործ ունենք ոչ թե ռազմավարչական բարձր դիրքի հասած քոչվոր ցեղային ավագանու, այլ տեղի քրդական, մուսուլմանական վերնախավի ներկայացուցիչների հետ: Սալահ ադ-Դինի հայրը՝ Նաջմ ադ-Դին Այյուբը ծնվել է Դվինի մոտակայքում գտնվող քրդաբնակ Աջդանական գյուղում: Շադի (կամ Շազի) իբն Մարվանը 1130 թ. իր որդիների՝ Նաջմ ադ-Դին Այյուբի և Ասադ ադ-Դին Շիրկուհի հետ լքում է Դվինը այն բանից հետո, երբ իր դաժանությամբ հայտնի սելջուկյան զորավար Կուրտի իբն Տողան-Արսլանը (հայկական աղբյուրներից հայտնի որպես Կուզի որդի Կուրտի) գրավում է Դվինը Շադդադյան էմիր Ֆադլ III-ից (1125-1130 թթ.) և իր բռնապետությունը հաստատում այստեղ: Շադին որդիների հետ գաղթում է Իրաք, որտեղ ընդունելություն է գտնում իր հին բարեկամի՝ Մուջահիդ ադ-Դին Բիհրուզի կողմից, որը այդ ժամանակ Իրաքի շիհնան էր, այն է թե Իրաքի ռազմուժի և ոստիկանության գլուխը, պարետը: Բիհրուզը Շադիին նշանակում է Թիկրիթ քաղաքի պարետ, և Շադիի մահվանից հետո նրան այդ պաշտոնում հաջորդում է ավագ որդին՝ Նաջմ ադ-Դինը: 1138 թ. Նաջմ ադ-Դինը և Շիրկուհը անցնում են ծառայության Մոսուլի աթաբեկ Իմադ ադ-Դին Զանգիի մոտ, և շուտով աչքի ընկնելով խաչակիրների և մյուս հակառակորդների դեմ Զանգի աթաբեկի ռազմական ձեռնարկումներում՝ բավական բարձր դիրք են զբաղեցնում ու հետագայում շարունակում իրենց ծառայությունը Իմադ ադ-Դինի որդու՝ Նուր ադ-Դին Զանգիի մոտ: 1168 թ. Նուր ադ-Դին Զանգիի հրամանով Շիրկուհը և Սալահ ադ-Դինը զորքով մեկնում են անկման եզրին կանգնած Ֆաթիմյան Եգիպտոս իբրև թե Ֆաթիմյան խալիֆային օգնելու համար: Շիրկուհը Եգիպտոսում հաջողությամբ

ետ է մղում Երուսաղեմի թագավոր Ամորի I (1163-1174 թթ.) զորքերի հարձակումը և դրանից հետո խալիֆա ալ-Ադիդից (1160-1170 թթ.) կարողանում է կորզել Ֆաթիմյանների վեզիրի պաշտոնը: Սակայն մի քանի շաբաթ անց Շիրկուհը մահանում է, ու վեզիրի պաշտոնը անցնում է նրա եղբորորդուն՝ Սալահ ադ-Դին Այյուբին: Նա վեզիրի պաշտոնում շուտով կարողանում է ձեռքի տակ եղած քչաթիվ զորքերի՝ Նուր ադ-Դին Զանգիի 2000 նուրիյյա և Շիրկուհի 500 ասադիյա ասկարների՝ զինվորների օգնությամբ իրեն ենթարկել թյուրքերից, բերբերներից ու սուդանցիներից կազմված Ֆաթիմյանների բանակը և ռազմավարչական համակարգը: Հետաքրքիր է, որ սուննի Սալահ ադ-Դինը վեզիրի պաշտոնը ստացել էր Ֆաթիմյան իսմայիլական, այն է շիա խալիֆայից: Սալահ ադ-Դինի աճող հզորությունը լարում է հարաբերությունները նրա և իր տիրոջ՝ Նուր ադ-Դին Զանգիի միջև, հատկապես երբ Սալահ ադ-Դինը Եգիպտոսից հավաքվող հարկերի մի փոքր մասն է սկսում ուղարկել Մոսուլ: Սա այն դեպքում, երբ Եգիպտոսում Սալահ ադ-Դինը ըստ երևույթին պետք է ներկայացներ Նուր ադ-Դինին, որի վասալն էր: 1171 թ. Ֆաթիմյան ալ-Ադիդ խալիֆայի մահվանից հետո դադարեցվում է Կահիրեում ուրբաթօրյա գլխավոր աղոթքի՝ խուտբայի ժամանակ հիշատակվել ֆաթիմյան խալիֆան, հակառակը, Սալահ-ադ-Դինի հրամանով խուտբայում հիշատակվում է Աբբասյան խալիֆա ալ-Մուսթադին (1170-1180 թթ.): Սրանով ազդարարվում էր Ֆաթիմյան հարստության վերջը և մյուս կողմից իսմայիլական, շիական Եգիպտոսը անցում էր կատարում իսլամի սուննի ուղղությանը: 1174 թ. Նուր ադ-Դին Զանգին մահանում է: Ֆաթիմյան խալիֆայի 1171 թ. մահվանից ու ֆաթիմյանների դինաստիայի ընդհատումից, ապա իր սյուզերենի՝ Նուր ադ-Դինի Զանգիի 1174 թ. մահվանից հետո Սալահ ադ-Դինը դառնում է ինքնիշխան գահակալ որպես Այյուբյան առաջին սուլթան: 1174 թ. Նուր ադ-Դինի մանկահասակ որդու՝ Մահմուդ Սալիհի իրավունքները գահին պաշտպանելու պատրվակով Սալահ ադ-Դինը փոքրաթիվ զորքով ներխուժում ու առանց դիմադրության հանդիպելու փաստացի գրավում է Դամասկոսն ու Սիրիայի մեծ մասը, ապա 1182 թ. գրավում է նաև Հալեպը: 1186 թ. գրավվում է ողջ Զազիրան, որտեղ Զանգիների և Արթուկյանների վերջին մնացորդները ստիպված են լինում ճանաչել Սալահ ադ-Դինի գերիշխանությունը: 1182-1187

թթ. ընթացող Հյուսիսաֆրիկյան ափեզրի նվաճումը ամփոփվում է 1187 թ. Կայրուան քաղաքի գրավմամբ: 1174 թ. Այյուբյանների գերիշխանությունը հաստատվում է Սուլայհյանների իշխանության տակ գտնվող Եմենում, որը կարևոր օղակ էր Հնդկաստան տանող ծովային առևտրի ճանապարհին: Չնայած նրան, որ Ֆաթիմյան խալիֆայության նախկին տարածքների մեծ մասում շիականությունից հրաժարումն ու սուննիականությանն անցումը եղավ հիմնականում անցնցում, միևնույն է Սալահ ադ-Դինը ստիպված էր լինելու առավել կոշտ դիրքորոշում բռնել Սիրիայի իսմայիլականների դեմ: Այդ պատճառով, և հատկապես երկու անգամ իր վրա կատարված մահափորձերից հետո, նա 1169-1192 թ. երկու արշավանք է կատարում Սիրիա և Լիբանան՝ իսմայիլականների և նրանց առաջնորդ Ռաշիդ ադ-Դին Սինանի դեմ: Պետք է ասել, որ սուննի իսլամի հաղթանակը Այյուբյանների տիրույթներում հանգեցնում է այստեղ սուֆիականության՝ իսլամի միստիկ, կրոնափիլիսոփայական ուղղության հետևորդների օթյակներ կամ օջախներ՝ խանակահների տարածմանը: Սուֆիական այս միաբանությունները, հատկապես վերնախավը, վայելում էին Այյուբյանների աջակցությունը: Նրանք ստանում էին վակուֆային կալվածքներ, դրամական միջոցներ:

Սալահ ադ-Դինը Զանգիների տիրույթներին տիրանալու պայքարին զուգահեռ մերթընդմերթ պատերազմում էր նաև խաչակիրների դեմ: Եգիպտոսը Սիրիային կապող մերձափնյա նեղ գոտին, որը անցնում էր Ակաբա քաղաքի մոտով, սահմանակցում էր խաչակիր կոմս Ռընե դը Շատիյոնի տիրույթներին և անմիջական վտանգի տակ էր գտնվում: 1183 թ. օգտվելով այն հանգամանքից, որ Սալահ ադ-Դինը զբաղված է հյուսիսային Սիրիայի վրա արշավանքով, Ռընե դը Շատիյոնը 16 նավեր մասմաս ցամաքով տեղափոխում է ու նավերը հավաքելով ջուրն իջեցնում Կարմիր ծովում, որից հետո նավատորմով հարձակվում է եգիպտական Այզաբ նավահանգստի վրա: Այստեղ խաչակիրները խորտակում են Մեքքա հաջի ուղևորվող նավը, իսկ ուխտագնացներին սրի են քաշում: Եգիպտական նավատորմի պատասխան հարձակումը կողմերին ստիպում է գնալ հաշտության: 1187 թ. Ռընե դը Շատիյոնը, հերթական անգամ խախտելով հաշտությունը, հարձակվում է եգիպտական քարավանի վրա, որի մեջ էր գտնվում նաև Սալահ ադ-Դինի քույրը,

ու թալանում այն: Այյուբյան սուլթանը փոխհատուցում է պահանջում Երուսաղեմի թագավոր Գի դը Լուզինյանից (1186-1192 թթ.), բայց մերժում է ստանում: Այյուբյան բանակը պատրաստվում է լայնածավալ ռազմական գործողությունների՝ հընթացս ասպատակելով Կրակ և Կրակ դը Մոնրեալ ամրոցների շրջակայքը: 1187 թ. սկզբներին մուսուլմանական բանակը խոշոր հաղթանակ է տանում հոսպիտալիերների միաբանության մեծ մագիստրոս Ռոժե դը Մուլենի գլխավորած խաչակրաց ջոկատի նկատմամբ Նազարեթից հյուսիս-արևելք տեղի ունեցած ճակատամարտում, ապա 1187 թ. մայիսին Հիթթինի (Հաթթին) ճակատամարտում այյուբյան մոտ 20000 բանակը, որը բաղկացած էր 12.000 հեծյալներից և գրեթե նույնքան հետևակից ու նետաձիգներից, ստիպում է խաչակրաց նույնաքանակ բանակին տեղաշարժվել անջրդի ու անապատային վայրեր, ապա ծարավից ու շոգից թուլացած խաչակրաց զորքին ծանր պարտության են մատնում: 1187 թ. հուլիսին Սալահ ադ-Դինը գրավում է Աքքան, ապա Սայդան ու Բեյրութը: 1187 թ. Հալեպից ու Մոսուլից Սալահ ադ-Դինի մեծաթիվ բանակը շարժվում է Երուսաղեմի ուղղությամբ ու սեպտեմբերի 20-ին պաշարում քաղաքը, որը պաշտպանում էր 2000 ասպետներից և 15.000 հետևազորից բաղկացած խաչակրաց բանակը: Եվ չնայած ցուցաբերված համառ դիմադրությանը, երկու շաբաթ չանցած քաղաքի պաշտպանները համաձայնվում են հանձնվել ու հանձնել քաղաքը՝ Սալահ ադ-Դինի կողմից կյանքի ապահովության երաշխավորման պայմանով: Շուտով, իհարկե Այյուբյան սուլթանը փոխում է որոշումը և 40-օրյա ժամկետում փրկագին վճարելու որոշում սահմանում՝ տղամարդկանց համար 10 դինարի, կանանց՝ 5 և երեխաների համար 2 դինարի չափով: Բոլոր նրանք՝ 15-16 հազար մարդ, ովքեր չեն կարողանում փրկագին վճարել, քշվում են ստրկության: Ըստ ավանդույթի, իմանալով Երուսաղեմի գրավման լուրը, Ուրբանոս III պապը հանկարծամահ է լինում: Խաչակիրները անհաջող փորձում են վերագրավել Աքքան 1189 թ.: 1190 թ. այն փորձում են գրավել երրորդ խաչակրաց արշավանքի մասնակից գերմանական կայսր Ֆրիդրիխ I Բարբարոսայի (1152 - 1190 թթ.) զորքերը, բայց վերջինս ճանապարհին խեղդվում է Կիլիկիայի Սալեֆ (Կալիկադնոս, հետագայում հայտնի որպես Գյոքսու) գետում, և ի վերջո 1191 թ.

Աքքան գրավվում է խաչակրաց արշավանքի մյուս երկու միապետերի՝ Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտի (1189-1199 թթ.) և Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ II Օգոստոսի (1180-1223 թթ.) զորքերի կողմից:

1193 թ. Սալահ ադ-Դինի մահվանից առաջ իր տերությունը բաժանում է որդիների միջև. ալ-Ազիզը հաջորդում է հորը Եգիպտոսում 1193-1198 թթ., մյուս երեք որդիները ճանաչում են ալ-Ազիզի գերիշխանությունը: Նրանցից ալ-Ադիլին բաժին է հասնում Միջագետքը, ալ-Աֆդալին՝ Սիրիան, Եմենը, Պաղեստինը, ալ-Զահիրին՝ Հալեպը: Ավագության սկզբունքի համաձայն գահը պետք է անցներ ավագ որդուն՝ ալ-Աֆդալին, սակայն ալ-Ադիլը աջակցում է ալ-Ազիզին, ու սա է դառնում գերիշխան գահակալ: Ալ Ազիզը և ալ-Զահիրը շուտով հարձակվում են, ալ-Աֆդալի տիրույթները խլում նրանից ու աքսորում վերջինիս: Սակայն 1198 թ. ալ-Ազիզը ձիուց ընկնում ու մահանում է: Ալ-Աֆդալը նորից մտնում է քաղաքական պայքարի մեջ ալ-Ադիլի դեմ՝ պաշարելով Դամասկոսը 1199 թ., սակայն ալ-Ադիլը Բիլբեյսի մոտ հաղթանակ է տանում ալ-Աֆդալի նկատմամբ ու 1201 թվականից մինչև իր մահ 1218 թ. Եգիպտոսում իշխում որպես Այյուբյան հաջորդ սուլթան:

Ալ-Ադիլի իշխանության տարիները բնութագրվում են տերության քաղաքական ու տնտեսական ներուժը, երկրի բարօրությունը վերականգնելու ձգտումով, խաղաղության հասնելու փորձերով: Նա փորձում էր նպաստել միջերկրածովյան առևտրի ընդլայնմանն ու իրականացմանը՝ կարծելով, թե առևտուրը կստիպի հակամարտող ուժերին թողնել պատերազմական ձեռնարկումները և դրանով իսկ խաղաղության կհասներ, կկանխվեր նաև հետագա խաչակրաց արշավանքների վտանգը: Սակայն 1204 թ. խաչակրաց զորքերի հարձակումը, 1211 թ. Դիմյաթը գրավելու վերջիններիս փորձը ձախողեցին այս ծրագիրը: Ալ-Ադիլը փորձում է համախմբել իշխանությունը և վերահսկողություն սահմանել Այյուբյան տան բոլոր իշխող ուժերի վրա: 1201 թ. այդ նպատակով նա իր դստերը կնության է տալիս Այյուբյան ալ-Զահիրին, 1207 թ. գրավում է Խլաթը ու վերջ տալիս այստեղ Շահ-Արմենների իշխանությանը, փոխարենը այստեղ 1208 թ. հաստատվում է Այյուբյանների մի ճյուղը: Խլաթում կրկին Շահ-Արմեն տիտղոսի ներքո իշխանության է գալիս Այյուբյան ալ-մալիք ալ-

Աուհադը (Նաջմ ադ-Դին Այյուբ իբն Ահմադ)։ 1218 թ. ալ-Ադիլի մահվանից հետո Այյուբյանների տիրույթներում իշխում էին այս դինաստիայի երեք ներկայացուցիչներ՝ ալ-Մուազզամը Պաղեստինում և անդրհորդանանում, ալ-Աշրաֆ Մուսան՝ Սիրիայում և Ջազիրայում։ Վերջիններիս նկատմամբ գերագահության իրավունքով Եգիպտոսում սուլթան է հռչակվում ալ-Մալիք ալ-Քամիլը։ Վերջինս ստիպված էր դիմագրավելու հինգերորդ խաչակրաց արշավանքը (1217-1221 թթ.) դեպի Եգիպտոս։ Ալ-Քամիլը փորձում է ապահովվել Դիմյաթի (Դամիեթայի) պաշտպանությունը, սակայն 1219 թ. այն գրավվում է, սուլթանը նահանջում ու ամրանում է ալ-Մանսուրայում ու 1221 թ. հաշտության առաջարկ անում խաչակիրներին՝ խոստանալով Եգիպտոսի տարածքը լքելու դեպքում նրանց զիջել Երուսաղեմի թագավորության տարածքը դեպի ծովը տանող միջանցքով։ Առաջարկը ճիշտ է մերժվում է, սակայն ավելի ուշ՝ 1229 թ. ալ-Քամիլի և Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ II Հոհենշտաուֆենի (1220-1250 թթ.) միջև կնքվում է հաշտություն, որով Երուսաղեմը իր շրջակայքով, Բեթղեհեմը և այլ տարածքներ 10 տարով անցնում են խաչակիրներին։ Հետագայում Այյուբյաններն, իհարկե, վերականգնում են իրենց իշխանությունը Երուսաղեմում։ 1244 թ. Այյուբյան աս-Սալիհ սուլթանը խորեզմցի վարձկանների 10.000-ոց բանակով գրավում է Երուսաղեմը, որից հետո վարձկան խորեզմցիները ավերի են ենթարկում քաղաքը։ 1238 թ. ալ-Քամիլի մահվանից հետո գահակալական պայքար է սկսվում նրա որդիների՝ ալ-Ադիլի և ալ-Սալիհի միջև։ Վերջինս շուտով աքսորվում է և բանտարկվում, սակայն վերջիվերջո հենց ալ-Սալիհն (1240-1249 թթ.) է հաղթող դուրս գալիս այս պայքարում՝ 1240 թ. սուլթան հռչակվելով Եգիպտոսում։ Նա փաստացի լինելու էր Այյուբյանների վերջին քիչ թե շատ կարող գահակալը, քանի որ ալ-Սալիհի մահվանից հետո իշխանությունը պայքարի առարկա էր դառնալու իր հարճի՝ Շաջար ադ-Դուրրի և իր որդու՝ ալ-Մուազզամ Թուրանշահի միջև։ Թուրանշահի սպանությունից և Շաջար ադ-Դուրրի կարճ իշխանությունից հետո Այյուբյան տիրույթների մեծ մասն անցնելու էր հենց Այյուբյան ալ-Սալիհի մամլուքների ձեռքը, որոնք սկիզբ էին դնելու նոր հարստության Եգիպտոսում և Սիրիայում։

Այյուբյան տան որոշ ճյուղեր, սակայն սրանից հետո էլ շարունակելու էին իշխել ու պահպանել իրենց տիրույթները: Այսպես, օրինակ, Այյուբյանների մի ճյուղ շարունակում էր իշխել Համայում մինչև 1341 թ., և այս դինաստիայի ներկայացուցիչներից Համայի Այյուբյան էմիր Աբու-լ Ֆիդան հայտնի է նաև որպես պատմիչ իր «Աբու-լ Ֆիդայի պատմություն կամ Թարիխ Աբի-լ Ֆիդա» երկով, որտեղ շարունակում է ծագումով քուրդ մյուս հայտնի պատմիչի՝ Իբն ալ-Ասիրի պատմության շարադրանքը՝ 1231 թ.-ից հասցնելով մինչև 1329 թ.: Այյուբյանների մեկ այլ հարստություն շարունակում է իշխել Հիսն Քեյֆում (Հասանքեյֆ) ընդհուպ մինչև 1524 թ.-ին այստեղ օսմանյան տիրապետության հաստատումը:



Գրականություն

- Eric J. Hanne, Putting the Caliph in His Place: Power, Authority, and the Late Abbasid Caliphate, Madison, N.J.: Farleigh Dickinson University Press, 2007.
- Tarikh Abi-l Fida, vol. 3, 1870.
- Chronicles of the Crusades: Being Contemporary Narratives of the Crusade of Richard Coeur de Lion, transl. by John Allen Giles, Thomas Johnes, London, 1848
- S. Lane Poole, The Coinage of Egypt (A.H. 358-922): under the Fatimee Khaleefehs, the Ayyoobees and the Memlook Sultans, London, 1879.
- Memoires de Jean sire de Joinville; ou, Histoire et chronique du tres-chretien roi Saint Louis, Paris, 1859.
- R. Yeomans, The art and architecture of Islamic Cairo 1st ed. Published. Reading, UK : Garnet Pub. Ltd., 2006.
- Andrew S. Ehrenkreutz, The Jihād and its times, edited by H. Dajani-Shakeel, Ronald A. Messier, Univ. Of Michigan, 2011.
- James E. Lindsay, Daily Life in the Medieval Islamic World, Greenwood Press, 2005.
- G.Leiser, The Madrasa and the Islamization of the Middle East The Case of Egypt, Journal of the American Research Center in Egypt, Vol. 22 (1985), pp. 29-47.
- S. Dadoyan, The Armenians in the Medieval Islamic World, vol. 2, 2013.
- A. Elbendary, Crowds and Sultans, British Academic Press, 2015, p. 117.
- Chronique de Mychelle le Syrien, ed. par J.B. Chabot, tome III, 1905, Paris, p. 175-176.
- Dictionary of the Middle Ages, ed. J. Strayer, vol. a, p. 485.
- Рыжов К., Все монархи мира. Мусульманский Восток. XV-XX вв., Москва, изд. Вече, 2004, с. 502.
- D. Patton, Badr al-Din Lulu, Atabek of Mosul, 1211–1259,Seattle, 1991.
- V. Minorsky, Studies in Caucasian History, Cambridge, 1953.
- H. A. R. Gibb, The Life of Saladin, Oxford, 1973.

- M. C. Lyons and D.E.P. Jackson, Saladin : the politics of the holy war, Cambridge, New York : Cambridge University Press, 1982.
- R. S. Humphreys, From Saladin to the Mongols: the Ayyubids of Damascus, 1193-1260, Albany, 1977.
- Lev Yaacov, Saladin in Egypt, Brill, 1999.
- Салах ад-дин и мамлюки в Египте. Front Cover. Лидия Андреевна . Семенова. Москва, Изд-во Наука, 1966,
- Фильштинский И., История арабов и халифата (750-1517), Москва, 2006.

ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

«Սելջուկ-թուրքեր» ձևով հայտնի թուրքմենական (օղուզական) ցեղերի ծագման վերաբերյալ կան մի քանի տեսակետներ: Հետազոտողների մի մասը (Վ. Բարտոլդ, Ս. Աղաջանով) համարում են, որ նրանք թվով 22 կամ 24 օղուզական ցեղերից մեկի՝ **կընըկ** ցեղից էին ծագում: Ֆրանսիացի պատմաբան Ե. Բլոշեն համարում էր, որ սելջուկները ծագում են մոնղոլական **սալջիուտ** ցեղից, մեկ այլ տեսակետի համաձայն (Ն. Ասիմ), սելջուկները անջատվել էին, առաջացել էին մոնղոլական նայման կամ կերեիտ ցեղից և **քրիստոնեադավան** էին: Այս տեսակետի օգտին կարող է խոսել այն հանգամանքը, որ թուրքերի և մոնղոլների շրջանում ինչպես հայտնի է քրիստոնեությունը (մասնավորապես նեստորական ուղղությունը) բավական տարածում ուներ: Այս տեսանկյունից հետաքրքիր են առաջին սելջուկյան առաջնորդների «աստվածաշնչյան» անձնանունները, օրինակ Սելջուկի 4 որդիները կրում էին հետևյալ անունները՝ Միքայել, Մուսա (Մովսես), Յունուս (Հովհաննես), Իսրայել, և կամ սելջուկյան սուլթանության հիմնադիրներից Չաղրը բեկը կրում էր Դաուդ (Դավիթ) անունը: Կա նաև տեսակետ, համաձայն որի սելջուկները սերում էին խազարներից (Ս. Աղաջանով, Դ. Դանլոպ), կամ ունեին ղրղզական ծագում (Բրոկելման, Գ. Վեյլ): Օղուզ թյուրքական քոչվոր ցեղերի բնակության սահմանները ձգվում էին Սիրդարյա գետի միջին և ստորին հոսանքից մինչև Արալյան ծով և մերձկասպյան հյուսիսային շրջանների միջև ընկած ընդարձակ տափաստանները: Օղուզները 10-11-րդ դդ. արդեն հայտնի էին նաև թուրքմեններ ձևով: Ըստ ավանդույթի, Սելջուկը զինվորական ծառայության է կատարելիս եղել Յանգիքենտ կենտրոնով (ներկայիս Ղազախստանում) օղուզական իշխանության տիրակալի՝ յաբղուի մոտ, ապա ստիպված է եղել փախչել իր որդիների և ցեղի հետ ու հաստատվել Սամանյանների ազդեցության գոտում գտնվող Ջենդ քաղաքում: Համարվում է, որ սելջուկյան ցեղային ավագանին հենց այստեղ 10-րդ դարի 80-ական թվականներին է իսլամ ընդունել, ինչը հասկանալի է. Սամանյանների, Ղազնյանների իսլամական էմիրություններում և կամ թե ընդհանրապես խալիֆայությունում ռազմաֆեոդալական բարձր դիրքի հասնելը սելջուկյան

առաջնորդների համար անհնար կլիներ առանց իսլամադավան լինելու: Լեգենդը «իսլամացնում» է նաև Սելջուկին, ինչը քիչ հավանական է: Սելջուկյանները ռազմական աջակցություն են ցուցաբերում Սամանյան էմիր Նուհ II-ին (975-999 թթ.) 992 թ., երբ թյուրքական մեկ այլ Կարախանյան էմիրությունը անցել էր հարձակման ու սպառնում էր Սամանյանների գոյությանը: Սելջուկների օգնությամբ Նուհը ետ է բերում տիրույթներն ու իշխանությունը, սակայն 999 թ. Կարախանյանների հաջորդ արշավանքը վերջ է դնում Սամանյանների էմիրության գոյությանը: Սելջուկները դրանից հետո գաղթում են նախ Խորեզմ, ապա Խորեզմից Տուղրիլ-բեկը, Չաղրը բեկը և Մուսան սելջուկ-թուրքմենական այս ցեղի մի զգալի մասի գլուխն անցած անցնում են Ամու-Դարյա գետը և գաղթում դեպի Խորասան (ներկայիս Թուրքմենստանի տարածքում) և Ղազնևյան Մասուդ (1030-1040 թթ.) սուլթանից զինվորական ծառայության դիմաց պահանջում իրենց տրամադրել որպես կալվածք Նեսա և Ֆերավե քաղաքները՝ փաստացի գրավելով դրանք: Մասուդը 1035 թ. զորք է ուղարկում անկոչ հյուրերից՝ սելջուկներից ազատվելու համար, սակայն ղազնևյան զորքը պարտություն է կրում: Մասուդը համաձայնվում է Նեսան և Ֆերավեն տրամադրել զինվորական ծառայության դիմաց սելջուկներին, սակայն 4 ամիս անց 1036 թ. սելջուկները պահանջում են իրենց հանձնել նաև Մերվը, Մերախսը և Բավերդը: 1038 թ. Մերախսի մոտ ղազնևյան զորքը կրկին պարտություն է կրում սելջուկներից: Կարճ ժամանակ անց Տուղրիլ-բեկը գրավում է Խորասանի խոշոր քաղաքներից Նիշապուրը, իսկ Չաղրը-բեկը՝ Մերվը: Որոշիչ ճակատամարտը տեղի է ունենում Դանդանական կոչված վայրի մոտ 1040 թ. արաբներից, թյուրքերից, քրդերից ու հնդիկներից բաղկացած ղազնևյան 50.000-անոց զորքը՝ համալրված 300 մարտական փղերով ջախջախվում է սելջուկյանների 20 հազարանոց բանակից և փախչում է մարտի դաշտից[4]: Խորասանը անցնում է սելջուկների տիրապետության տակ: 1042 թ. Տուղրիլի զորքերը գրավում են Գուրգանն ու Թաբարիստանը, ապա

---

[4] Ղազնևյան զորքի թվաքանակը բերված է ըստ Մասուդ սուլթանի պատմագիր Բեյհակիի, սրան հակառակ Սադր ադ-դին Հուսեյնի և իբն ալ-Ասիր պատմիչները ղազնևյան զորքի թիվը հասցնում են 100 հազարի, ինչը կարծում ենք չափազանցություն է:

1045 թ. Ռեյը, 1050 թ. Սպահանը: 1046 թ. սկսած օղուզական զորաջոկատները սկսում են Լուրիստանի, Ահվազի և ապա Իրաքի նվաճումը: Կարճ ժամանակում սելջուկները իրականացնում են Իրանի արևմտյան, կենտրոնական և հարավ-արևելյան հատվածների նվաճումը, 1049 թ. Չաղրը բեկի որդին՝ Քավուրդը գրավում է Քիրմանը: 1042 թ. Տուղրիլ-բեկի 10.000 զորաջոկատը արշավում է Մարվանյանների դեմ: 1054 թ. սելջուկների գերիշխանությունն ընդունում են Ռավվադյանները, ապա Շադդադյանները:

Սելջուկները դավանում էին իսլամի սուննի ուղղությունը, իսկ խալիֆայությունում 945 թվականից փաստացի իշխանությունը գտնվում էր իրանական ծագմամբ շիա Բուիների դինաստիայի ձեռքերում: Բաղդադում իրական իշխանությունը գտնվում էր Բուի զորահրամանատար վեզիր Արսլան ալ-Բասասիրիի ձեռքերում, որը ուրբաթօրյա աղոթքը հրամայել էր կարդալ ֆաթիմյան խալիֆա ալ-Մուսթանսիրի (1034-1094 թթ.) անվամբ և ֆաթիմյանների օգտին քարոզչություն էր իրականացնում: 1048 թ. Բուվեյհյան Աբու Կալիջարի մահվանից հետո Իրաքում իշխանությունն անցնում է նրա որդուն՝ Մելիք ալ-Ռահիմին (1048-1055 թթ.), որը վարում էր ֆաթիմյանների հետ հարաբերությունները սերտացնելու քաղաքականություն և խրախուսում էր շիական՝ իսմայիլականների (յոթ իմամականների) գաղափարների տարածումը: 1048 թ. ալ-Կաիմ խալիֆան (1031-1075 թթ.) Տուղրիլ-բեկին շնորհում է «Ռուքն ադ-դին» (հավատի հենարան) տիտղոսը՝ դրանով օրինականացնելով վերջինիս իշխանության իրավունքը: Առաջ է քաշվում Աբբասյան սուննի, ուղղադավան խալիֆային «շիա հերետիկոսների»՝ Բուիների լծից ազատագրելու գաղափարը: Խալիֆան օգնության խնդրանքով դիմում է Տուղրիլ-բեկին՝ ազատագրելու խալիֆայությունը և իսլամը: Տուղրիլ-բեկն իր զորքերով 1055 թ. դեկտեմբերի 18-ին հայտնվեց Բաղդադի մատույցներում: Սելջուկները առանց ճակատամարտի գրավում են խալիֆաների մայրաքաղաքը: Աբբասյան խալիֆա ալ-Կաիմն իր պալատում մեծ պատիվներով ընդունեց Տուղրիլ-բեկին, նրա գլխին դրեց թագ, կնության տվեց իր դստերը, իսկ մեջքին կապեց գոտի՝ երկու թրերով, և նրան շնորհեց «Արևելքի և Արևմուտքի թագավորի» տիտղոս: Խալիֆայի պաշտոնը ոչ միայն չվերացվեց, նա մնաց իր գահին՝ վերականգնելով ինչպես իր հեղի-

նակությունը որպես մուսուլմանական աշխարհի հոգևոր գերագույն առաջնորդ, այնպես էլ ընդլայնելով քաղաքական իշխանության սահմանները: Ալ-Բասասիրին լքում է Բաղդադը, սակայն Տուղրիլի հեռանալուն պես վերադրավում է քաղաքը ու գրեթե մեկ տարի իշխում Բաղդադում, սակայն Տուղրիլ-բեկի և նրա եղբորորդու՝ ապագա սուլթան Ալփ-Արսլանի միացյալ զորքերի կողմից պարտություն է կրում և Իրաքը վերջնականապես անցնում է սելջուկների տիրապետության տակ: Ինչպես Տուղրիլը, այնպես էլ հաջորդ սելջուկյան սուլթանները անսպայմանորեն ձգտում էին ընդգծել իսլամին իրենց նվիրվածությունը և ներկայանալ որպես իրական մուսուլման գահակալներ: Այս առումով հետաքրքիր են Իբն ալ-Ասիր պատմիչի հաղորդումներն առ այն, որ Տուղրիլը հիջրայի 446 կամ 1054 թ. հաջ կատարելուց հետո ահռելի գումարներ է հատկացնում ու հրամայում վերանորոգել Միրիայից և Եգիպտոսից Մեքքա տանող հաջի ճանապարհները, ու նույն կերպ Մալիքշահն է 1092 թ. կամ հիջրայի 485 թ. Մեքքա է ուղարկում 10.000 գլուխ եղջերավոր կենդանիներ և 10000 դինար որպես սադակա՝ բարեգործություն:

1046-1049 թթ. սելջուկյան զորքերը արշավանքներ են իրականացնում դեպի են Հայաստան ու Անդրկովկաս, ապա արշավում Փոքր Ասիա: «Ունենալով հարուստ անասնահոտեր, - գրում է բյուզանդական պատմիչ Նիկիտա Խոնիատը, - (սելջուկ թյուրքերը) կարիք ունենալով մարգագետինների և արոտավայրերի, լքում են իրենց բնակավայրերը և ամբողջ ընտանիքներով գալիս են Հոռոմների (Բյուզանդիայի) սահմանները»: 1048 թ. արշավանքի ժամանակ սելջուկյան ցեղերին ու զորքերն առաջնորդում էին Տուղրիլ բեկը, Իբրահիմ Յաննալն ու Գթլմուշը: 1054 թ. Տուղրիլ բեգը Ատրպատականի վրայով մի անգամ ևս ներխուժեց Հայաստան և Փոքր Ասիա: 1063 թ. մեծ բանակով Ատրպատական-Ադզարբայջան է գալիս Տուղրիլ-բեկը: Վերջինիս հաջորդած սուլթան Ալփ-Արսլանը (1063-1072 թթ.) 1064 թ. ներխուժում է Հայաստան ու գրավում Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անին: 1067-1068 թվականներին՝ Անիի գրավումից հետո, սուլթան Ալփ-Արսլանը նվաճեց նաև Հայաստանի և Փոքր Ասիայի արևելյան մի շարք այլ շրջաններ, իսկ 1071 թ. օգոստոսին Մանազկերտի ճակատամարտում վճռական հաղթանակ տարավ բյուզանդական կայսր Ռոմանոս IV Դիոգենեսի (1068-1071 թթ.) նկատմամբ:

Ալփ-Արսլանն ընդարձակեց Սելջուկյան պետության սահմանները, որի մեջ մտան ամբողջ Իրանը, Իրաքը, Սիրիայի մի մասը, Հայաստանը, Վիրքը և Աղվանքը: Նրան հաջորդած Մալիքշահի օրոք (1072-1092 թթ.) սելջուկյան պետությունը հասավ իր քաղաքական հզորության բարձրակետին: Սուլթանության տարածքները արևելքում հասնում էին մինչև Կաշգար և Արալյան ծով, իսկ Արևմուտքում՝ Միջերկրական ու Մարմարա ծովերը, հյուսիսային սահմանն անցնում էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով ու Սև ծովով, իսկ հարավում՝ Պարսից ծոցով ու Սիրիական անապատով:

Թե սելջուկյան, և թե հետագայում Իկոնիայի սուլթանությունում սելջուկներն ընդօրինակեցին իրանական (մասամբ էլ բյուզանդական) մոդելը: Իրանական պաշտոնեական ազնվականության շրջանում ամենակարկառուն ու վառ դեմքը սուլթաններ Ալփ-Արսլանի և Մալիքշահի նշանավոր վեզիր, ականավոր պետական գործիչ Աբու Ալի Հասան Թուսին էր (1063-1092 թթ.), որը հայտնի է Նիզամ ալ-Մուլք («Պետության կարգ ու կանոն») պատվանունով: Նա սելջուկյան պետության ողջ քաղաքական վարչության և ֆինանսների կազմակերպիչն էր, ինչպես նաև սելջուկյան սուլթանների արտաքին քաղաքականության ոգեշնչողն ու ուղղություն տվողը: Իր քաղաքական հայացքները և գաղափարները Նիզամ ալ-Մուլքը շարադրել է «Սիասեթ-նամե» (հայ.՝ Կառավարման ձեռնարկ) աշխատության մեջ:

Սելջուկյան սուլթանների ցանկ

Ռուքն ադ-դին վա ադ-դաուլա Տուղրիլ-բեկ իբն Միքայել	1038-1063 թթ.
Ալփ-Արսլան իբն Դաուդ	1063-1072 թթ.
Ջալալ ադ-դաուլա Մալիք Շահ	1072-1092 թթ.
Նասիր ադ-դունյա վա ադ-դին Մահմուդ իբն Մալիք Շահ	1092-1094 թթ.
Ռուքն ադ-դունյա վա ադ-դին Բարքիյարուք	1094-1105 թթ.
Մալիք Շահ II	1105 թ.
Մուհամմեդ Տապար	1105-1118 թթ.
Սիմաղ Սանջար	1118-1153 թթ.

Գրականություն

• Weil G. Geschichte der islamischen Volker von Muhammed bis zu Zeit des Sultan Selim. Stuttgart, 1866.
• E. Blochet, Introduction a l'histoire des Mongols de Fadl Allah Rashid ed din, Leyden- London, 1910.
• N. Asim, Turk tarihi, 1900, Istanbul.
• Dunlop D. M. The History of the Jewish Khazars, Princeton, 1954.
• Rene Grousset, The Empire of the Steppes, Rutgers Uni. Press, 1991.
• Новичев А., История Турции. Эпоха феодализма (XI-XVIII), Л., 1963.
• Агаджанов С.Г. Государство Сельджукидов и Средняя Азия в XI-XII вв. М.: Наука. 1991.
• История Востока; Восток в средние века, отв. Ред. Алаев Л.Б., Ашрафян К.З., Москва, 2002.
• Peacock, A.C.S., Early Seljuq History: A New Interpretation; New York, NY; Routledge, 2010.
• Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 2, Երևան, 2003-2004:
• Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011:
• Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005.
• Ալ-Քամիլ ֆի-թ-թարիխ (Լիակատար պատմություն), Իբն ալ-Ասիր, հատոր 8-9, Բեյրութ, 1979, արաբերեն:

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԻԼԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

XII դարի վերջին և XIII դարի սկզբին մոնղոլական ցեղերի վրա սեփական իշխանությունը հաստատելու ու նրանց միավորելու բորջիգին ցեղի խանի՝ Թեմուջինի ջանքերը ի վերջո պսակվեցին հաջողությամբ, ու նա 1206 թ. ընտրվեց մոնղոլների խաքան կամ մեծ խան՝ Չինգիս խան պատվավոր անվամբ (1206-1227 թթ.): 1209 թ. սկսվեցին Չինգիս խանի աշխարհակալ նվաճումները: Սակայն դեպի արևմուտք և Մերձավոր Արևելք մոնղոլական հետագա արշավանքների իրականացման համար մոնղոլները դեռ ստիպված էին լինելու բախվել Խորեզմշահերի պետության հետ: Վերջինս ընդգրկում էր Միջինասիական տարածաշրջանի մեծ մասը, ներկայիս Աֆղանստանի տարածքը ամբողջությամբ և, համարյա ողջ Իրանը (բացի Խուզիստանից և նիզարական-իսմայիլականների պետության տարածքից (1090-1256 թթ.):

Խորեզմշահերի և մոնղոլների միջև պատերազմի պատրվակ է դառնում հետևյալը. Չինաստանի հետ կատարվող առևտրի և առևտրական ուղիների շուրջ բանակցությունների համար ուղարկված Խորեզմշահ Ալա ադ-Դին Մուհամմեդ Թեկեշի պատվիրակությանը ի պատասխան, Չինգիս խանը պատասխան պատվիրակություն է ուղարկում Թեկեշի արքունիք: Պատվիրակությունը բացի մոնղոլներից կազմված էր խորեզմշահի պատվիրակության Չինգիս խանի կողմն անցած առևտրականներից՝ թվով 450 մարդ: Սակայն Օտրարի տիրակալ Ինալչուկ Գայըր խանը, հնարավոր է հենց Թեկեշի դրդմամբ, թալանում է մոնղոլական պատվիրակությանն ու սրի քաշում պատվիրակության անդամներին: Չինգիս խանը նոր պատվիրակությամբ պահանջում է Թեկեշից իրեն հանձնել Ինալչուկին, բայց ի պատասխան այս պահանջին՝ Թեկեշի հրամանով սպանում են մոնղոլական պատվիրակությունը գլխավորող Քաֆրաջ Բուղրային: Խորեզմշահի և մոնղոլների միջև սկսված պատերազմում հաղթանակը ակնհայտորեն վերջինների կողմն էր: Մեկը մյուսի հետևից մոնղոլները գրավում են Խորեզմշահերի տերության գլխավոր քաղաքները՝ Օտրարը, Խոջանդը, Չաչը (Տաշքենտ), Բուխարան, Մերվը, Սամարղանդը, Բալխը, Հերաթը, Նիշապուրը,

Ուրգենչը, ավերում, թալանում իսկ բնակչության հիմնական մասին սրի քաշում: 1220 թ. Սամարղանդը գրավելուց և ավերելուց հետո Խորեզմշահերի պետության վերջնական նվաճումն իրականացնելու, Թեկեշի ապա նրա որդու՝ սուլթան Ջալալ ադ-Դին Մանգբուրնիի (կամ Մենգուբերդի) հետ վերջնական հաշվեհարդար տեսնելու համար Չինգիս խանը նախաձեռնում է նոր արշավանք: Ըստ պատմիչ Ալա ադ-դին Աթա Մալիք Ջուվեյնիի, այդ նպատակով կազմավորվում են երեք ընտիր թումաններ՝ տասհազարյակներ, որոնք գլխավորում էին առաջապահ թումանով Ջեբեն (Ջիրգոդայ), որին հետևում էր մոնղոլական բանակի անհաղթ հրամանատար Սուբուդայը (նաև Սուբուգատայ կամ Սուբեետեյ), և Տողուչարը: Ընկրկելով մոնղոլական զորքերի ճնշմանը՝ Մուհամմեդ Թեկեշը ապաստանում է Մազանդարանում, ապա ամրանում է Աշուրադա կղզում, որտեղ և մահանում է 1220 թ. դեկտեմբերի վերջին կամ 1221 թ. հունվարին՝ մինչ այդ ստանալով լուր այն մասին, որ Ջեբեն տիրացել է իր գանձարանին և հարեմին: Ջեբեի և Սուբուդայի զորքերը (Տողուչարը սպանվել էր մարտում կամ մեկ այլ վարկածի համաձայն ետ էր կանչվել Չինգիս խանի կողմից և մահապատժի ենթարկվել) 1221 թ. ներխուժում են Շիրվան, ապա շարժվելով դեպի արևմուտք ու Շամքորի մոտ պարտության մատնելով Գեորգի Լաշայի և Իվանե Զաքարյանի (1213-1223 թթ.) գլխավորած հայ-վրացական բանակին, 1221 թ. հոկտեմբերին գրավում ու ավերում են Բայլականը, ապա Շամախին՝ հասնելով մինչև Բաքու: Մոնղոլները շարժվեցին դեպի Դերբենդ, սակայն չկարողանալով գրավել քաղաքը՝ դժվարանցանելի կիրճերով կարողացան անցնել լեռնաշղթան և, 1222 թ. հաղթահարելով նաև ալանների ու ղփչաղների դիմադրությունը, հեռացան: 1225 թ. Այսրկովկաս արշավեց նաև խորեզմշահ Ջալալ ադ-դինը: 1231/1232 թ. սկսած՝ Այսրկովկասը կրկին ենթարկվեց մոնղոլների արշավանքներին: Արդեն XIII դարի 50-ական թվականներին մոնղոլ նվաճողների ձեռքերում էին գտնվում Խորասանը, Սիստանը, Մազանդարանը, Պարսկական Իրաքը (Կենտրոնական Իրան) և Ատրպատականը:

1251 թ. մոնղոլական ցեղային առաջնորդների մեծ ժողովում՝ ղուռուլթայում, որտեղ մեծ խանի գահը ստանձնեց Մունգքե-ղաանը (1251-1259 թթ.), որոշվեց արագացնել Մերձավոր և Հեռավոր

Արևելքում մոնղոլների կողմից դեռևս չնվաճված հողերի գրավումը: Մունքե-ղաանի եղբոր՝ Հուլաղու խանի գլխավորությամբ մի ուժեղ զորամիավորում սկսեց մոնղոլական մերձավորարևելյան արշավանքը: Գրիգոր Ակներցու հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Հուլաղուի բանակում հաշվվում էր 70 հազար զինվոր, սակայն ժամանակակից հետազոտողների կարծիքով զորքի թիվը կարող էր հասնել մինչև 150.000-ի՝ հենվելով այն փաստի վրա, որ Հուլաղուի այդ բանակի թումանների՝ տասհազարյակների հրամանատարների թիվը հասնում էր 15-17: 1253 թ. այդ բանակը դուրս եկավ Ղարաղորումից և Թուրքեստանի վրայով սկսեց շարժվել դեպի Իրան: Հուլաղու խանը իր առաջին հարվածն ուղղեց նիզարիականների դեմ (այլ կերպ հայտնի ասասասիներ, բատինիներ): 1256 թ. հունվարում ստանալով Սարթախից՝ Բաթու խանի քրիստոնյա որդուց, Քուհիստանում՝ Էլբուրսի լեռներում մոնղոլական զորքերը պաշարեցին իսմայիլական/նիզարիական ամրոցները և մեկը մյուսի հետևից գրավեցին դրանք: Նրանք գրոհով վերցրին նաև Ալամութ ամրոցը: Չնայած ցուցաբերվող կատաղի դիմադրությանը՝ մոնղոլները ոչնչացրին այն: Հուլաղուն վերջնագիր է ներկայացնում նիզարականների առաջնորդ իմամ Ռուքն ադ-Դին Խուրշահին: Հարկ է նշել, որ նիզարականների շարքերում Հուլաղուն ուներ աջակիցներ՝ ի դեմս մոնղոլական ապագա վարչատնտեսական հումակարգի կերտողներից Նասիր ադ-Դին Թուսիի և Մուվաֆֆիկ ադ-Դաուլայի՝ ապագայի իլխանական մեծ վեզիր և պատմիչ Ռաշիդ ադ-Դինի պապու: Հուլաղուի զորքերը գրոհում են նաև Մեյմունդիզ ամրոցը և Խուրշահը ստիպված հանձնվում է, ապա գերեվարվում և ուղարկվում Մունգքե խանի մոտ, ճանապարհին՝ սպանվում: Նիզարիների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո Հուլաղուն նախաձեռնում է Բաղդադի գրավումը և 1257 թ. սեպտեմբերին վերջնագիր է ուղարկում խալիֆա ալ-Մուսթասիմին (1242-1258 թթ.): Խալիֆան փաստացի մերժում է Հուլաղուի վերջնագիրը, և ճիշտ չգնահատելով իրավիճակը՝ ըստ արժանվույն չի պատրաստվում դիմագրավելու մոնղոլական զորքերից սպառնացող վտանգը՝ հոգ չտանելով քաղաքի ամրությունների նորոգման և ամրացման, և կամ զորահավաք կատարելու մասին:

1258 թ. հունվարին մոնղոլական զորքերը Հուլաղուի, Բայջուի, օյրատ Արղունի, Մենգու Թեմուրի, Քիթբուղայի և այլ նոյոնների

հրամանատարությամբ, հայոց, վրաց և Անտիոքի խաչակրաց զորքերի աջակցությամբ, պաշարում են Բաղդադը: Միայն այդ ժամանակ խալիֆան փորձ արեց բանակցությունների մեջ մտնելու Հուլաղուի հետ, բայց արդեն ուշ էր: Մոնղոլական խանը հրաժարվեց խալիֆայի հետ բանակցելուց: Նույն թվականի փետրվարի 10-ին մոնղոլական զորքերը ներխուժեցին Բաղդադ, որը հրկիզվեց, թալանվեց, իսկ բնակչությունից նվազագույն տվյալներով միայն մոտ 90.000-ը (աղբյուրների և հետազոտողների մի մասը կոտորված բնակչության թիվը հասցնում է 800.000-1000000-ի) սրի քաշվեց: Բաղդադի քրիստոնյաները Հուլաղուի կնոջ՝ քրիստոնյա Դողուզ կամ Տոնղուզ խաթունի միջնորդությամբ զերծ մնացին կոտորածներից: Խալիֆայի գանձարանը Հուլաղուն, ըստ Կիրակոս Գանձակեցու, բարձեց 3600 ուղտերի վրա, իսկ մնացյալ մասը, որ չկարողացան տանել, կնքեց իր մատանիով և թողեց: 1258 թ. փետրվարի 20-ին Աբբասյան վերջին խալիֆա ալ-Մուսթասիմը մահապատժի ենթարկվեց: Նրա հետ սպանվեցին Աբբասյան ընտանիքի անդամները, պաշտոնյաները, կադիները՝ թվով 300 մարդ:

Բաղդադի գրավման և Աբբասյան խալիֆայության կործանման հարցի առումով հետաքրքիր է մեկ այլ հանգամանք. դեռևս 1210 ական թվականներին Աբբասյան խալիֆա ալ-Նասիր Լիդինալլահը (1180-1225 թթ.), փորձելով կանխել Բաղդադը գրավելու խորեզմշահ Մուհամմեդ Թեկեշի 1215 թ. նախաձեռնությունը, ըստ քուրդ պատմիչ իբն ալ-Ասիրի և իրանցի պատմիչ Միրխոնդի, պատվիրակություն էր ուղարկել մոնղոլների՝ մասնավորապես Թուրքեստանի ապագա փոխարքա Մահմուդ Յալավաչի մոտ և խնդրել մոնղոլների զինական աջակցությունն ընդդեմ խորեզմշահերի: Մի կողմ թողնելով այն հարցի քննարկումը, թե ի վերջո մոնղոլները աշխարհակալ տերություն ստեղծելու նպատակով, թե խալիֆայի նախաձեռնությամբ սկսեցին պատերազմել խորեզմշահերի դեմ թե ոչ, հետաքրքիր է արձագրել, որ մոնղոլները ոչ միայն խորեզմշահերի տերության, այլև հենց խալիֆայության վերջը դրեցին:

Հուլաղուի զորքերը շարունակում են առաջխաղացումը 1260 թ. գրավելով նախ Հալեպը, ապա 1260 թ. մարտի 1-ին Քիթբուղա նոյոնը Կիլիկիայի հայոց արքա Հեթում I-ի (1226-1270 թթ.) և Անտիոքի դուքս Բոհեմունդ IV-ի (1251-1268/1275 թթ.) զորքերի աջակցութ-

յամբ հաղթական մուտք են գործում Դամասկոս: Մոնղոների հետագա առաջխաղացումը կանխում են մամլուքները: 1260 թ., հավանական է գարնանը, Հուլաղուն հիմնական զորքերը տեղափոխում է Իրան և Այսրկովկաս ու ինքը մեկնում մասնակցելու դուռուլթային՝ մոնղոլական ավագանու ժողովին՝ նոր մեծ խանի ընտրությանը՝ Քիթբուղա նոյոնին թողնելով 10-12.000 զորք: 1260 թ. սեպտեմբերի սկզբին Ակրայից հարավ-արևելք ընկած Այն-Ջալուտ վայրում մամլուքյան զորքը Կուտուզի հրամանատարությամբ դժվարին հաղթանակ է տանում մոնղոլների նկատմամբ, Քիթբուղան սպանվում է: Սրան հաջորդում է մոնղոլների մեկ այլ պարտություն նույն թվականի դեկտեմբերին, երբ մոնղոլական 6000-անոց ջոկատը պարտություն է կրում Հոմսի, Համայի Այյուբյան և մամլուքների միացյալ ուժերի կողմից: Մեծ կարևորություն ուներ հատկապես Այն-Ջալուտի ճակատամարտը, որտեղ մուսուլմանական պետական կազմավորումներից միակ կարող ուժը՝ մամլուքյան սուլթանությունը, կանխեց մոնղոլների՝ իսլամին սպառնացող վտանգը:

Իրաքում և Միրիայում իր նվաճումներից հետո Հուլաղուն փաստացի (1261-1265 թթ.) ստեղծեց մոնղոլական նոր ուլուս կամ պետություն, որը 1261 թ. ճանաչվեց ղաանի կամ մեծ խան Խուբիլայի կողմից: Վերջինս Հուլաղուին շնորհեց նաև «իլ-խան» (իլ՝ ցեղ, ուլուս), «ուլուսի խան» տիտղոսը: Այստեղից էլ իլխանների կամ Հուլաղույանների պետություն (1256-1353 թթ.) անվան առաջացումը: Հյուսիսում Կովկասյան լեռնաշղթան հանդիսանում էր նրա սահմանը Ոսկե Հորդայի հետ, այնուհետև իր մեջ ներառում էր ողջ Իրանը, Մերվի օազիսը, Հերաթի շրջանը և ներկայիս ամբողջ Աֆղանստանը (բացի Բալհի շրջանից, որը Մավերանահրի հետ միասին մտնում էր Չաղաթայի ժառանգորդների ուլուսի մեջ), Արաբական Իրաքը՝ Բաղդադ քաղաքով հանդերձ, Շիրվանը, Հայաստանը, Վրաստանը, Ջազիրան (Վերին Միջագետքը) և Ռումի (Փոքր Ասիայի) արևմտյան մասը՝ մինչև Կըզըլ-Իրմակ գետը: Իլխանական պետության մայրաքաղաքը նախ Մարաղան էր, իսկ ավելի ուշ՝ Թավրիզը և Սուլթանիեն:

Պետք է նշել, որ Հուլաղու խանը հանդուրժողական կրոնական քաղաքականություն էր վարում քրիստոնյաների ու բուդհայականների նկատմամբ: 1265 թ. Ոսկե հորդայի խան Բերքեն, օգտվելով

Հուլաղույի մահվան հանգամանքից՝ (1265 թ. փետրվար) արշավեց Շիրվան և հասավ մինչև Կուր գետ: Ոսկե Հորդայի զորամասերը կողոպտեցին Շիրվանը, գրավեցին նաև Թիֆլիսը: Կուրից հարավ՝ Առանում (Հայկական Աղվանք՝ Արցախ և Ուտիք), իլխանական կառավարիչ էր նշանակված Մենգու Թեմուրը՝ Աբաղա խանի եղբայրը: Բերքե խանը կայանել էր Գարեջի լեռներում, որտեղից նա այլևս չհամարձակվեց շարժվել առաջ և վերադարձի ճանապարհին հիվանդությունից մահացավ:

Հուլաղուին հաջորդում է որդին Աբաղա խանը (1265-1282 թթ.), ում օրոք շարունակվեցին ռազմական գործողությունները Ոսկե Հորդայի դեմ: Մոնղոլական այդ երկու պետական կազմավորումների միջև պայքարը շարունակվեց մոտ հարյուր տարի, որի ընթացքում նրանց միջև սահմանն անցնում էր մերթ Դերբենդի և մերթ Բաքվի մոտով: Շիրվանը գրավվեց իլխանների կողմից, և Ախսիտան II-ը, ճանաչելով իլխանների գերիշխանությունը, փրկեց Շիրվանը ավերածություններից:

1280 թ. իլխանական զորքերը նորից գրավեցին ու ավերեցին Հալեպը: Աբաղա խանը փորձում է դաշնակցային հարաբերություններ հաստատել Քրիստոնյա Եվրոպայի հետ՝ ընդդեմ մամլուքների: Եվրոպայի հետ դաշնակցելու այս միտումը իլխանների արտաքին քաղաքականության մեջ պահպանվելու էր ընդհուպ մինչև Օլջեյթու խանի կառավարման շրջանը: Աբաղայի դեսպանները 1274 թ. հայտնվեցին Լիոնում, 1277 թ.՝ Հռոմում, մյուս կողմից խանը այս նպատակով նամակագրություն էր վարում Անգլիայի Էդուարդ I թագավորի (1272-1307 թթ.), Հռոմի պապեր Կլեմենտ IV-ի, Գրիգոր X-ի (1274 թ.) և Նիկոլայոս III-ի հետ: Մյուս կողմից Աբաղան, շարունակելով մոնղոլներին հատուկ կրոնական հանդուրժողականության քաղաքականությունը, բավական մեղմ քաղաքականություն էր վարում հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ:

Ծանր հիվանդությունից հետո 1282 թ. գարնանը Աբաղան մահանում է, ու նրան երկու տարով գահին հաջորդում է եղբայրը՝ Ահմադ Թեքուդերը: Նա փորձում է կարգավորել հարաբերությունները մամլուքների հետ և իսլամ է ընդունում: Սակայն Ահմադի իշխանությունից դժգոհ մոնղոլական ավագանու գլուխն անցած՝ Աբաղայի որդի Արղունը գահընկեց է անում Թեքուդերին ու մահապատժի ենթարկում նրան: Գահն անցնում է Արղուն խանին (1282-

1291 թթ.), ով շարունակում է Եվրոպայի և քրիստոնյան աշխարհի հետ դաշնակցելու միտումը, և ավելի հայտնի է իր քրիստոնեամետ քաղաքականությամբ: Արղուն խանի վեզիր հրեա Սա'դ ադ-դաուլայի նախաձեռնությամբ պետական և վարչական ապարատից դուրս են մղվում բոլոր մուսուլմանները, կարևորագույն պաշտոնները հիմնականում վստահվում էին հրեաներին և քրիստոնյաներին: Արղուն խանի և իր վեզիրի հակաիսլամական այդ թշնամական դիրքորոշումը մասնավորապես մուսուլմանական վերնախավի մոտ մեծ դժգոհություն առաջացրեց, իսկ Արղունի մահվանից հետո խանի այս քաղաքական կուրսի հակառակորդները հաշվեհարդար տեսան Սա'դ ադ-Դաուլայի հետ: Արղունի օրոք Ոսկե Հորդայի պատերազմը շարունակվում էր: Տեղեկանալով Ջուչիների հինգհազարանոց հեծյալ զորքի Դերբենդ ներխուժման մասին՝ 1288 թ. Արղունը ժամանում է Շամախի և այնտեղից զորք ուղարկում թշնամուն դիմակայելու, ապա վերագրավում է Դերբենդը: Ընդհարումներ տեղի ունեցան նաև 1290 թ., որոնք կրկին ավարտվեցին Արղունի ուղարկած զորքի հաղթանակով:

Արղունին հաջորդում է Գայխաթու խանը (1291-1295 թթ.), որի օրոք պետական գանձարանը ոսկով հարստացնելու համար վեզիր Սադր ադ-դին Զենջանիի խորհրդով իրականացվում է դրամական բարեփոխում: Ոսկեդրամների փոխարեն Չինաստանի օրինակով շրջանառության մեջ են դրվում հատուկ դրամահատարանում՝ չառիխանայում հատվող թղթադրամներ՝ **չառ**՝ մեկից (մեկ այլ վարկածով քառորդ դինարից) մինչև տասը դինար արժեքով՝ չինական գրություններով և շահադայի՝ իսլամական միաստվածության վկայության տողերով: Սակայն այս բարեփոխումը հաջողություն չի ունենում նույնիսկ երբ պարտադրում են առևտրականներին ոսկեդրամները փոխանակել թղթեդրամներով, և իլխանության խոշոր քաղաքներում բռնկված ընդվզումները ի վերջո հանգեցնում են բարեփոխման չեղարկմանը: Գայխաթուի դեմ 1295 թ. ապստամբություն է բարձրացնում Հուլաղուի թոռներից Տարաղայի որդի Բայդուն, որի հրամանով իլխանը բանտարկվում է Թավրիզում, որտեղ և մահապատժի է ենթարկվում: 1295 թ. մարտին գահ է բարձրանում Բայդուն, ով գահակալում է ընդամենը հինգ ամիս, և գահընկեց է արվում Արղունի կրտսեր եղբոր՝ Ղազանի հրամանով:

Բայդուն միակ իլխանն է, ում վերաբերյալ ժամանակի քրիստոնեական աղբյուրները (Ստեփանոս Օրբելյան, Հեթում պատմիչ, Մարկո Պոլո, Մարինո Սանուդո Տորսելո, Աբուլ Ֆարաջ) միաբերան պնդում են, որ եղել է քրիստոնյա և պարանոցին խաչ է կրել, և նույնիսկ արգելել է իսլամ դավանել իր տիրույթներում: Բայդուն ձերբակալվում և սպանվում է Ղազանի կողմն անցած մուսուլման էմիր Նովրուզի կողմից: Իշխանության եկած Ղազան Մահմուդ խանը 1295 թ. հունիսի 19-ին Լարի Դեմավենդի իր ամրոցում Նովրուզի դրդմամբ իսլամ է ընդունում, և, կարելի է ասել, դրանից հետո իսլամը դառնում է իլխանության պաշտոնական կրոնը: Սակայն դա չէր նշանակում, թե մուսուլման Ղազան խանի կրոնական քաղաքականությունը այլահավատների նկատմամբ փոփոխություն էր կրելու. Ղազան խանը շարունակում է հովանավորել և մեղմ քաղաքականություն վարել քրիստոնյաների նկատմամբ, որում նաև կարելի է տեսնել հայերի, վրացիների, քրիստոնյա Եվրոպայից ակնկալվող օժանդակությունը մամլուքների դեմ շարունակվող պատերազմում:

Իլխան Մահմուդ Ղազան խանը նախաձեռնեց մի շարք բարեփոխումներ, քանի որ իլխանությունը կանգնել էր սոցիալ-տնտեսական լուրջ ճգնաժամի առաջ: Նրա բարենորոգչական քաղաքականության գործնական իրականացման գործում չափազանց կարևոր դեր է խաղացել Ղազան խանի մեծ վեզիր և սահիբ-դիվան Ռաշիդ-ադ-դին Համադանին (1294-1317 թթ.), ում և վերագրվում է բարենորոգումների ծրագրի հեղինակումն ու իրականացումը: XIV դարի սկզբին Ղազան խանը փորձում է նոր արշավանքով ամրապնդել մոնղոլական տիրապետությունը Շիրվանում և Դերբենդում: 1301 թ. մոնղոլական զորքերի հավաքատեղի նշանակելով Արցախը՝ այնտեղից շարժվում է դեպի Շիրվան ու Լեզգիստան: Ղազան խանի զորքերի Դերբենդին մոտենալուց հետո Ջուչիի Ուլուսի տիրակալ Թողթան և սահմանակից կառավարիչները հեռանում են սահմանամերձ տարածքներից: Դաղստանյան ամիրաները, որոնք դեռևս պահպանում էին իրենց անկախությունը, ստիպված են լինում իրենց հպատակությունը հայտնել մոնղոլ խանին:

Ղազանին հաջորդում է Արղուն խանի երրորդ որդին՝ Օլջեյթու Մուհամմեդ Խուդաբենդեն (1304-1316 թթ.), ով մինչև 1306/1307 թթ. իսլամ ընդունելը դավանում էր քրիստոնեություն (դրանում

մեծ էր իր մոր Ուրուք կամ Արքաու խաթունի դերը) և ի պատիվ Նիկոլայոս IV պապի՝ Օլջեյթուն կրում էր Նիկոլայոս անունը: Կրոնական համոզմունքները մի քանի անգամ փոխած այս իլխանը իր քաղաքականության մեջ հիմնականում հետևում էր Ղազանի օրինակին, և նույնիսկ յառլիկ՝ հրովարտակ էր արձակել, որով գործող էին համարվում Ղազանի ընդունած բոլոր օրենքներն ու որոշումները: Օլջեյթուն իսլամ ընդունելուց հետո մի կարճ ժամանակով վերականգնում է ջիզյայի գանձումը: 1307 թ. իլխանը մայրաքաղաքը տեղափոխում է Սուլթանիե: Զգտելով մամլուքների դեմ շարունակվող պայքարում ամրապնդել հարաբերությունները Եվրոպայի հետ՝ Օլջեյթուն Բուսկարելո դե Գիզոլֆիի գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում Եվրոպա: Հայտնի են Օլջեյթուի նամակները Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկին, Անգլիայի թագավոր Էդուարդ II Երկարոտնին և Կլիմենտ V պապին: Օլջեյթուին կարճ ժամանակով հաջողվում է շահել Դամասկոսի և Տրիպոլիի տերերի աջակցությունն: Մինչև 1313 թ. նա կարողանում է մասամբ վերահսկողություն սահմանել Միրիայի վրա: Օլջեյթուն 1312 թ. զորք է ուղարկում նաև Մոսուլի ուղղությամբ, բայց զինվորների մեջ տարածված հիվանդություններն ու պարենի հետ կապված խնդիրները տապալում են նաև այս նախաձեռնությունը: Լարվում են հարաբերությունները նաև Ջաղաթայի ուլուսի հետ: 1314 թ. և 1316 թ. իլխանության վրա են արշավում Քյոփեք և Յասավուր խաները: Օլջեյթուի մահվանից հետո 1316 թ. վերջին կամ ավելի հավանական է 1317 թ. սկզբին նրան հաջորդում է որդին՝ Բու Սայիդ խանը (տարածված է Աբու Սայիդ ձևը, որը ճիշտ չէ): Բու Սայիդի կառավարման առաջին փուլում՝ մինչև 1320-ականների կեսերը, իրական իշխանությունը կենտրոնացած էր ուլուսի էմիր Չոբանի ձեռքերում, ով սերում էր թյուրքական սուլդուզ ցեղից: Չոբանը բարեկամացել էր նաև իլխանական տան հետ՝ 1319 թ. կնության առնելով Օլջեյթուի դստերն ու Բու Սայիդի քրոջը՝ Սաթի-բեկին: Էմիր Չոբանի, ինչպես և նրա որդիների իշխանությունը տարածվում էր ողջ իլխանության վրա՝ Մահմուդին բաժին էր հասել Վրաստանը (իրականում սա ձևական էր, քանի որ վրաց արքան՝ Գեորգի Պայծառը, բարեկամացել էր Չոբանի հետ և կարելի է ասել թոթափել իլխանների գերիշխանությունը), Դիմաշկ խոջան իշխում էր Ազարբայջանի և Արաբական ու Պարսկական Իրաքների վրա, Դամիրթաշը՝ Ռումի

տիրույթների վրա: Դամիրթաշը փաստացի անկախություն էր վայելում, նույնիսկ իր անվամբ սկսում է դրամներ հատել, ինչը փաստում էր իր ինքնիշխանության և անկախության մասին: Չոբանը ինքն է Բու Սայիդի մոտ տանում իլխանների իշխանության դեմ ապստամբած որդուն և խնդրում պատժել, բայց չգիտես ինչու Բու Սայիդը ներում է Դամիրթաշին: Իլխանների արքունիքում հատկապես մեծ ազդեցություն ուներ Դիմաշկ խոջան: Ըստ ալ-Ահրի պատմագրի, իլխանության գերագահ իշխողը՝ Բու Սայիդը հայտնվել էր այնպիսի նվաստացուցիչ և տկար վիճակում, որ Դիմաշկ խոջան կարգադրել էր որ իլխանին ի կերակուր մատուցեն առավելագույնը օրական երկու հավ: Դիմաշկ խոջայի համարձակությունն ու ինքնագլխությունը հասնում է նրան, որ սկսում է իլխանի հարեմ այցելել: Խոնդեմիր պատմիչը հիշատակում է Բու Սայիդի հարեմում հոր՝ Օլջեյթուի կանանցից մեկի և Դիմաշկ խոջայի սիրավեպի մասին: 1327 թ. իլխանն օգտագործում է այս պատեհ առիթն ու երբ Դիմաշկ խոջան հերթական այցելությունն է կատարում հարեմ, նրա հետևից պատժիչ ջոկատ է ուղարկում: Չոբանի որդուն հաջողվում է փախչել, սակայն վրա է հասնում իլխանի էմիրներից Լուլու աղան ու գլխատում Դիմաշկ խոջային: Բու Սայիդը 1327 թ. զորահավաք է կատարում ու արշավում Չոբանի ու նրա որդիների դեմ՝ հրամայելով ամբողջ ընտանիքը սրի քաշել: Չոբանը եղբոր մոտ է ուղարկում կնոջը՝ Սաթի-բեկին, և նախապատրաստվելով զինված առճակատման՝ զուգահեռաբար փորձում է իլխանի գթությանն արժանանալ ու հարթել տարաձայնությունները, բայց՝ անարդյունք: Չոբանը փախչում ու ապաստան է հայցում Հերաթի տիրոջից՝ Ղիյաս ադդին Քուրտից: Բայց ինչպես իրանցի պատմիչն է գրում, Չոբանի հետ Հերաթ է հասնում նաև իլխանի հրահանգը՝ Չոբանին սպանելու մասին: Ղիյաս ադ-դինը համաձայնում է Չոբանի խնդրանքին և գլխատելու փոխարեն հրամայում է գաղտնի խեղդամահ անել նրան: Չոբանի տան հետ հաշվեհարդարից հետո էլ, սակայն, իլխանության ներքաղաքական կյանքը զերծ չի մնում ցնցումներից: Պատճառն այն էր, որ երիտասարդ իլխանը սիրահարվում է իր ազդեցիկ էմիրներից մեկի՝ մոնղոլական ջալայիր ցեղից սերող Շեյխ Հասանի կնոջը՝ Բաղդադ խաթունին: Բու Սայիդը հրահանգում է գլխավոր կադի Մուբարեք շահին հնարավոր հնարքներն օգտագործել, որպեսզի համոզի Հասանին հրաժարվել իր կնոջից հօգուտ

իլխանի: Հասանը սկզբում համառում է, բայց հետո զիջում է մահվան սպառնալիքի տակ և դրա դիմաց ստանում Ռումի փոխարքայի պաշտոնը: Բուսայիդը կնության է առնում Բաղդադ խաթունին, ինչը և դառնում է իլխանի մահվան պատճառը: 1335 թ. իլխանը արշավանք է նախաձեռնում Ոսկե Հորդայի Ուզբեկ խանի դեմ, բայց նույն տարում մահանում է: Խոնդեմիրի հաղորդմամբ Բու Սայիդին թունավորել էր Բաղդադ խաթունը, քանի որ իլխանը կրկին ամուսնացել էր՝ կնության առնելով Դիմաշկ խոջայի դստերը՝ Դիլշադ խաթունին:

Չոբանի տան և Ջալայիրյան Հասանի հետ կապված այս խարդավանքները, սակայն, զուտ ներքաղաքական բնույթ չկրեցին, և ուղղակի պատճառ դարձան իլխանության անկման համար: Իլխանի մահվան լուրն առնելով Ջալայիրյան Հասանը (Բուզուրգ՝ մեծ մականվամբ) գրավում է Բաղդադն ու իր իշխանության տակ վերցնում Իրաքը: Հետագայում Չոբանյանները (ի դեմս իրեն Չոբանի թոռը հայտարարած Հասանի (Քյուչուկ՝ կրտսեր մականվամբ), ալ-Մալիք ալ-Աշրաֆի և Ախիջուկի) և Ջալայիրյանները իլխանությունը բաժանելու էին ազդեցության գոտիների, ու իրար դեմ հակամարտելով՝ մեկը մյուսի հետևից գահ էին բարձրացնելու խամաճիկ իլխանների, որոնք որևէ էական դեր չէին խաղալու: Բու Սայիդին հաջորդում է Արփա Քեունը, ով սերում էր ոչ թե Հուլաղյան տնից, այլ Հուլաղուի եղբորից՝ Արիկ Բուղայից: Նա իշխում է ընդամենը 6 ամիս և ըստ հայկական աղբյուրների սպանվում այն պատճառով, որ քրիստոնեություն էր դավանում: Խոնդեմիր և ալ-Ահրի պատմիչները Արփային նկարագրում են որպես բանիմաց, կիրթ գահակալի: Հնարավոր է, որ Արփայի սպանության իրական պատճառը Մուսա խանի՝ հաջորդ իլխանի հավակնություններն էին: Մուսա խանը ևս կարճ է կառավարում և 1336 թ. Ջալայիրյանների աջակցությամբ գահ է բարձրանում Մուհամմեդ խանը ու իշխում մինչև 1338 թ.: Ջալայիրյաններին հակառակորդ Չոբանյանները 1339 թ. գահ են բարձրացնում Սաթի-բեկին, հետո՝ Սուլեյման խանին, որն ամուսնանում է Սաթի-բեկի հետ (1339-1344 թթ.): Իլխանության անկման այս վերջին փուլում գահ են բարձացվում նաև Անուշիրվան (1344-1355 թթ.) և Թողա Թիմուր (միայն Խորասանում) խանները: 1350-ական թվականների կեսերին իլխանությունը փաստացի դադարում է գոյություն ունենալ:



Հայտնաբերված տեղանունների տեսակները

- Ala ad-din 'Ata-Malik Juvayni, Genguis khan, the history of world conqueror, by J. A. Boyle, vol. 1-, Manchester Univ .Press, 1958.
- Chronique du Templier De Tyr (1242-1309), Les Gestes des Chiprois, par Gaston Raynaud, Genève, 1887.
- Moufazzal ibn Abil-Fazaïl, Histoire des sultans mamelouks, texte arabe publié et traduit en français par E. Blochet, Turnhout, 1982.
- The Travels of Marco Polo, The complete Yule-Cordier Edition, vol. II, New York, 1993.
- Hayton, La Flor Des Estoires De La Terre D'Orient, RHC, Documents arméniens, tome II, Paris, 1906.
- Abû'l Faraj Bar Hebraeus, volume I, London, 1932.
- P. Jackson, The Mongols and the West, 1241-1410, Longman, 2005.
- Abu Bakr al-Qutbi al-Ahri, Ta'rikh-i Shaikh Uwais: an important source for the history of Adharbaijan in the 14th century, J. Van Loon, Leuven, 1954.
- Ch. Melville, Pādshāh-iIslām:The conversion of Sultan Mahmūd Ghāzān Khān, Pembroke Papers 1 (1990), p. 159-177.
- Frédéric Luisetto, Arméniens et autres chrétiens d'Orient sous la domination mongole. L'Ilkhanat de Ghâzân, 1295-1304, Paris, Paul Geuthner, 2007.
- S. Runcimen, A history of crusades, vol. 3, Cambridge University Press, 1987.
- J. Joseph, Muslim-Christian Relations and Inter-Christian Rivalries in the Middle East: The Case of the Jacobites in an Age of Transition, State University of New York, 1983.
- Firdaws Al-iqbāl: History of Khorezm, by Shir Muhammad Mirab Munis and Muhammad RizaMirabAgahi, trans. And annotated Yuri Bregel, Leyden-Boston-Köln, 1999.

ԲԱՀՐԻՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՐՋԻՆԵՐԻ ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱԿՈՂ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Այյուբյան սուլթանությունում XIII առաջին կեսին գնալով ավելի մեծ դեր են սկսում խաղալ Այյուբյանների բանակի հիմնական ուժը կազմող մամլուքյան զորամիավորումները: Մամլուք, բառացի «նա, ում տիրում էին» հոմանիշ է 'աբդ՝ ստրուկ բառին, հանդիպում է Ղուրանում՝ 16-րդ սուրայի 75-րդ այաթում «անազատ, որևէ մեկին պատկանող ստրուկ» (عَبْدًا مَّمْلُوكًا): Սկզբնապես այսպես կոչվում էին ձեռք բերված, գնված ստրուկները: Հետագայում մամլուք կոչվում էին մաշկի բաց գույն ունեցող որպես ռազմագերի կամ գնելու ձևով ձեռքբերված ստրուկները: Երիտասարդ ստրուկները իսլամացվում էին, ռազմական դաստիարակություն և արաբերեն կրթություն էին ստանում, և դրանից հետո համալրում մուսուլմանական վերնախավի թիկնազորի շարքերը: Ստրուկ-ռազմիկ նշանակությամբ մամլուքը նույնանում էր ավելի վաղ հանդիպող «ղուլամ» (բառացի՝ պատանի, ծառա) տերմինի հետ: Ծառայության անցնելով թիկնազորում՝ մամլուքը կարող էր ձեռք բերել լայն լիազորություններ, զբաղեցնել բարձր պաշտոններ և տնօրինել մեծ կարողության: Ինչպես արդեն նշել ենք, մամլուքյան թիկնազորի ինստիտուտն արդեն իսկ ներդրվել էր Նուր ադ-դին Զանգիի և Սալահ ադ-դինի օրոք, որոնց մամլուքները տիրոջ անվամբ կոչվում «սալահիյա» և «նուրիյա»: Հետագայում, մասնավորապես նախավերջին Այյուբյան սուլթան աս-Սալիհի (1240-1249 թթ.) իշխանության շրջանում մամլուքները ավելի մեծ դեր և կարևորություն ձեռք բերեցին: Սուլթան աս-Սալիհը իր իշխանության ամրապնդման գործում փորձում էր օգտագործել հենց մամլուքներին՝ կազմավորելով թյուրք-ղիչաղական ծագմամբ «բահրիյա» և «ջամանդարիյա» զորաջոկատները: Աս-Սալիհի այս քաղաքականության արդյունքում մամլուքները 1250 թ. աս-Սալիհի որդու ալ-Մուազզամ Թուրանշահի սպանությունից և Շաջար ադ-դուրրի միանձնյա կարճ կառավարումից հետո գրավեցին իշխանությունը: Մամլուքյան առաջին դինաստիան կոչվելու էր «Բահրի» և իշխելու էր 1250-1390 թթ., իսկ մյուսը՝ «Բուրջի» հարստությունը 1390 թ.-ից իշխելու էր մինչև Սիրիայի և Եգիպտոսի օսմանյան նվաճումը 1516-1517 թվականներին:

Հնարավոր է, որ «բահրի» անվանումը մամլուքների այս խումբը ստացել էր այն պատճառով, որ ղփչաղական ծագումով այս ստրուկները ձեռք էին բերվում մերձևնծովյան տափաստաններում քոչող գերեվարված թյուրքերից, որոնց ապա ստրկավաճառները բահրով՝ ծովով տեղափոխում էին ու վերավաճառում: Տարածված մեկ այլ տեսակետի համաձայն «Բահրի մամլուքներ» անունը կապված է այն իրողության հետ, որ նրանց հավաքատեղին, որտեղ նրանք զինվորական պատրաստություն էին անցնում, գտնվում էր Նեղոս գետի (արաբերեն Բահր ալ-Նիլի) դելտայի կղզիներից մեկում:

Խալիֆա ալ-Մուսթասիմի (1242-1258 թթ.) և ընդհանրապես մուսուլմանական աշխարհի դժգոհության պատճառ էր դարձել այն, որ Այյուբյան աս-Սալիհի սուլթանի կինը՝ Շաջար ադ-դուրրը իրեն հռչակել էր գահակալ: Այս ամենի արդյունքում մամլուքների միջից Իզզ ադ-դին Այբեկը սուլթան հռչակվեց: Սակայն նա ստիպված է լինում ընկրկել մյուս ազդեցիկ մամլուքների ճնշմանը և գահին անվանապես նստեցնում Այյուբյան ալ-Քամիլ սուլթանի մանակիսասակ թոռանը՝ ալ-Աշրաֆ Մուսային: Մյուս կողմից Շաջար ադ-դուրրը ամուսնանում է Այբեկի հետ, թույլ չտալով վերջինիս հեռացնել իրեն իշխանությունից: Այբեկը աստիճանաբար ամրապնդում է իր դիրքերը, և այդ նպատակով նաև ամուսնանում Մոսուլի սուլթան հայազգի Բադր ադ-դին Լուլուի դստեր հետ: 1257 թ. Շաջար ադ-դուրրի ծառաները ծեծելով սպանում են Այբեկին: Այբեկի մահվանից հետո 1257 թ. գահն անցնում է որդուն՝ 16 ամյա ալ-Մանսուր Ալիին, ում հրամանով էլ սպանվում է Շաջար ադ-դուրրը: Չնայած նոր սուլթանի առկայությանը, իրական իշխանությունը գտնվում էր մամլուք Սայֆ ադ-դին Կուտուզի (ով խորեզմշահ Ջալալ ադ-դին Մանկբուրնիի ազգականն էր), ալ-Մանսուր Ալիի խնամակալ-աթաբեկ և սալիհիյա մամլուքների հրամանատար Սանջար ալ-Հալաբիի և Սանջար ալ-Ղատմի մամլուք էմիրների ձեռքերում: Մոնղոլների դեպի Սիրիա ներխուժումից հետո Կուտուզը գահընկեց է անում երիտասարդ սուլթանին և ինքն է գահ բարձրանում 1259 թ. ալ-Մալիք ալ-Մուզաֆֆար՝ ամենահաղթ արքա տիտղոսով: 1260 թ. սեպտեմբերի 3 -ին մամլուքյան բանակը Կուտուզի և Բեյբարսի գլխավորությամբ հաղթանակ է տանում հուլաղույան զորքերի նկատմամբ Այն Ջալուտի ճակատամարտում: Բայց ըստ

երևույթին հենց ճակատամարտից հետո սրվում են Այն Ջալուտի կռիվներում իր քաջությամբ և տաղանդով աչքի ընկած Բեյբարսի ու Կուտուզի հարաբերությունները: Շրջանառվող վարկածների համաձայն այս լարվածության պատճառը մոնղոլներից խլված մի ղփչաղ գեղեցկուհի էր, մեկ այլ վարկածով պատճառը Բեյբարսի այն դժգոհությունն էր, որ Կուտուզը նսեմացնում էր Այն Ջալուտի հաղթանակում Բեյբարսի դերն ու հաղթանակը միայն իրեն վերագրում, և կամ պատճառն այն էր, որ Այբեկի իշխանության օրոք 1254 թ. Կուտուզը սպանել էր մամլուքյան ազդեցիկ էմիր Ֆարիս ադ դին Կարա Ակտային, ով Բեյբարսի մտերիմ ընկերն էր (Կարա Ակտայը այն մամլուքն էր, որ նիզակով Նեղոսի ջրերում սպանել էր Այյուբյան վերջին սուլթան Մուազզամ Թուրանշահին՝ հնարավորություն տալով Շաջար ադ-դուրրին գալու իշխանության): Ինչևէ, Բեյբարսի կազմակերպած դավադրության արդյունքում Կուտուզը սպանվում է: Իշխանության է գալիս ղփչաղական ծագմամբ «Աբուլ Ֆութուհ» (Հաղթանակների հայր) ազ-Զահիր Բեյբարս ալ-Բունդուկդարին (1260-1277 թթ.): Բեյբարսի օրոք մամլուքա-իլխանական հակամարտությունը նոր թափ ու բնույթ է ստանում: Բեյբարսը Հուլաղույանների դեմ գործի է դնում նաև դիվանագիտությունը՝ փորձելով իր կողմը գրավել վրաց թագավորներին, Բյուզանդիայի կայսր Միքայել VIII-ին (ում դուստր Մարիան, սակայն, կնության էր տրվելու Հուլաղուին, ապա՝ Աբաղային), Ռումի սելջուկներին: Սակայն իրական դաշնակցի Բեյբարսը ձեռք է բերում ի դեմս իլխանների հակառակորդ Ոսկե Հորդայի, մասնավորապես ի դեմս Բերքե խանի (1257-1266 թթ.): Բեյբարսին հաջորդում է որդին՝ Բերքե խանը կամ Նասիր ադ-դին Բարաքա խանը (1277-1279 թթ.):

Բերքեից հետո 1279 թ. գահն անցնում է կարճ ժամանակով իր յոթամյա եղբայր Սուլամիշին, որից հետո սուլթան է հռչակվում Կիլիկիայի, խաչակիրների և Հուլաղուի մոնղոլական զորքերի դեմ հաջող ռազմական ձեռնարկումներով աչքի ընկած Կալաուն Ալֆին: Նա Ալֆի կոչվում էր այն պատճառով, որ աս-Սալիհ սուլթանը վերջինիս գնել էր ահռելի գումար՝ 1000 դինար վճարելով, ինչով և Կալաունը հպարտանում էր: Վերջինս, ըստ երևույթին, Բահրիների վերջին զորեղ ու կարող սուլթանն էր. նրանից հետո 1290-1382 թթ. ընկած ժամանակահատվածում իշխել են 17 սուլթաններ,

ընդ որում ամենից երկարն այս ընթացքում իշխել էր հենց Կալաունի որդին՝ ան-Նասիր Մուհամմեդը (1293–1294, 1299-1309, 1310-1341 թթ.), ով, ըստ երևույթին, Բահրի սուլթանների շարքում աչքի էր ընկնում ցոփ կյանքով ու հայտնի էր նաև իր դաժանությամբ. հենց ան-Նասիրի օրոք են նոր թափ ստանում այլահավատների նկատմամբ սահմանափակումներն ու հալածանքները: Բահրիների սուլթանությունը ակհայտ անկում էր ապրում: Բահրիներին հաջորդում են հիմնականում չերքեզական ծագում ունեցող Բուրջի մամլուքները (1382/1390-1517 թթ., արաբերեն բուրջ՝ աշտարակ, իմա Կահիրեի «բուրջը», որտեղ տեղակայված էր նրանց զորանոցը): Բուրջիների առաջխաղացումը պայմանավորված էր ապագա սուլթան չերքեզ էմիր Բարքուքի (1382-1389, 1390-1399 թթ.) անվան հետ, ով 1382 թ. գրավում է գահն ու հիմք դնում նոր հարստության: Սակայն Բուրջիների սուլթանությունը ևս շատ արագ բռնեց անկման ճանապարհը: Մամլուքները ի զորու չեղան ըստ արժանվույն հակահարված տալու ոչ Թեմուրին, և ոչ էլ օսմանների տարածքային նկրտումներին: Համեմատաբար կայուն և հաջող էր Բարսբեյ սուլթանի (1422-1438 թթ.) իշխանության շրջանը: Նա փորձում էր օգտվել միջազգային առևտրում Եգիպտոսի ունեցած դիրքից և նպաստել առևտրի զարգացմանն ու քաղել դրա օգուտները: Սակայն XV դարի կեսերից սկսվում է Մամլուքյան Եգիպտոսի տնտեսական և ռազմական սրընթաց անկումը: Սուլթանն ընտրվում էր հակամարտող մամլուքյան կողմերից մեկի հաղթանակի դեպքում և գրեթե հեղինակազուրկ ու իշխանազուրկ գահակալ էր: Սկսած Ջակմակ (1438-1453 թթ.) սուլթանի իշխանության շրջանից՝ փաստացի անարխիա է հաստատվում, որի դեմ սուլթանը անզոր էր: Սուլթան Ինալը (1453-1461 թթ.) ստիպված էր հրաժարվել ավանդական զոհաբերության տոնը նշելուց՝ վախենալով, որ իրեն իր իսկ մամլուքները քարկոծելով կսպանեն այդ ընթացքում: Մամլուքներն էլ ավելի մեծ լիազորություններ են ստանում Խուշկադամ (1461-1467 թթ.) սուլթանի օրոք: Նրա մահվանից հետո մեկ տարվա ընթացքում գահին իրար են հաջորդում երեք սուլթաններ: Քիչ թե շատ իրավիճակը կայունանում է Քաիտբայի (1468-1496 թթ.) իշխանության օրոք: Մամլուքյան սուլթանության աստիճանական անկումն ուներ նաև տնտեսական պատճառներ: Նախ մամլուքների իշխանությունը թուլացել էր Վերին Եգիպտոսում, որը հացի աղբյուրն էր,

և որտեղ տեղական ցեղերի ինքնիշխանությունն էր գերակայում: 1465 թ. Քաիտբայը Կահիրե ցորեն բերելու նպատակով ստիպված էր Վերին Եգիպտոս պատժիչ ջոկատներ ուղարկել: Մամլուքյան սուլթանները փորձում էին իրենց վերահսկողության տակ վերցնել նաև եվրոպացի վաճառականների հետ կատարվող առևտուրը, և հաճախ հենց իրենք էին հավելյալ եկամուտներ ստանալու ակնկալիքով խոչընդոտում առևտրի բնականոն զարգացմանը. այսպես, սուլթան Ինալի և Քաիտբայի օրոք համեմունքների մեկ հակը եվրոպացիներին վաճառվում էր սահմանված 50 դուկատի փոխարեն 100 դուկատ գնով, իսկ նրանք, ովքեր հրաժարվում էին վճարել նման բարձր գին, ծեծի էին ենթարկվում, բանտարկվում, և ազատ արձակվում միայն համաձայնություն կորզելուց հետո: 1423 թ. Բարսբայ սուլթանը փորձեց պետական վերահսկողության տակ վերցնել շաքարեղեգնի մշակումն ու արտադրությունը: Սակայն դա էլ իր հերթին հանգեցրեց 1427 թ. մամլուքյան ազդեցիկ այն էմիրների դժգոհությանը, որոնց հողատարածքներում էր մշակվում շաքարեղեգը: Մյուս պատճառը 1416-1513 թթ. ժանտախտի համաճարակների բռնկումն էր, որի արդյունքում Եգիպտոսի բնակչությունը կրճատվում է 2 անգամ: Այսպես օրինակ, եթե դարասկզբին Ալեքսանդրիայում մանածագործ վարպետների թիվը 13.000-ից ավելի էր, ապա 1434 թ. նրանց թիվը չէր անցնում 800-ից: Մյուս պատճառը այն էր, որ Եգիպտոսը դուրս էր մղվում միջազգային առևտրի ասպարեզից և զրկվում միջանցիկ երկիր լինելու առավելությունից: 1498 թ. պորտուգալացի Վասկո Դա Գաման շրջանցելով Աֆրիկան՝ Հնդկաստանի Կալկուտա քաղաքում ափ դուրս եկավ: Դեպի Հնդկական օվկիանոս տանող ճանապարհին գտնվող Հորմուզի և Ադենի գրավումով պորտուգալացիները կտրել էին Ալեքսանդրիայից Կարմիր ծովով դեպի Հնդկաստան տանող առևտրական մայրուղին և տնտեսական լուրջ հարված հասցրել մամլուքներին: Պորտուգալական տորմիղը փորձում էր արգելափակել մամլուքների և մուսալմանական նավերի ելումուտը Կարմիր ծովից: 1508 թ. Կանսուհ ալ-Ղաուրիի և Գուջարաթի միացյալ տորմիղները պարտության մատնեցին պորտուգալական նավատորմին, բայց 1509 թ. ջախջախվեցին վերջիններիս կողմից:

Պորտուգալացիների ի հայտ գալուց հետո Հնդկական օվկիանոսում հաճախակի էին դարձել հարձակումները մամլուքյան առևտրական նավերի վրա. մասնավորապես 1508 թ. Հոորդոսի տորմիղին Միջերկրական ծովում հաջողվում է ջախջախել փայտանյութով բեռնված նավերը ուղեկցող մամլուքյան ռազմանավերին: Մամլուքյան տորմիղի պարտությունը և անզորությունը դրդում է մամլուքներին դիմելու օսմանյան սուլթան Բայազիդ II-ին օգնության և ուժերը միավորելու խնդրանքով: Սա Բայազիդին ձեռնտու առաջարկ էր, ինչը նրան թույլ կտար միջամտել մամլուքների ներքին գործերին, նոր դաշնակից ձեռք բերել Սեֆյան Իսմայիլի դեմ և այլն:

1510 թ. մամլուքյան դեսպանությունը ջերմ ընդունելություն է գտնում օսմանյան արքունիքում. Բայազիդը 1511 թ. մամլուքներին ուղարկում է վառոդ, հրետանի, տորմիղ կառուցելու փայտանյութ, ինչպես նաև 2000 նավաստիների՝ Սալման Ռեյսի և Հուսեյն ալ Քուրդիի գլխավորությամբ: Օսմանա-մամլուքյան միացյալ տորմիղը, հասնում է Եմեն, գրավում Զաբիդը, բայց չի կարողանում գրավել Ադենը և այլ հաջողություններ չի ունենում: Օսման-ամամլուքյան դաշինքը երկար կյանք չունեցավ. իրավիճակը կտրուկ փոխվեց երբ զգուշավոր քաղաքականություն վարող Բայազիդին 1512 թ. փոխարինելու եկավ նրա որդին՝ Սելիմ I Ահեղը:

Գրականություն

• Ahmad Fu'ad Mutawwali. Al-Fath al-'Uthmani li-l-Sham wa-Misr [The Ottoman Conquest of al-Sham and Egypt]. Al-Qahira, al-Zahra' li-l-'I'lam al-'Arabi, Qasr al-Nashr, 1995. 394 p.

• Al-Harithy H. The four madrasahs in the complex of sultan Hasan (1356-61): The complete survey // Mamluk Studies Review. 2007. Vol. 11. No. 2. P. 49-76.

• Behrens-Abouseif D. Islamic architecture in Cairo: an introduction. New York: E. J. Bril. 1992.

• Bloom J. Mamluk art and Architectural history: A Review Article // Mamluk Studies Review. 1999. Vol. 3. P. 31-58.

• Crecelius D. The Roots of Modern Egypt. Minneapolis & Chicago, Bibliotheca Islamica, 1981. 201 p.

• Crecelius D., The Roots of Modern Egypt. Minneapolis & Chicago: Bibliotheca Islamica, 1981. 201 p.

○ Fernandes L. Mamluk architecture and the Question of Patronage // Mamluk Studies Review. 1997. Vol. 1.
○ Glabb J. The Lost Centuries. From the Muslim Empires to the Renaissance of Europe. 1145-1453. London, Hoder and Stoughton, 1967. 511 p.
○ Har-El S. Struggle for Domination in the Middle East. The Ottoman-Mamluk War 1485-1491. Leiden, New York, Koln, E.J. Brill, 1995.
○ Muhammad b. 'Ahmad b. 'Iyas al-Hanafi al-Misri. Al-Muhtar min Bada'i' al-Zhur fi waqa'i' al-Duhur [The Best Flowers on the Events of Fate]. Matabi' al-Sha'b, 1960. 3 j. J. 1. 468 p.
○ Speiser P. The sultan al-Nasir Muhammad Madrasah in Cairo: Restoration and Archaeological invest tigation // Mamluk Studies Review. 2008. Vol. 12. No. 2. P. 197-222.
○ 'Usama Hasan. Tumanbay Akhir Salatin al-Mamalik [Tumanbey, the last Mamluk Sultan]. Ghiza, Dar al-'Amak l-l-nashr wa-l-tawzi', 2000.
○ Winter M. The Ottoman occupation. The Cambridge History of Egypt. Vol. 1, pp. 490-520.
○ Илюшина М. Ю. Мухаммад ибн 'Ахмад ибн Ийас о ближайшем окружении Кансуха аль-Гури (1501-1516) // Вестник Бурятского научного центра СО РАН. 2012. № 2 (6). С. 148-154.
○ Олдридж Дж. Каир. Биография города. М., 1979.
○ Стародуб Т. Х. Сокровища исламской архитектуры. М., 2004.
○ Фильштинский И. М. История арабов и халифата (750-1517 гг.). М.: АСТ; Восток-Запад, 2008, 349 с.
○ Хааг М. История Египта. М., 2008.

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ XIV ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ - XV ԴԱՐՈՒՄ (ԹԻՄՈՒՐՑԱՆՆԵՐ, ԿԱՐԱ-ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ, ԱԿ ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ)

Թեմուր Լենկ. նվաճումներն ու տերությունը

XIV դարի վերջերին և XV դարի սկզբին Մերձավոր ու Միջին Արևելքում ի հայտ է գալիս մի նոր տերություն, որն իր հիմնադրի՝ Թեմուր Լենկի նվաճումների արդյունքում իր սահմաններում էր ներառել Մավերանահրը, Իրաքը և Սիրիայի մի մասը, Իրանը, Հայաստանի մեծ մասը, Շիրվանը, Վրաստանը, Փոքր Ասիայի մի մասը:

Ծագումով թյուրքացած բարուլաս մոնղոլական ցեղից Թեմուր իբն Թարաղայը պատմությանը հայտնի է Թեմուր Լենկ, Թամերլան, Թամբուրլեն, Թեմիր Ակսակ անվամբ, որը թարգմանաբար նշանակում է Կաղ Թեմուր կամ Կաղ Երկաթ: Թեմուրի կենսագիր Շարաֆ ադ-դին Ալի Յազդի պատմիչը «Զաֆարնամեում (հայ.՝ Հաղթանակների գրքում)»՝ գրում է, որ «մոնղոլների Մկան տարում, հիջրայի 736 թվի շա'աբան ամսվա 25-ին՝ երեքշաբթի օրը (1336 թ. ապրիլի 8-ին) Քեշի վիլայեթում Թեքինա խաթունը՝ ամիր Թարաղայի կինը և Թեմուրի մայրը ծնեց Թեմուրին»: Յազդիի շարադրանքից ակնհայտ է, որ հեղինակը Թեմուրի ազնվական ծագման կողմնակից է՝ հորը վերագրելով ամիրի պաշտոն: Թեմուրի մեկ այլ կենսագիր՝ իբն Արաբշահը գրում է, որ Թայմուրն ու իր հայրը հովիվների ցեղից՝ «թայֆայից» էին, ու «ոչ հավատ ունեին, ոչ էլ խելք»: XIV դարի երկրորդ կեսը Ջաղաթայի ուլուսի քաղաքական պատմության մեջ բնութագրվում է սկսված խառնակ դրությամբ, սերբեդարների ապստամբությամբ, արևելքում՝ Ջեթեի ուլուսի կամ Մողուլիստանի[5] կազմավորմամբ և Մավերանահրը նվաճելու և Ջաղաթայի ողջ ուլուսում գերագույն իշխանության հասնելու պայքարով: Այս իրողությունների համատեքստում է 1360 ականների սկզբից սկսվում Թեմուրի ռազմաքաղաքական

---

[5] Մողուլիստանը կամ Ջեթեի ուլուսը՝ «մողոլների» երկիրը իրենից ներկայացնում էր Իրտիշ և Սարը-սու գետերի, Բալխաշ և Իսիկ-կյուլ լճերի ու Կենտրոնական Տյան-Շան լեռնաշղթայի միջև ընկած, Ջաղաթայի ուլուսի արևելյան հատվածն էր, որտեղ իշխանությունը 1337 թ. անցել էր չինգիզյան նոր ճյուղի, և ի տարբերություն Մավեննահրի Մողուլիստանն առանձնանում էր այստեղ հենց մոնղոլական ցեղերի ու էլիտայի կենտրոնացվածությամբ ու իշխանությամբ, մոնղոլական բարքերի ու ավանդույթների պահպանմամբ, իսլամի դիրքերի գրեթե իսպառ բացակայությամբ: Սա Ջեթեների՝ «ավազակ», ազատ ու ինքնագլուխ քոչվորների, ասել է թե՝ իսկական մոդոլների պետությունն էր:

գործունեությունը: Նա արդեն իսկ հասցրել էր իր շուրջը համախմբել նշանակալի ուժ ներկայացնող զորականներ ու իր սեփական զինված ջոկատն էր ստեղծել, երբ ծառայության է անցնում Քեշի տիրակալ, բարուլաս ցեղի առաջնորդ Հաջիի մոտ: 1360 թ. Քեշը գրավվում է Մողուլիստանի խան Տուղլուկ-Թեմուրի կողմից, և Թեմուր-Լենկը անցնում է ծառայության վերջին մոտ ու նշանակվում Քեշի կառավարիչ: Հնարավոր է, զգալով Տուղլուկի որդու՝ Իլյաս Խոջայից եկող վտանգը, ով հնարավոր է ծրագրել էր Թեմուրի սպանությունը, վերջինս հասցնում է փախչել ու անցնել Մողուլիստանի խաների հակառակորդի՝ Ջաղաթայի ուլուսի նախկին խաներից Էմիր Կազաղանի թոռան՝ Էմիր Հուսեինի կողմը: Դրանից հետո Թեմուրն ու Հուսեինը գերի են ընկնում Խորեզմում և ազատվում գերեվարությունից 62 օր անց: 1364 թ. մողոլների զորքերը լքում են Մավերանահրը և Թեմուրը կրկին տիրում է Քեշին: 1365 թ. հունիսի 22-ին Մողուլիստանի խան Իլյաս Խոջան «Ցեխի ճակատամարտում» ջախջախում է Հուսեինի և Թեմուրի միացյալ ուժերն ու իր զորքերն առաջ շարժում Սամարղանդի ուղղությամբ, որն անցել էր սերբեդարների իշխանության տակ, բայց չի հաջողում Սամարղանդի գրավումը սերբեդարներից: 1366 թ. Թեմուրը խաբեությամբ գլխատում է իր մոտ ներկայացած սերբեդարների առաջնորդներին ու գրավում Սամարղանդը: Կարճ ժամանակ անց Թեմուրի և Հուսեինի հարաբերությունները սրվում են այն աստիճան, որ վերջիվերջո Հուսեինը սպանվում է Թեմուրի զինվորների կողմից: 1370 թ. Թեմուրը դուռուլթայի կողմից ընտրվում է Էմիր և ամբողջ իշխանությունը կենտրոնացնում է իր ձեռքերում, իր նորաստեղծ իշխանության մայրաքաղաքը դարձնում Սամարղանդը: Հայտնի է, որ Թեմուրը, չի կրել սուլթան, մալիք, քաան կամ այլ գերագույն իշխանություն ցուցող տիտղոս, այլ կրել է ամիր (իշխան, զորավար), գուրկան[6] և «ամիր սահիբ քիրան (հայ.՝ երջանիկ համաստեղության տեր)» - տիտղոսները: Դա բացատրվում էր նրանով, որ Թեմուրը չի խախտում ընդունված ավանդույթը, և գահին, թեկուզև անվանապես, որպես գերակա իշխող մնում են ընդհուպ մինչև 1402 թ. չինգիզյան խաները՝ Սոյուրղաթմիշը (1370-1388 թթ.) և Մահմուդը (1388-1402 թթ.): 1381 թ. Թեմուրը սկսում է Իրանի նվաճումը՝ նույն թվականին գրավելով Հերաթը, ապա Զարանջը, որի բնակչությունն ամբողջությամբ սրի է քաշվում, ապա 1382

---

[6] Գուրկան, այն է թե «չինգիզյան դինաստիայի փեսա» տիտղոսը կրելով Թեմուրը կարծես թե դրանով լեգիտիմացնում էր իր իշխանությունը:

թ. ավարտում է Խորասանի նվաճումն ու նրա կառավարիչ նշանակում իր որդուն՝ Միրանշահին: 1383 թ. գրավվում է Սիստանը:

Սրան հաջորդում են Թեմուրի երկու խոշոր նվաճողական արշավանքները՝ առաջինը սկսած 1386 թ.-ից (հռամյա արշավանք), երկրորդը՝ 1392 թ. (հնգամյա արշավանք), և վերջինը՝ 1399 թ. (յոթնամյա արշավանք): 1386 թ. Թեմուրը սկսում է Արևմտյան Իրանի նվաճումը և 1387 թ. գրավում Սպահանը: Դրանից հետո շարունակվում է Արևմտյան Իրանի նվաճումն. 1392 թ. մերձկասպյան շրջանները գրավելուց հետո, որից հետո 1393 թ. գրավում է Բաղդադը: 1389 թ. արշավում է Մոդուլիստան, ապա 1391 թ. պատժում Ոսկե Հորդայի Թոխթամիշ խանին մինչև Վոլգա ամայացնելով նրա տիրույթները: 1395 թ. նա վերջնականապես ջախջախում է Թոխթամիշ խանին Թերեքի ճակատամարտում և ասպատակում ռուսական Ռյազան քաղաքն ու հասնում մինչև Եղեց: Ոսկե Հորդայի տնտեսական ներուժը ոչնչացնելու համար Թեմուրն այրում, ավերում ու թալանում է Ազովը, Սարայ-Բաթուն, Աստրախանը և այլ քաղաքներ ու կենտրոններ: 1398-1399 թթ. Թեմուրն իրականացնում է դեպի Հնդկաստան իր հայտնի արշավանքը, գրավում Դելին ու սրի քաշում նրա բնակիչներից 100.000-ին (մեկ այլ աղբյուրի հաղորդմամբ դրանք Թեմուրի հնդիկ գերիներն էին, որոնց վերջինս հրամայում է սպանել՝ վախենալով սրանց ապստամբությունից), ասպատակելով հասնում մինչև Գանգես գետի ափերը: 1399-1400 թթ. սկսվում է Թեմուրի վերջին հաջող արշավանքը, որը հիմնականում ուղղված էր օսմանյան պետության աճող հզորության դեմ: Գրեթե անկասելի ռազմարշավով Թեմուրյան զորքերը 18 օրյա պաշարումից հետո 1400 թ. գրավում են Սեբաստիան, ապա 1401 թ. Հալեպն ու Դամասկոսը: Օսմանյան սուլթան Բայազիդի և Թեմուրի միջև որոշիչ ճակատամարտը տեղի է ունենում 1402 թ. Անկյուրիայի կամ Անկորայի մոտ, որտեղ Թեմուրի ահռելի բանակը (աղբյուրների հաղորդած նվազագույն թիվը բանակի թվաքանակի վերաբերյալ 250-350 հազար, և առավելագույնը՝ 700-800 հազար է) ջախջախիչ հարվածներ է տանում Բայազիդի նկատմամբ, որին գերի են վերցնում. Թեմուրը պահում էր իր գերուն ճնշավանդակի մեջ ու զվարճանում նվաստացնելով: Թեմուրը օսմանյան տիրույթների մի մասը վերադարձնում է Բայազիդի որդիներին, օսմանյան պետության հետագա հզորացումը կանխելու համար ամրացնում փոքրասիական մյուս բեյությունները: 1404 թ. Թեմուրը վերադառնում է Սամարղանդ և նոր արշավանք ձեռնարկում այս անգ-

գամ Չինաստանի ուղղությամբ, սակայն ճանապարհին 1405 թ. հունվարին Օտրարի մոտ մահանում է ու նրա ահռելի կայսրությունում երկպառակտչական պատերազմ է սկսվում նրա որդիների՝ Միրանշահի և Շահռուհի միջև, որից հաղթանակած է դուրս գալիս Շահրուհը (1405-1447 թթ.): Չնայած 1408 թ. կարա կոյունլու Կարա Յուսուֆին սպարտվելուն՝ Թամուրյանները փորձում էին իրենց գերիշխանությունը հաստատել թուրքմենական կարա և ակ կոյունլուների վրա: Թեմուրյանների հզորությունը քիչ թե շատ պահպանվեց մինչև Հուսեին Բայքարիի կառավարման շրջանը (1469-1506 թթ.), որից հետո Թեմուրյանների պետությունը քայքայվեց ու արագ անկում ապրեց:

Կարա կոյունլուների տերությունը



Կարա կոյունլուների իշխող բահարլուների տոհմը ծագում էր Յիվա ցեղից, որն ըստ Մահմուդ Կաշգարցու հիմնել էր առասպելական Օղուզ խանի թոռը՝ Դենիզ խանը: Կարա Կոյունլուների ցեղային միության մեջ իշխող դիրք զբաղեցնող **բահարլու** և **ասադլու**

ցեղերից զատ ներառված էին նաև կարամանլու, ալկաուռ, ղուխարլու, ջագիրլու, խոջիլու և աղաչերի թուրքմանական ցեղերը: Դինաստիայի հիմնադիրներն են համարվում Ջալայիրյանների էմիր Բայրամ խոջան և Կարա Մուհամմեդ Թուրմիշը, սակայն ավելի ճիշտ կլիներ իրական առաջնորդ և դինաստիայի հիմնադիր համարել Կարա Յուսուֆին, որի օրոք էլ Կարա Կոյունլուները ասպարեզ եկան որպես լուրջ ռազմաքաղաքական ուժ: Սկզբնական շրջանում Կարա Կոյունլուների տիրույթները տարածվում էին Վանա լճից հյուսիս ընկած տարածքներում և Հյուսիսային Իրաքում՝ Մոսուլի մերձակայքում:

Ֆասիհ Հավաֆիի տեղեկության համաձայն 1383/1384 թթ. Սուլթան Ահմադ Ջալայիրը (1382-1410 թթ.) հարձակվում է Սուլթանիեի վրա և թալանում գանձարանը: Դրանից հետո 1386 թ. Թեմուրը զբաղեցնում է ԱդՊարբայջանի տարածքը ու գրավում Թավրիզը, Ահմադը փախչում է:

1405 թ. Թիմուրի մահվան լուրն ստանալուց հետո մամլուքյան սուլթան Ալ-Նասիր Ֆարաջը (1399-1405, 1405-1412 թթ.) ազատ է արձակում օգնության խնդրանքով իր մոտ ապաստանած ու իր իսկ կողմից բանտարկված Ահմադ Ջալայիրյանին և Կարա Յուսուֆին: Վերջինիս հաջողվում է մեծաթիվ զորք հավաքել ու 1406 թ. գրավել Արաբական Իրաքն ու Բաղդադը: Ահմադ Ջալայիրի և Կարա Յուսուֆի միացյալ զորքերը նույն թվականին գրավում են Թավրիզը, որն անցնում է Ահմադի իշխանության տակ, սակայն կարճ ժամանակ անց Թավրիզը գրավվում է Թիմուրյան Աբու Բաքր միրզայի կողմից: Կարա Յուսուֆին հաջողվում է նախ պարտության մատնել Աբու Բաքրին ու հաստատվել Թավրիզում, ապա 1408 թ., ըստ Շարաֆ խան Բիդլիսիի, Թավրիզի մոտ (կամ Ղարաբաղում՝ ըստ Շիլտբերգերի[7]) ճակատամարտում ջախջախիչ պարտության մատնել Թիմուրի ավագ որդու՝ Միրանշահի զորքերին: Այդ մասին Մեծոփեցին գրում է. «Եւ անտի զորացեալ Յուսուֆն այն եկն ի Թաւրէզ ու. մարտեալ ընդ ամիրայ Միրանշահ չաղաթային՝ որդւոյ Թամուրին. էառ զԹաւրէզ եւ ապան զնա»: Սակայն շուտով Ահմադ Ջալայիրը դավաճանում է դաշնակցին՝ օգտվելով այն հանգամանքից, որ

[7] Шараф-хан Бидлиси, Шараф-наме, пер. Е. Васильевой, Москва, 1976, стр.; The Bondage and Travels of Johann Schiltberger, trans. and ed. by J. Buchan Telfer, London, 1879, p. 31.

վերջինս պատերազմում էր իր հակառակորդ Ակ Կոյունլու Կարա Յուլուք Օսմանի դեմ, և օգնության կանչելով Սյունիքի իշխան Իվանե Օրբելյանին ու շիրվանշահ Իբրահիմին, փորձում է գրավել Թավրիզը: 1410 թ. օգոստոսի 30-ին Կարա Յուսուֆը պարտության է մատնում Ջալայիրյաններին ու փաստացի վերջիններիս տիրույթներն ու Իրաքը անցնում են Կարա Կոյունլուների իշխանության տակ: 1410 թ.-ից մինչև Կարա Յուսուֆի մահը՝ 1420 թ. ընկած ժամանակահատվածը գրավոր աղբյուրներում, այդ թվում և հայկական, նկարագրվում է որպես հարաբերական խաղաղության տարիներ - «Արար բազում խաղաղութիւն, եւ աջոգումն մարդկային, էր եմնութիւն և ջնութիւն, ամենեին անջոգութիւն» - գրում է Գրիգոր Խլաթեցին: Կարա Յուսուֆի մահվանը հաջորդում են գահակալական կռիվներ, որում հաղթող է դուրս գալիս նրա որդիներից Իսկանդարը (1422-1429, 1431-1435 թթ.)՝ անվանապես ճանաչելով Թեմուրի որդու՝ Շահռուհի գերիշխանությունն ու նրան հանձնելով Սուլթանիեն: Շուտով՝ 1420 թ. Շահռուհի զորքերը առանց դիմադրության գրավում են նաև Թավրիզը: Իսկանդարը հաջողության հասնելով իր հակառակորդ Կարա Յուլուքի նկատմամբ, անցնում է Արաքսն ու արշավում Թավրիզը գրավելու մտադրությամբ: 1421 թ. Ալաշկերտի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում Իսկանդարը պարտություն է կրում Շահռուհի զորքերից: 1422 թ. Իսկանդարը նոր զորք է հավաքում ու գրավում Թավրիզը, իսկ եղբայրը՝ Իսփանդը տիրում է Բաղդադին: 1429 թ. Շահռուհը նորից ռազմական գործողություններ է սկսում Իսկանդարի դեմ, ու վերջինս Սալմաստի ճակատամարտում կրկին պարտություն է կրում: Շահռուհը իշխանության է բերում Իսկանդարի մյուս եղբորը Աբու Սաիդին՝ Ատրպատականի և Հայաստանի վրա իշխելու իրավունք շնորհելով:

1420 թ. Ջահանշահը ամուսնանում է Տրապիզոնի կայսր Ալեքսիոս IV դստեր Թեոդորա Կանտակուզենի հետ, որից հետո՝ Ալեքսիոսը պարտավորվում է Կարա Կոյունլուներին այն հարկը, որը նախկինում Տրապիզոնի կայսրությունը վճարել էր Թեմուրին: Ջահանշահը դիտարկվում էր որպես եղբոր՝ Կարա Իսկանդերի՝ գահի հիմնական մրցակից, և փախել ու ապաստան էր գտել մյուս եղբոր՝ Իսփանդի մոտ: 1436 թ. Ջահանշահն անցնում է օգնեց թիմուրյան Շահռուհի աջակցությամբ եղբորից՝ Կարա Իսկանդարից խլում է

գահը և սկսում իշխել որպես Թիմուրյանների վասալ: 1438-ի ապրիլին Ջահանշահը թագ է ընդունում Շահռուհի թագուհուց՝ Գոհարշադ բեգումից և գահ բարձրանում «Մուզաֆֆար ալ-Դին (հավատի՝ իսլամի հաղթանակող)» պատվանունով: 1440 թ. վրաց Ալեքսանդր I (1412-1442 թթ.) Ջահանշահին հարկատու դանռալու պիսահանջը մերժելուց հետո վերջինս 20.000-ոց զորքով արշավում է Վրաստանի վրա, ավերում Սամշվիլդեն, գրավում ու թալանում մայրաքաղաք Թիֆլիսը: Յոթ ամիս տևած պաշարումից հետո նրա զորքերը գրավում են Բաղդադը գրավվեց 1446 թվականին: Արաբական Իրաքի կառավարումը Ջահանշահը հանձնում է իր որդուն՝ Մուհամմադին (Բաղդադում) և ազգականներին՝ Ալվանդին Ռուստամին, Թարխանին և Մահմուդին՝ համատեղ իշխելու Մոսուլում և նրա շրջակայքում:

1447 թ. Շահռուհի մահվանից հետո Ջահանշահը սկսում է իշխել որպես անկախ գահակալ՝ ընդունելով սուլթան ու խան տիտղոսները: 1457-1458 թթ. կարա կոյունլուների առաջնորդը արշավում է Թիմուրյանների դեմ, գրավում Գորգանն ու Խորասանը, ու նույնիսկ տիրանում Թիմուրյանների մայրաքաղաք Հերաթին, սակայն ի վերջո 1459 թ. թիմուրյան Աբու Սայիդի (1451-1469 թթ.) հետ համաձայնության է գալիս և հաշտություն կնքում. իրանական Դեշթ-ի Քեվիր և Դեշթ-ի Լութ անապատները ճանաչվում են որպես թիմուրյանների և կարա կոյունլուների տերության սահմաններ:

Սակայն Ջահանշահի հիմնական հակառակորդը ակ կոյունլուներն էին: Ակ կոյունլուների առաջնորդ Ջահանգիրը շուտով ստիպված է լինում ընդունել Ջահանշահի գերիշխանությունը, սակայն այս հանգամանքը Ջահանգիրի դեմ օգտագործում է նրա եղբայրը՝ Հասանը, և սպանելով 1453 թ. պարտության է մատնում եղբորն ու իշխանության գալիս մեզ հայտնի Ուզուն Հասան անվամբ: Ակ Կոյունլուների իշխանությունը Ուզուն Հասանի օրոք նոր թափ և հզորություն է հավաքում: ակնհայտ էր, որ Ջահանշահի և Ուզուն Հասանի միջև խոշոր առճակատումն անխուսափելի էր լինելու:

Կատերինո Զենոն իր ուղեգրության մեջ Ուզուն Հասանի (***Usun Cassano***) և Ջահանշահի (***Giausa***) միջև պատերազմի որպես պատրվակ է ներկայացնում վերջինիս կողմից Հասանից 300 երիտասարդ ճորտերի տեսքով հարկ վճարելու պահանջը, որը, իհարկե, Ուզուն Հասանը հրաժարվում է կատարել: 1467 թ. Մուշի դաշտում տեղի

ունեցած ճակատամարտում Ուզուն Հասանի զորքերը պարտության են մատնում Ջահանշահին. վերջինս սպանվում է, իսկ նրա տիրույթները անցնում են Ուզուն Հասանի իշխանության տակ:

Ակ կոյունլուների տերությունը

Ակ կոյունլուների ցեղամիության կազմավորման և որպես միասնական ուժ ի հայտ գալու հարցը դեռևս կարոտ է ուսումնասիրության և պարզաբանումների: Հնարավոր է, որ այս ցեղամիության կազմում ընդգրկված ցեղերի մի մասը Փոքր Ասիա է ներթափանցել սելջուկյան արշավանքների ընթացքում, մյուս մասը՝ մոնղոլական արշավանքերի ազդեցությամբ: Ի հակադրություն Կարա Կոյունլուների, նրանք կոչվում էին Ակ Կոյունլուներ, ինչը բառացի կարելի թարգմանել որպես «Սպիտակ ոչխարավորներ», «ոչխարը», հնարավոր է, եղել է այս թուրքմենական ցեղերի տոտեմը և անվանումը ծագում է այստեղից: Այս ցեղային միության կազմում առաջատար դիրք էր զբաղեցնում **բայանդուր** ցեղը, որից և սերում էր Ակ Կոյունլուների վերնախավը, ինչպես նաև դրանում լրիվությամբ կամ մասնակիորեն ներառված էին **բայաթ, փոռնակ, մոսիլու, սուֆշար, դաջար** ցեղերը: XIV դարի կեսերի բյուզանդական աղբյուրների հիշատակությունները վերաբերում են Ակ Կոյունլուների ու նրանց առաջնորդ Թուր Ալին բեն Փահլավանի և Տրապիզոնի կայսրության միջև 1330-1340-ական թթ.-ին ընթացող ընդհարումներին, այս երկու կողմերի միջև կնքված հաշտությանը, որն ամրապնդվում է թուրքմեն ցեղապետի որդու՝ Կութլուղ իբն Թուր Ալիի և Տրապիզոնի Ալեքսիոս III (1349-1390 թթ.) Կոմնենոսի քրոջ՝ Մարիա Կոմնենոսի ամուսնությամբ: Հետաքրքիր է, որ միջդինաստիական ամուսնությունների այս պրակտիկան շարունակվում է նաև հետագայում, որի օրինակներից է Հովհաննես IV-ի (1429-1459 թթ.) դստերը՝ Թեոդորային ակ-կոյունլու Ուզուն Հասանի կողմից կնության առնելը: Միջդինաստիական ամուսնությունների շնորհիվ Տրապիզոնի կայսրությունը շահեց Ակ-կոյունլուների դաշնակցությունը՝ փաստացի դառնալով վերջիններիս վասալը ընդհուպ մինչև օսմանների կողմից 1461 թ. գրավվելը:

XIV դարի վերջերին Ակ Կոյունլուների ազդեցության գոտիները հիմնականում ներառում էին վերջիններիս ամառային քոչի՝ յայլաղների և ձմեռային քոչի՝ ղըշլաղների միջև ընկած Բայբուրդից

մինչև Դիարբաքր ու Ամիդ ընկած տարածքները: Ակ Կոյունլուների տիրույթները սկզբնական շրջանում սահմանակցում էին Վանա լճի հյուսիսում Կարա Կոյունլուների տարածքների հետ, ապա հյուսիսում՝ Վրաստանի ու Տրապիզոնի կայսրության հետ, արևմուտքում նախ մամլուքների վասալ Զուլքադարի բեյլիքության, ապա Օսմանյան պետության հետ, Իրաքում հաստատվելուց հետո՝ հարավ-արևմուտքում մամլուքյան սուլթանության հետ:

Կութլուղ իբն Թուր Ալի Փահլավանին 1389 թ. հաջորդում են որդիները՝ Ահմադը և Կարա Յուլուք Օսմանը, որոնց միջև սկսված պայքարում 1398 թ. հաղթող է դուրս գալիս վերջինը: 1398 թ. Կարա Յուլուք Օսմանը դեմ է դուրս գալիս Սեբաստիայում իրեն սուլթան հռչակած Կադի Բուրհան ադ-Դինին ու սպանում վերջինիս, սակայն շուտով կարճ ճամանակով Սեբաստիան անցնում է օսմանյան Բայազիդ I-ի (1389-1402 թթ.) տիրապետության տակ: Հայկական աղբյուրները բավական դրական են արտահայտվում Ակ-Կոյունլու սուլթաններ Կարա Յուլուք Օսմանի (1378-1406 թթ.) և նրան հաջորդած սուլթան Համզայի (1406-1444 թթ.) մասին[8]: Մկրտիչ Նաղաշի կենսագրության շարադրանքում գրիչ Աստվածատուրը փաստում է հայերի նկատմամբ վերջիններիս հանդուրժողական և մեղմ քաղաքականության վերաբերյալ: Այն, ըստ հեղինակի, պայմանավորված էր Մկրտիչ Նաղաշի նկատմամբ այս սուլթանների ունեցած մեծ սիրով և հարգանքով: Ըստ գրիչի, սուլթան Համզան այնքան է հավանում և գնահատում Նաղաշին, որ. «***մինչ ի բազմաց ասել է և ինքն քրիստոնեայ է, զի այսչափ սիրէր և պատուէր զեպիսկոպոսն*** (-Նաղաշին)»: Նաղաշի շնորհիվ դադարեցվում են քրիստոնյաների նկատմամբ հալածանքները, ինչպես նաև եկեղեցու սպասավորների համար ժամանակավորապես ձեռք է բերվում ապահարկության իրավունք: 1467 թ. Մուշի ճակատամարտում Ջահանշահին ջախջախելուց, ապա 1469 թ. Մուղանի դաշտում թիմուրյան Աբու Սա'իդ Միրզայի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո Ակ Կոյունլու

---

[8] Այստեղ ներկայացված է Ստենլի Լեն Պուլի տված թվագրությունը, ըստ Կ. Բոսվորտի Կարա Յուլուքը իշխել է 1378-140?, իսկ Համզան 1435-1444: С. Лен-Пуль, Мусульманские династии, пер. В. Бартольда, Москва, 2004, с. 183; К. Босворт, Мусульманские династии, пер. П. Грязневича, Москва, 1971, с. 223.

սուլթան Ուզուն Հասանը (1453-1478 թթ.) վերջ է դնում երկու ցեղային միությունների միջև մղվող գրեթե մեկ դար տևած հակամարտությանը և ստեղծում հսկայածավալ մի տերություն՝ իր տիրույթներին միավորելով նաև Կարա-Կոյունլուների իշխանության տակ եղած տարածքները:

Հայտնի է, որ իր տերությունը ստեղծելուց հետո Ուզուն Հասանը նաև տնտեսական և կրոնական դաշտի կարգավորում է նախաձեռնում, չնայած նրա կազմած օրենսգիրքը՝ Կանուննամեն, մեզ չի հասել: XVI դ. քուրդ պատմիչ Շարաֆ խան Բիդլիսիի խոսքերով. «Հասան Բեկը (Ուզուն Հասանը) ռայաթների հովանավորն էր, նա ձեռնարկեց ռայաթներից հարկեր գանձելու այնպիսի կարգեր, որով մինչ այժմ ուղղորդվում են Ադզարբայջանի, Իրաքի և Ֆարսի իշխողները»: Հասանի Կանուննամեի դրույթները ընկել էին ոչ միայն Իրանի, այլև Օսմանյան կայսրության որոշ շրջանների ֆիսկալ համակարգի հիմքում:

Ուզուն Հասանին զահին գահակալական պայքարից հետո 1488 թ. հաջորդում է նրա որդիներից Յաղուբը, ում օրոք Ակ Կոյունլուների տերությունը կարողանում է դեռևս պահպանել իր հզորությունը:

Սակայն 1490 թ. Ակ Կոյունլու վերջին հզոր սուլթանի մահը սկիզբ է դնում թուրքմենական[9] տերության անկմանը. միջցեղային, միջկլանային արյունալի հակամարտությունները, ակ կոյունլու ազդեցիկ էմիրների ու զորավարների երկպառակտչական պատերազմները, տնտեսական աղետալի դրությունը և հարկային ծանր քաղաքականությունը, կենտրոնական ազդեցիկ, կարող իշխանության բացակայությունը ի վերջո հանգեցրեցին նորաստեղծ տերության կործանմանը: Այսպես, 1490 թ. Յաղուբ փադիշահի մահվանից հետո Ակ Կոյունլուների Մոսիլու ցեղը և իշխանական թևը գլխավորող Սուֆի Խալիլ բեգ Մոսիլուն իշխանությունն արագորեն

[9] Հարկ է նշել, որ կարա կոյունլու, ակ կոյունլու ցեղամիություններում, կամ ավելի վաղ հիշատակված թուրքմենները նույնական չեն այսօրվա Թուրքմենստանի թուրքմենների հետ: Մեր դեպքում խոսքը գնում է օղուզական այն ցեղերի մասին, որոնք հայտնի էին թուրքեման, թուրքոման, թուրքիման ձևերով: Թուրքմենը կամ թուրքեմանը ըստ տարածված ստուգաբանությունների կարող էր նշանակել՝ հավատացյալ, մուսուլման թուրք (թուրք+իման/արաբ. հավատ/), կամ թուրքին նման /թուրք+մանան{դ}/:

վերցնում է իր ձեռքը և 1491 թ. գահ է բարձրացնում Ցաղուբի 9 ամյա որդուն՝ Բայսունղուրին: Ըստ Հակոբ Հիսուսիին վերագրվող ժամանակագրության. «Սովի(Սուֆի) Խալիլն վերցրեց Ցողուբ բեկի որդուն և թագավորեցոյց, և բազումք ի թուզավորական ցեղիցն սպեանեց»: Ակ Կոյունլու իշխող վերնախավի մի մասին՝ ընդդիմությանը, գլխավորում է Ուզուն Հասանի որդիներից Մասիհ Միրզան, և շուտով ապստամբություն է բռնկվում Ղարաբաղում: Ի պատասխան, Սուֆի Խալիլ բեգը, բոլորին, ներառյալ Մասիհ Միրզային, սրի է քաշում: Այս իրադարձությունը հայտնի է դառնում որպես «Ղարաբաղի արյունոտ բաղնիք»՝ փաստացի մեծամասամբ գլխատելով Ակ կոյունլու վերնախավի, և որը կարևոր է գլխատվում է իշխող Բայինդուր կամ Բայանդուր ցեղը: Փրկվում են միայն Ուզուն Հասանի թոռը՝ Ռուստամ բեն Մակսուդը և Ուղուրլու Մուհամմեդի որդին՝ Մահմուդը: Իրաքում Փոռնակ ցեղի առաջնորդ Շահ Ալի բեկը և Մահմադ բեն Ուղուրլու Մուհամմեդը ևս ապստամբություն են բարձրացնում, սակայն Սուֆի Խալիլ բեկը արագ զորաշարժ կատարելով Համադանից հյուսիս գտվող Դարգուզինի ճակատամարտում ջախջախում է Շահ Ալի Փոռնակի և Մահմուդի զորքերը:

Շուտով Սուֆի Խալիլ բեկի դեմ է դուրս գալիս Սուլեյման Բեգ Բիժանօղլին՝ Ակ Կոյունլուների նշանավոր զորահրամանատարը և Ցաղուբի աները, և որը հին թշնամանք ուներ Սուֆի Խալիլ Մոսիլուի հետ: Բիժանօղլուին հաջողվում է նախ պարտության մատնել ու սպանել Սուֆի Խալիլի ազգական Գուլաբի բեկին, ապա 1491 թ. կեսերին Վանի մոտ, և ոչ Ատրպատական/Ադզարբայջանում, ինչպես կարծում է հայտնի պատմաբան Զ. Վուդսը, հաղթանակ տոնել Սուֆի Խալիլի նկատմամբ, որին սպանում է Բիժանօղլուի եղբայրը՝ Բաքր բեգը: Սուլեյման Բիժանօղլուն վերադառնալով Թավրիզ՝ իր խնամակալության ներքո է վերցնում Բայսունղուրի նկատմամբ: Ուզուն Հասանի թոռներից Ահմադ բին Մուհամմեդը գտնվում էր Ստամբուլում, Ռուստամը բանտարկված էր, իսկ մանկահասակ Բայսունղուրի իշխանությունը անվանական էր: Եվ այս պայմաններում՝ դաջար, փոռնակ և բայանդուր ցեղերի քոչվորական ավագանու գլխավորությամբ Ղարաբաղում գլուխ է բարձրացնում մի նոր ապստամբական շարժում, որը առաջնորդում է Կարա Ցուլուք Օսմանից ուղիղ գծով սերող Դանա Խալիլ Իբրահիմը կամ Այբա

Սուլթանը: Ապստամբները շարժվում են Երնջակի բերդի ուղղությամբ, որի պարետ Սիդի Ալի բեգ Փոռնակը անցնում է ապստամբների կողմն ու ազատ արձակում Ռուստամին: Թավրիզի վրա ապստամբների հաղթական զորաշարժից հետո Սուլեյման Բիժանօղլուն փախչում է Դիյարբաքր, որտեղ սպանվում է Դանա խալիլի եղբոր՝ Նուրալի բեգի կողմից, իսկ ինչ վերաբերում է Բայսունղուրին, ապա սա 1492 թ. փախչում է պապու՝ Շիրվանշահ Ֆարրուխյասսար II մոտ, և երկու անգամ անհաջող փորձ է ձեռնարկում ետ բերել իշխանությունը:

Ակ Կոյունլու Ռուստամը իշխել է համեմատաբար երկար, մոտ հինգ ու կես տարի (1492-1497 թթ.): Նա հայտնի էր իր կրոնական անհանդուրժողական քաղաքականությամբ: Նրա օրոք սկիզբ են առնում հալածանքները հայոց եկեղեցու, 1494 թ.ից՝ նաև շիա Սեֆյանների դեմ: Ռուստամի զորքերը Հուսեյն Բեգ Ալի Խանիի գլխավորությամբ ջարդում են ու սրի քաշում Սեֆյանների մեծ մասին: Եվ այս հանգամանքը ևս, մեր համոզմամբ, դառնալու էր ակ-կոյունլուների կործանման պատճառներից մեկը, քանի որ սեֆյանների կոտորածից փրկվել էր ապագա Սեֆյան շահ Իսմայիլը, որին թաքցնում են Լահիջանում, կամ ըստ հայկական աղբյուրների՝ Աղթամարում:

Ռուստամին սպանելուց հետո նրան հաջորդում է Ահմադ Գյովդեն՝ Մեհմեդ Ֆաթիհի և Ուզուն Հասանի թոռը: Այս եռանդուն զահակալը, չնայած իր դեմ առաջացած մեծ դժգոհությանը, փորձում էր փրկել ակ կոյունլուների տերությունը վերահաս քաղաքական ու տնտեսական ճգնաժամից: Ահմադը վերացնում է սոյուրղալի արատավոր համակարգն ու երնույթը և 27-ի հասնող հարկերից թողնում միայն 4-ը՝ *խարաջ, 'ուշր , զաքաթ, խումս* (քրիստոնյաների դեպքում նաև հինգերորդը՝ *ջիզյա*)[10], միայն նրանք, որոնք հենված էին իսլամի ու շարիաթի վրա: Սակայն Ահմադի կենտրոնաձիգ քաղաքականության դեմ ձևավորված ընդդիմությունը գլխավորում է մեզ արդեն հայտնի Այբա սուլթանը, և շուտով Ահմադը դավադրաբար սպանվում է շահելով Ակ-Կոյունլու վերնախավի թշնամանքը և ծաղրանքը. «քանի որ նա կարճահասակ էր՝ կարճ ձեռքերով և ուռ-

---

[10] И. Петрушевский, Внутренная политика Ахмеда Ак-Койунлу, Известия Азербайджанского Филиала Академии Наук СССР, 1942, № 2, стр. 28-37.

քերով, նրան կատակով անվանում էին *ռումի* (այստեղ՝ թուրքական) կաղամբ: «*Ռումի կաղամբին տուլթան կարգեցին, ձմեռ եկավ՝ հողի տակ թաղեցին*». - իր ժամանակի պոետներից մեկին մեջբերում է Շարաֆ խան Բիդլիսին: Ահմադի սպանությանը հաջորդում է գահակալական պայքար Ալվանդ իբն Յուսուֆ իբն Ուզուն Հասանի, Մուրադ իբն Յաղուբի և Ուզուն Հասանի զարմիկի՝ Կասիմ իբն Ջահանգիրի միջև: Արդյունքում Ակ կոյունլուների տերությունը բաժանվում է երեք մասի՝ Դիյարբաքրը անցնում է Կասիմ բեգի իշխանության տակ, Պարսկական Իրաքում և Ֆարսում իշխում էր Մուրադը, իսկ՝ Իրանի արևմտյան մասի, Իրաքի և Հայաստանի վրա՝ Ալվանդը:

Գրականություն

• Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860: Երևան, 1999:

• Шараф-хан Бидлиси, Шараф-наме, пер. Е. Васильевой, Москва, 1976, стр. 130-132.

• Зулалян М., Армения в первой половине XVI в., Москва, 1971.

• A Chronicle of the Early Safawis Being the Aḥsanu't Tawārīkh of Hasan-i-Rūmlū, ed. by C. Sheddon,vol. I, (persian text), Baroda, 1931; vol. II (english translation), trans. by C. Sheddon, Baroda, 1934.

• A Narrative of Italian Travels in Persia, ed. Ch. Grey. London, 1873.

• Abū Bakr Tihrānī, Kitāb-i Diyārbakriya, Ankara, 1993.

• Al-Ahrī, Abū Bakr, Tārīkh-i shaikh Uwais. An important source for the history of Ādharbaijān in the fourteenth century, ed. J.-B. Van Loon,Gravenhage, 1954.

• K'art'lis c'xovreba, ed. S. Qauxč'išvili, t. IV, T'bilisi, Sabčoṭ'a Sak'arṭ'velo, 1973.

• Khunjī, Fadhlullāh ibn Rūzbihān, Persia in A. D. 1478-1490. An abridged translation of ... Tārīkh-i 'Ālam-ārā-yi Amīnī, ed. V. Minorsky, London, 1957.

• Lambton A., Landlord and peasant in Persia, London, 1991.

• Manz B., Power, Politics and Religion in Tīmūrid Iran, Cambridge, 2007.

• Melville, Ch., The Fall of Amir Chupan and the Decline of the Ilkhanate, 1327- 37 (Bloomington, 1999).

○ Mémoire sur Tamerlan et sa cour par un dominicain, en 1403; H. Moranvillé, Bibliothèque de l'école chartes, tome 55.
○ Minorsky M., Minovi M. 1940, Naṣiral-Dīn Ṭūsī on Finance, BSOA S 10/3, 755-789.
○ Minorsky V. A 'Soyūrghāl of Qāsim b. Jahāngīr Aq-Qoyunlu (903/1498), BSOA S 9/4, 1939, pp. 927-960.
○ Minorsky V. The Aq-Qoyunlu and Land Reforms, BSOA S 17/3, 1955, pp. 449-462.
○ Uzunçarşili İ., Anadolu beylikleri ve Akkoyunlu, Karakoyunlu devletleri, Ankara, 2011.
○ Woods J., The Aqquyunlu: Clan, Confederation, Empire, Salt Lake City, 1999.
○ Zafarnāma par Nizāmuddīn Šāmī, par Felix Tauer, t.1, 1937, Praha.
○ B. F. Manz, The Rise and Rule of Tamerlane, p. 17.
○ Michael Shterenshis, Tamerlane and the Jews, p. 38; Christian-Muslim Relations. A Bibliographical History Volume 8. Northern and Eastern Europe (1600-1700).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ ՆԱԽԱԻՍԼԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 7
ԻՍԼԱՄԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 16
ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՕՍԱՅՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ 28
ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ VIII ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ-IX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ 33
ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ 42
ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆ 56
ԱՅՅՈՒԲՅԱՆՆԵՐ 65
ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 74
ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԻԼԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 80
ԲԱՀՐԻՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՐՋԻՆԵՐԻ ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 93
ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԸ XIV ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ - XV ԴԱՐՈՒՄ (ԹԻՄՈՒՐՅԱՆՆԵՐ, ԿԱՐԱ-ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ, ԱԿ ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ) 100

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ (7-15-ՐԴ ԴԱՐԵՐ)

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Ղազարյանի

Ստորագրված է տպագրության 25.05.2020թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16 : Թուղթ՝ օֆսեթ N 1:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

«Տիր» հրատարակչություն
Հասցեն՝ Երևան, 0070, Հ. Քաջազնունու փող., 14 /10
Հեռ.՝ (+374 10) 55-48-84, (55) 16-51-00, (99) 16-51-01
Էլ. փոստ՝ tirpublishinghouse@gmail.com
Կայքէջ՝ www.tirpublishing.com

[1500դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ
FL0633133

شمال

جنوب

غرب

Acc. No. 10586